



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 121 2021

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ (գլխավոր խմբագիր)

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ)

Արթուր Չախոյան ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 09.03.2021թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 5,5 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

| | |
|---|----|
| Գոռ Հովհաննիսյան Յոթ տարածված սխալ քրեական իրավունքի ընդհանուր մասից | 3 |
| Արմինե Աղասյան Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության հակազդման որոշ հարցերի շուրջ | 11 |
| Գևորգ Բարսեղյան Արիեստական բանականության քրեական պատասխանատվություն. տեսական և կիրառական ասպեկտներ | 17 |
| Դավիթ Օհանյան «Գրավառուին վնաս պատճառելը» հանցակազմի հայեցակարգային մոտեցումների հիմնախնդիրները | 26 |
| Հոփսիմե Խաչատրյան Անչափահասների հանցավոր խմբերին պրոֆիլակտիկ հաշվառման վերցնելու որոշ հարցեր | 31 |
| Վիրաբ Վարդանյան Մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքների ինտերպրետացիայի և իրավաընկալման հիմնահարցերը քրեական և վարչական իրավունքում | 36 |

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| Վանինե Հովսեփյան Իրավաբանական պատասխանատվություն հասկացությունը և դրա հատկանիշները | 42 |
| Արման Հովհաննիսյան Իրավունքը հասարակական հարաբերությունների նորմատիվ կարգավորման համակարգում | 47 |
| Левон Арутюнян Система национального права: история и современность | 53 |
| Լիանա Մալխասյան Պետության ծագման և էվոլյուցիոն զարգացման հիմնախնդիրները | 60 |
| Վախթանգ Բաբայան Պետության սոցիալական գործառույթի էությունն ու առանձնահատկությունները | 64 |

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

| | |
|---|----|
| Արտաշես Խալաթյան Խոսքի ազատության հակառակ կողմը. ատելության խոսք և կեղծ լրատվություն | 69 |
|---|----|

ՍԵՂՄԱԳՐԵՐ

| | |
|---|----|
| Սեղմագրեր / Абстракты / Abstracts | 77 |
|---|----|

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

| | |
|--|----|
| «Հ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները | 88 |
|--|----|

ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հազենի համալսարանի Գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, Բեռլինի Տնտեսագիտության և իրավունքի ինստիտուտի Ոստիկանության և անվտանգության կառավարման բաժնի դոցենտ, իրավաբանական գիտությունների դոկտոր

ՅՈՒ ՏԱՐԱԾՎԱԾ ՍԵԱԼ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍԻՑ

«Օրենքը կարդալը հեշտացնում է ճիշտ նորմը գտնելը»:¹ Բայց ՀՀ ՔրՕ Ընդհանուր մասի դեպքում դա այդքան էլ այդպես չէ, որովհետև բազմաթիվ տարրական իրավական սկզբունքներ ՔրՕ-ում կան ընդհանրապես կարգավորված չեն, կան կարգավորված են շատ կցկտուր: Այս հանգամանքն ուսանողներին ու պրակտիկ իրավաբաններին կանգնեցնում է լուրջ մարտահրավերի առաջ. նրանք պետք է ուղղակի անգիր իմանան այս կամ այն հասկացության կամ սկզբունքի սահմանումը: Եվ այդ անգիր սովորած սկզբունքների կիրառումն ստեղծում է բազմաթիվ «թակարդներ», որոնց մեջ ընկնում են իրավաբանները: Բայց այդ սխալներից կարելի է խուսափել: Սույն հոդվածը «նախազգուշացնում է» քրեական իրավունքի ընդհանուր մասի հետ կապված յոթ «դասական» սխալների մասին և ցույց տալիս դրանցից խուսափելու ուղիները:

Ա. Այլընտրանքային պատճառականություն, թե՛ պատճառականության մերժում in dubio pro reo

Խնդիր: Ա-ն և Բ-ն սպանելու դիտավորությամբ միմյանցից անկախ անմիջականորեն իրար հետևից կրակում են Օ-ի վրա: Գնդակները մեկը մյուսի հետևից խոցում են Օ-ի սիրտը: Հնարավոր չի լինում պարզել, թե որ կրակոցն

է առաջինն արձակվել ու այդպիսով եղել մահացու:²

Տիպիկ սխալ: Շատերը կարծում են, թե այստեղ առկա է այլընտրանքային պատճառականություն: Այդ շփոթության պատճառով նրանք երկու կրակոցն էլ պատճառական են համարում Օ-ի մահվան համար:

Լուծումը: Օ-ի սպանության համար Ա-ի ու Բ-ի պատասխանատվության շրջանակում բարդություն է ներկայացնում միայն պատճառականությունը: Արարքի և առաջացած հետևանքի միջև այս բնական կապը ժամանակակից քրեական իրավունքում որոշվում է այսպես կոչված *Conditio-sine-qua-non*-բանաձևով (կոչվում է նաև պայմանի կամ համարժեքության տեսություն):³ Ըստ այս տեսության՝ **պատճառական է ցանկացած արարք, առանց որի՝ վտանգավոր հետևանքն իր կոնկրետ տեսքով չէր առաջանա:**⁴ Սակայն հայտնի է, որ *Conditio-sine-qua-non*-բանաձևը որոշակի իրավիճակներում չի կարողանում պատասխանել պատճառականության հարցին:⁵ Այդպիսի իրավիճակներից մեկն այլընտրանքային պատճառականության դեպքն է: Դա առկա է երբ միմյանցից անկախ կերպով գործի դրված բազմաթիվ *միատեսակ* պայմանները վրա են հասնում *միաժամանակ*: Ընդ որում՝ այդ պայմաններից յուրաքանչյուրը, *առանձին վերցված, բավարար կլիներ* առա-

¹ Այս խոսքերը վերագրվում են Գերմանիայի Դաշնային աշխատանքային դատարանի առաջին նախագահ Հանս Կարլ Նիփերդային (1895–1968):
² Տե՛ս Wessels/Beulke/Satzger, Strafrecht Allgemeiner Teil, 49. Aufl. 2019, Rn. 248; Rengier, Strafrecht Allgemeiner Teil, 11. Aufl. 2019, § 13 Rn. 31; Kindhäuser/Zimmermann, Strafrecht Allgemeiner Teil, 9. Aufl. 2019, § 10 Rn. 30, 36.
³ Այդ մասին տե՛ս Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 13 Rn. 3ff.; Kühl JA 2009, 321 (325); Satzger JURA 2014, 186 ff.
⁴ Տե՛ս դեռևս Կայզերական Գերմանիայի Գերագույն դատարանի որոշումները RGSt 44, 137 (139); 77, 17 (18); ինչպես նաև՝ այժմյան Գերմանիայի Գերագույն դատարանի BGHSt 1, 332 (333) որոշումը:
⁵ Այդ իրավիճակների մասին տե՛ս Wessels/Beulke/Satzger StrafR AT, 49. Aufl. 2019, Rn. 231 ff., 238 ff.; Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 13 Rn. 14 ff. Համարժեքության տեսության այդ թերությանը վերաբերող «Օրինաչափ պայմանի տեսության» մասին տե՛ս այլնի թվում Roxin, Strafrecht Allgemeiner Teil, Bd. I, 4. Aufl. 2006, § 11 Rn. 15:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 121 2021

ջացնելու վտանգավոր հետևանքը նույն տեսքով:⁶ Դրա դասագրքային օրինակը հետևյալ դեպքն է («Թույն խառնողի խնդիր»): Գ-ն ու Դ-ն, առանց միմյանց մասին իմանալու, յուրաքանչյուրն իր հերթին նույն թույնի մահացու չափաբաժին է լցնում Ց-ի ըմպելիքի մեջ:⁷ Գ-ի ու Դ-ի պատասխանատվության շրջանակում Conditio-sine-qua-non-բանաձևը հետևողականորեն կիրառելիս կատարվի, որ, առանց նրանցից յուրաքանչյուրի լցրած թույնի՝ Ց-ի մահը թունավորումից, միևնույն է, վրա կհասներ (Գ-ի դեպքում՝ Դ-ի լցրած թույնից, և հակառակը): Դրա հետևանքն այն կլինի, որ երկուսի արարքի պատճառականությունն էլ պետք է մերժել ու նրանց պատասխանատվության ենթարկել միայն սպանության փորձի համար:⁸ Բայց, քանի որ գերիշխող կարծիքը հարցի նման լուծումն անբավարար է համարում, ուստի նման իրավիճակների համար ձևափոխում է Conditio-sine-qua-non-բանաձևը՝ բազմաթիվ արարքներից յուրաքանչյուրը պատճառական է, եթե վտանգավոր հետևանքն իր նույն տեսքով կառաջանար դրանց թեև այլընտրանքային, բայց ոչ կուտակային բացակայության դեպքում:⁹ Շատ իրավաբաններ սխալմամբ կարծում են, թե Օ-ի վրա Ա-ի ու Բ-ի կրակոցի դեպքում նույնպես առկա է այլընտրանքային պատճառականության այս հայտնի պրոբլեմը, և առանց երկար մտածելու կիրառում են ձևափոխված Conditio-sine-qua-non-բանաձևը: Որպես արդյունք՝ նրանք երկու կրակոցն էլ պատճառական են համարում Օ-ի մահվան համար: Բայց դա սխալ է, որովհետև երկու գնդակն Օ-ին խոցել են թեև նույն կերպ, բայց ոչ թե միաժամանակ, այլ՝ մեկը մյուսից կարճ ժամանակ հետո:¹⁰ Այստեղ հիմնական խնդիրն ավելի շուտ այն է, որ թեև երկու կրակոցից Օ-ի մահը պատճառական կերպով առաջացրել է միայն առա-

ջինը նրան խոցածը, բայց այլևս հնարավոր չէ պարզել, թե այդ մահացու կրակոցն ո՞վ է արձակել՝ Ա-ն, թե՞ Բ-ն: Այս իրավիճակում պետք է կիրառել «նորմալ» Conditio-sine-qua-non-բանաձևը, բայց *in dubio pro reo* սկզբունքի պատճառով երկու հանցագործի պատասխանատվության հարցը լուծելիս պետք է ելնել նրանցից յուրաքանչյուրի համար ավելի ձեռնտու այն մոտեցումից, որ յուրաքանչյուրի արձակած գնդակը զոհին դիպել է միայն այն ժամանակ, երբ նա արդեն մահացած է եղել մյուսի արձակած գնդակից:¹¹ Ուստի Ա-ն ու Բ-ն կարող են պատժվել միայն սպանության փորձի համար:

Հիշիր: Այլընտրանքային պատճառականությունն առկա է միայն այն արարքների դեպքում, որոնք վտանգավոր հետևանքն առաջացնում են միաժամանակ ու միատեսակ կերպով: Հակառակը, եթե երկու արարք հետևանքն առաջացնում են թեև միատեսակ կերպով, բայց ոչ միաժամանակ, ապա, եթե այլևս հնարավոր չէ պարզել, թե ո՞ր արարքն է առաջինը ներգործել, երկու արարքի առնչությամբ էլ պետք է մերժել պատճառականությունը *in dubio pro reo*:

Բ. «Խղճահարությունից կատարված սպանության» դեպքում նաև առաջին հանցագործի պատասխանատվությունն ավարտված հանցագործության համար

Խնդիր: Տ-ն սպանության դիտավորությամբ մի քանի անգամ դանակով հարվածում է Օ-ի դեմքին, և երբ նրան սխալմամբ մահացած է համարում, փախչում է: Ավելի ուշ Տ-ն իր ընկերուհի Ֆ-ին ուղարկում է դեպքի վայր, որ նա մաքրի արյան հետքերը: Այնտեղ Ֆ-ն տեսնում է դանդաղ մահացող խոխոացող Օ-ին և խղճահարությունից սպանում նրան՝ շշով մի քանի անգամ նրա գլխին հարվածելու միջոցով:¹²

⁶ Այդ մասին տե՛ս Wessels/Beulke/Satzger StrafR AT, 49. Aufl. 2019, Rn. 232; Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 13 Rn. 26 ff.; Satzger JURA 2014, 186 (190 f.).

⁷ Տե՛ս Wessels/Beulke/Satzger StrafR AT, 49. Aufl. 2019, Rn. 232; Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 13 Rn. 27; Kudlich JA 2010, 681 (683); Satzger JURA 2014, 186 (190).

⁸ Տե՛ս Wessels/Beulke/Satzger StrafR AT, 49. Aufl. 2019, Rn. 232; Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 13 Rn. 28.

⁹ Տե՛ս BGH NJW 1993, 1723; Wessels/Beulke/Satzger StrafR AT, 49. Aufl. 2019, Rn. 232; Satzger JURA 2014, 186 (190); Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 13 Rn. 28.

¹⁰ Տե՛ս Satzger JURA 2014, 186 (191); Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 13 Rn. 31; Kindhäuser/Zimmermann StrafR AT, 9. Aufl. 2019, § 10 Rn. 36.

¹¹ Տե՛ս Wessels/Beulke/Satzger StrafR AT, 49. Aufl. 2019, Rn. 248; Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 13 Rn. 31.

¹² Խնդիրը վերցված է Գերմանիայի Գերագույն դատարանի մի որոշումից՝ BGH NStZ 2001, 29:

Տիպիկ սխալը: Շատ իրավաբաններ միայն Ֆ-ի արարքն են որակում իբրև ավարտված դիտավորյալ սպանություն, իսկ Տ-ի արարքը համարում են սպանության փորձ:

Լուծում: Ֆ-ն անվիճելիորեն կատարել է ավարտված սպանություն, քանի որ նրա հարվածները եղել են Օ-ի մահվան ամենավերջին անմիջական պատճառը: Բայց կոպիտ սխալ կլիներ հապշտապ ժխտել Տ-ի պատասխանատվությունն ավարտված սպանության համար՝ մեկ այլ անձի (Ֆ-ի) միջամտության հիմքով:¹³ Տ-ի արարքի պատճառականությունը շատ հանգիստ կարելի է հաստատել *Conditio-sine-qua-non*-բանաձևով: Այսպես՝ առանց Տ-ի սկզբնական արարքի (դանակով հարվածների)՝ վրա չէր հասնի Օ-ի մահն *իր կոնկրետ տեսքով*, այն է՝ Ֆ-ի մահացու հարվածներից: Հետևաբար՝ սկզբնական պայմանը շարունակել է գործել առաջացած հետևանքում (**շարունակվող պատճառականություն**):¹⁴ Ռեգրեսի արգելքի մասին հին մոտեցումը, որը ժխտում էր պատճառականությունը մեկ այլ անձի դիտավորյալ միջամտության դեպքում, այսօրվա *Conditio-sine-qua-non*-բանաձևի հետ այլևս համատեղելի չէ,¹⁵ որովհետև տարբեր անձանց շատ արարքներ կարող են պատճառական լինել միևնույն հետևանքի համար: Պատճառականությունը չի վերանում զուտ այն պատճառով, որ մեկ ուրիշը նույնպես ինչ-որ պատճառ է գործի դրել (չկա ռեգրեսի արգելք): Օ-ի մահը նաև օբյեկտիվորեն մեղսագրելի է Տ-ին: Դանակով Օ-ի դեմքին հարվածելու միջոցով Տ-ն ստեղծել է հակաիրավական մահվան վտանգ Օ-ի կյանքի համար,¹⁶ և այդ վտանգն իրականացել է կոնկրետ մահացու հետևանքում: Օբյեկտիվ մեղսագրման կապը չի ընդհատվել Ֆ-ի

դիտավորյալ ու իր հերթին պատճառական արարքով:¹⁷ Ավարտված սպանության համար որոշիչ է միայն այն հարցը, թե արդյոք Օ-ի մահը դեռ կարելի է համարել Տ-ի ձեռքի գործը:¹⁸ Դա այդպես է, եթե առաջացած հետևանքում իրականանում է ոչ թե մի նոր, այլ՝ սկզբնական վտանգը, որովհետև երրորդ անձի (Ֆ-ի) արարքը սովորաբար կախված է այդ սկզբնական վտանգից:¹⁹ Արարքի մեղսագրումը պետք է մերժել միայն այն դեպքում, երբ երրորդ անձի (Ֆ-ի) արարքն այնքան հեռու է ընդհանուր կենսափորձից, որ ողջամտորեն այլևս ակնկալել չի կարելի:²⁰ Մեր խնդրում Ֆ-ն՝ իբրև երկրորդ հանցագործ, ենթարկվում է Տ-ի ստեղծած սկզբնական վտանգին, քանի որ նա ցանկանում էր սոսկ վերջ տալ Օ-ի մահացու տառապանքներին, որոնք ստեղծել էր Տ-ն: Նման արձագանքը հեռու չէ մարդկային ընդհանուր կենսափորձից:²¹ Հետևաբար՝ ն Տ-ն, ն Ֆ-ն կատարել են ավարտված սպանություն:

Հիշիր: Մեկ այլ անձի ինքնուրույն միջամտությունն սկզբունքորեն չի խանգարում սկզբնական հանցագործին պատժել ավարտված հանցագործության համար, քանի դեռ նա իր սկզբնական արարքով պատճառական ու օբյեկտիվորեն մեղսագրելի կերպով առաջացնում է հետևանքը:

Գ. Հանցանք կատարելուն անմիջականորեն ուղղված գործողության (ՀՀ ՔՐՕ 34-րդ հոդ.) հապճեպ մերժումը «դռան առաջ» կատարված հանցագործությունների դեպքում

Խնդիր: Դանակով զինված Տ-ն սեղմում է Օ-ի դռան զանգը: Ըստ իր ծրագրի՝ նա ուզում է անակնկալի բերել Օ-ին և անմիջապես դուռը բացվելուց հետո դանակահարել նրան: Բայց դուռը բացող չի լինում: Օ-ն տանը չէ:²²

¹³ Օբյեկտիվ մեղսագրման կապն ընդհատող այս հանգամանքի մասին տես Wessels/Beulke/Satzger StrafR AT, 49. Aufl. 2019, Rn. 286 f.

¹⁴ Kaspar, Strafrecht Allgemeiner Teil, 3. Aufl. 2020, § 5 Rn. 73; Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 13 Rn. 24.

¹⁵ Roxin StrafR AT I, 4. Aufl. 2006, § 13 Rn. 28; Schönke/Schröder/Eisele, StGB, 30. Aufl. 2019, StGB Vor § 13 Rn. 77.

¹⁶ Սահմանումը տես Fischer, StGB, 66. Aufl. 2019, StGB Vor § 13 Rn. 25; Lackner/Kühl/Heger, StGB, 29. Aufl. 2018, StGB Vor § 13 Rn. 14.

¹⁷ Kühl, Strafrecht Allgemeiner Teil, 8. Aufl. 2017, § 4 Rn. 68; Satzger/Schluckebier/Widmaier/Kudlich, StGB, 4. Aufl. 2019, StGB Vor § 13 Rn. 64; aA teilw. NK-StGB/Puppe, Nomos Kommentar StGB, 5. Aufl. 2017, Vor § 13 Rn. 167 ff.

¹⁸ Kaspar StrafR AT, 3. Aufl. 2020, § 5 Rn. 109; Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 13 Rn. 88.

¹⁹ Fahl JuS 2012, 1104 (1110); Kühl StrafR AT, 8. Aufl. 2017, § 4 Rn. 68.

²⁰ Käbner/Seibert JuS 2006, 810 (814); Wessels/Beulke/Satzger StrafR AT, 49. Aufl. 2019, Rn. 288.

²¹ Fahl JuS 2012, 1104 (1110); Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 13 Rn. 89.

²² Խնդիրն ըստ BGH NStZ 2012, 85 (85):

Տիպիկ սխալը: Իրավաբանները հապճեպ մերժում են հանցափորձի համար պատասխանատվությունը, որովհետև չգիտեն, որ հանցանք կատարելուն անմիջականորեն ուղղված գործողության համար (ՀՀ ՔրՕ 34-րդ հոդ.) որոշիչ է հանցագործի պատկերացումը, այլ ոչ թե՛ զուտ օբյեկտիվ չափանիշները:

Լուծումը: Տ-ն ենթակա է պատասխանատվության սպանության փորձի համար՝ ըստ ՀՀ ՔրՕ 104-րդ հոդ. 1-ին մասի և 34-րդ հոդվածի: Դրան զանգը սեղմելու պահին Տ-ն ուներ Օ-ին սպանելու դիտավորություն, և զանգը սեղմելն սպանությունը կատարելուն անմիջականորեն ուղղված գործողություն է ՀՀ ՔրՕ 34-րդ հոդվածի իմաստով: Նման հետևությանը չի խանգարում այն, որ Օ-ն դեռ պիտի բացեր դուռը, որպեսզի Տ-ն սկսեր իր արարքը: Ըստ **խառը սուբյեկտիվ-օբյեկտիվ տեսության՝** հանցանք կատարելուն անմիջականորեն ուղղված գործողության համար որոշիչ է, որ հանցագործը հատում է «Սկսեցի՞նք»-ի շեմը և ձեռնարկում է գործողություններ, որոնք, իր պատկերացմամբ՝ դեպքերի անխոչընդոտ զարգացման պարագայում առանց էական միջանկյալ քայլերի անհրաժեշտության կհանգեցնեն հանցանքի կատարմանը կամ անմիջական տարածական ու ժամանակային կապի մեջ են հանցանքի հետ:²³ Երբ Տ-ն սեղմում էր Օ-ի դռան զանգը, նրա պատկերացմամբ՝ ոչ մի էական միջանկյալ քայլ այլևս անհրաժեշտ չէր Օ-ի մահն անմիջականորեն առաջացնելու համար: Ըստ Տ-ի ծրագրի՝ Օ-ն պիտի բացեր դուռը և անմիջապես դառնար անակնկալ հարձակման զոհ: Հետևաբար՝ Տ-ի կարծիքով՝ Օ-ի կյանքն անմիջականորեն վտանգված էր, և ինքը հատել էր «Սկսեցի՞նք»-ի շեմը:²⁴ Դա այդպես չէ, անշուշտ, դարանակալման դեպքում:²⁵ Թաքնված հանցագործը հենց վստահ չէ, թե զոհը հաստատ կհայտնվի նախատեսված վայրում: Հետևաբար՝ առկա չէ անհրաժեշտ տարածական ու ժամանակա-

յին կապը, ինչպես նաև՝ զոհին սպառնացող անմիջական վտանգը:²⁶

Հիշիր: Հանցանք կատարելուն անմիջականորեն ուղղված գործողության համար որոշիչ է հանցագործի պատկերացումը: Որ հանցանքի հաջողության համար օբյեկտիվորեն դեռ անհրաժեշտ է մեկ այլ անձի գործողությունը՝ հանցափորձի համար խոչընդոտ չէ:

Դ. Հանցափորձի ու հանցագործությունից կամովին հրաժարվելու հնարավորությունը չստուգելը օբյեկտիվ մեղսագրման բացակայության դեպքում

Խնդիր: Տ-ն սպանելու դիտավորությամբ կրակում է Օ-ի վրա: Բայց Օ-ն միայն ծանր վիրավորվում է: Տ-ին խիղճը տանջում է, և նա միանգամից շտապ օգնություն է կանչում Օ-ի կյանքը փրկելու համար: Օ-ին պատգարակով տեղափոխելիս սանիտար Ս-ն սրտի կաթված է ստանում ու այդ պատճառով ձեռքից բաց է թողնում պատգարակը: Ցած ընկնելուց Օ-ի վիզը կտրվում է, և նա մահանում է:

Տիպիկ սխալը: Շատ իրավաբաններ չեն նկատում, որ այստեղ առկա է միայն սպանության փորձ, քանի որ նրանք հանցագործությունն ավարտին չհասցնելը սխալմամբ հավասարեցնում են վտանգավոր հետևանքի վրա չհասնելուն, բայց դրանք տարբեր բաներ են: Իսկ եթե նրանք հասկանում են, որ առկա է հանցափորձ, ապա, որպես կանոն՝ ժխտում են հանցագործությունից կամովին հրաժարումը:

Լուծումը: Տ-ն ընդամենը կատարել է սպանության փորձ: Ավարտված սպանության համար պատասխանատվությունը պետք է մերժել, որովհետև հանցագործության օբյեկտիվ փաստակազմն ամբողջովին առկա չէ:²⁷ Թեև հետևանքը՝ Օ-ի մահը, վրա է հասել սկզբնական ծրագրի համաձայն, և կրակոցը նույնպես պատճառական է եղել հետևանքի համար, քանի որ, առանց դրա՝ Օ-ին մահվան ելքով տեղափոխելու կարիք չէր լինի, բայց բացակայում է փաստակազմի չգրված հատկանիշը՝ օբյեկտիվ մեղսագրումը:²⁸

²³ BGHSt 26, 201 (203) = NJW 1976, 58; BGH NSTz 1997, 83; JR 2000, 293 (294); StV 2007, 187.

²⁴ Sեն Wessels/Beulke/Satzger StrafR AT, 49. Aufl. 2019, Rn. 952.

²⁵ Այդ մասին տես Wessels/Beulke/Satzger StrafR AT, 49. Aufl. 2019, Rn. 953.

²⁶ BGH StV 1989, 526; Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 34 Rn. 37 f.

²⁷ Zu diesem Erfordernis Wessels/Beulke/Satzger StrafR AT, 49. Aufl. 2019, Rn. 938; Kaspar StrafR AT, 3. Aufl. 2020, § 8 Rn. 11.

²⁸ Հանցագործության օբյեկտիվ փաստակազմում օբյեկտիվ մեղսագրման դերի մասին տես Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 13 Rn. 38 ff.

Այստեղ կարևոր դեր է խաղում «ոչ սովորական պատճառական ընթացքը»: Հետևանքի մեղսագրումը հանցագործին բացառվում է, եթե կոնկրետ հետևանքի առաջացումը դեպքերի ոչ սովորական զարգացման պատճառով, ըստ ընդհանուր կենսափորձի, այլևս չի կարող վերագրվել հանցագործին:²⁹ Դա այդպես է, երբ հանցագործի փոխարեն ոչ ոք չէր կարողանա կանխատեսել հետևանքի առաջացումը: Մեր խնդրում հենց այդպես է:³⁰ Սակայն սխալ կլինի այստեղ դադարեցնել հանցանքի ստուգումը: Հակառակը՝ պետք է ստուգել հանցափորձի կատարումը:³¹ Սկզբում պետք է կարճ արձանագրել, որ հանցանքն ավարտին չի հասել օբյեկտիվ մեղսագրելիության բացակայության պատճառով:³² Այնուհետև պետք է ստուգել անձի դիտավորությունը, հանցանք կատարելուն անմիջականորեն ուղղված գործողությունը, ինչպես նաև՝ արարքի հակաիրավականությունն ու անձի մեղքը:

Իրավաբանները հաճախ սխալ են թույլ տալիս նաև հանցագործությունից կամովին հրաժարվելու հարցում: Նրանք հապճեպորեն մերժում են հանցագործությունից կամովին հրաժարումը, քանի որ S-ն չի կանխել հանցանքի ավարտին հասնելը. չէ՞ որ O-ն, ի վերջո՝ մահացել է: Բայց անարդար կլիներ հանցագործին զրկել պատասխանատվությունից ազատվելու հնարավորությունից այն դեպքերում, երբ մեկ երրորդն է (U-ն) նախապես այլ կերպ առաջացնում հետևանքն ու դրանով խափանում հանցագործի ձեռնարկած փրկարարական գործողությունները:³³ Հետևաբար՝ S-ն անմիջապես շտապ օգնություն կանչելու միջոցով կամովին հրաժարվել է հանցագործությունից³⁴ ու ենթակա չէ պատասխանատվության (ՀՀ ՔրՕ 36-րդ հոդ. 2-րդ մաս):

Հիշիր: Եթե բացակայում է հետևանքի օբյեկտիվ մեղսագրումը, ապա ավարտված հան-

ցագործությունը մերժելուց հետո պետք է ստուգել հանցափորձը: Հանցափորձի ստուգման շրջանակում մեղքից հետո պետք է ստուգել հանցագործությունից կամովին հրաժարումը՝ ըստ ՀՀ ՔրՕ 36-րդ հոդ. 1-ին մասի:

Ե. Անձը չունի երաշխավորի կարգավիճակ, եթե նրա սկզբնական արարքն արդարացված է անհրաժեշտ պաշտպանությամբ

Խնդիր: S-ն առանց որևէ հիմքի հարձակվում է Ա-ի վրա: Իրեն պաշտպանելու համար Ա-ն բռունցքով հարվածում է S-ի դեմքին ու փախչում: S-ն անհաջող կերպով ընկնում է գետնին ու մահանում: Նրան հնարավոր կլիներ փրկել, եթե Ա-ն շտապ օգնություն կանչեր:

Տիպիկ սխալը: Որոշ իրավաբաններ հաստատում են Ա-ի երաշխավորի կարգավիճակը և նրա պատասխանատվությունն անգործությամբ կատարված սպանության համար՝ մտածելով, թե Ա-ն S-ին թողել է անօգնական վիճակում, որի մեջ ինքն է նրան դրել:

Լուծումը: ՀՀ ՔրՕ 9-րդ հոդ. 1-ին մասը բառացիորեն ասում է, որ անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել նաև ոչինչ չանելու (անգործության) պատճառով: Բայց, քանի որ ոչինչ չանելու համար մարդուն պատժելն ինքնին հասկանալի չէ, ուստի դրա համար պետք է լուրջ պատճառ: Եվ այդ պատճառը կոնկրետ իրավիճակում նրա գործելու պարտականությունն է: Այդ պարտականությունը կարող է բխել օրենքից, պայմանագրից, առանձնահատուկ վստահության հարաբերությունից, նաև՝ անձի սկզբնական արարքից, երբ նա ուրիշին իր ոչ իրավաչափ գործողություններով վտանգի մեջ է գցում: Այս վերջին դեպքում անձն ստանձնում է երաշխավորի կարգավիճակ, որը նրա համար ստեղծում է գործելու պարտականություն՝ օգնելու վտանգի մեջ գտնվողին:³⁵ Չօգնելու դեպքում, եթե, օրինակ՝

²⁹ BGHSt 3, 62 (64); OLG Stuttgart JZ 1980, 618 (619 f.).

³⁰ Wessels/Beulke/Satzger StrafR AT, 49. Aufl. 2019, Rn. 300.

³¹ Թե ինչպես պետք է ստուգել հանցափորձը՝ տես Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 13 Rn. 1 f.

³² Անշուշտ, պետք է նաև հիշատակել, որ հանցափորձը պատժելի է ըստ ՀՀ ՔրՕ 34-րդ հոդվածի:

³³ Noltensmeier/Henn JA 2010, 269 (270); Schönke/Schröder/Eser/Bosch, 30. Aufl. 2019, StGB § 34 Rn. 70.

³⁴ Կամավորության մասին տես Fischer, 66. Aufl. 2019, StGB § 24 Rn. 18ff., 35; Lackner/Kühl/Heger, 29. Aufl. 2018, StGB § 24 Rn. 16ff.

³⁵ Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 50 Rn. 70; Lackner/Kühl/Heger, 29. Aufl. 2018, StGB § 13 Rn. 13; Fischer, 66. Aufl. 2019, StGB § 13 Rn. 52; zu Ausnahmen von einem Pflichtwidrigkeitserfordernis Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 50 Rn. 91ff.; zu den verschiedenen Theorien einer Ingerenz-Garantenstellung Hillenkamp/Cornelius, 32 Probleme aus dem Strafrecht AT, 15. Aufl. 2017, 247ff. Rn. 2.

տուժողը մահանա, նա պատասխանատվության կենթարկվի ուղղակի սպանության համար՝ ըստ ՀՀ ՔրՕ 104-րդ հոդվածի (**ոչ իսկական** անգործությամբ կատարված հանցագործություն), այլ ոչ թե ՀՀ ՔրՕ 128-րդ հոդվածով (**իսկական** անգործությամբ կատարված հանցագործություն): Մեր խնդրում Ա-ն ենթակա չէ պատասխանատվության անգործությամբ կատարված *սպանության* համար, քանի որ նա նկարագրված իրավիճակում չունի երաշխավորի կարգավիճակ: Նման կարգավիճակի նախապայմանը, ինչպես նշվեց, սկզբնական **ոչ իրավաչափ** արարքն է: Բայց Ա-ի արարքն արդարացված էր անհրաժեշտ պաշտպանությամբ (ՀՀ ՔրՕ 42-րդ հոդ. 1-ին մաս): Գերիշխող կարծիքը նման դեպքերում մերժում է երաշխավորի կարգավիճակը,³⁶ քանի որ հակառակ դեպքում հակասություն կառաջանա անհրաժեշտ պաշտպանության իրավունքի հետ: Չէ որ հարձակվողն ինքն է իր հակաիրավական արարքով ստեղծում հակահարձակման վտանգ: Բացի այդ՝ երաշխավորի կարգավիճակի դեպքում հարձակվողն ավելի պաշտպանված կլինի, քան առանց մեղքի անօգնական վիճակում հայտնված մեկ ուրիշը:³⁷ Այնուհետև անգործություն դրսևորող մի երրորդ անձ ավելի արտոնյալ վիճակում կլինի հարձակվողի առնչությամբ, քան պաշտպանվողը, քանի որ երրորդ անձը ենթակա է պատասխանատվության միայն ՀՀ ՔրՕ 128-րդ հոդվածով: Այդ պատճառով պաշտպանվողը նույնպես պիտի նման իրավիճակում ունենա միայն օգնելու ընդհանուր պարտականություն³⁸ ըստ ՀՀ ՔրՕ 128-րդ հոդվածի:

Հիշիր: Պետք է մերժել երաշխավորի կարգավիճակն անհրաժեշտ պաշտպանությամբ արդարացված սկզբնական արարքի դեպքում: Բայց անձը շարունակում է կրել օգնելու ընդ-

հանուր պարտականություն՝ ըստ ՀՀ ՔրՕ 128-րդ հոդվածի:

2. Չի կարելի հապճեպորեն ժխտել տուժողի համաձայնությունը, որն արդարացնում է հանցավորի արարքը

Խնդիր: 16-ամյա աղջնակ Մ-ն որոշում է քթին փիրսինգ անել: Փիրսինգ անող Տ-ի մոտ նա լրացնում է մի ձևաթուղթ, որում նշում է, թե չափահաս է, համաձայն է փիրսինգին, և ստորագրում է: Երբ Մ-ն վերադառնում է տուն, նրա ծնողները սարսափում են ու ցանկանում են իմանալ, թե ո՞վ է իրենց դստերն այդպես «այլանդակել»: Նրանց կարծիքով՝ այդ արարքը պիտի որ պատժելի լինի:³⁹

Տիպիկ սխալը: Տուժողի համաձայնությունն ստուգելիս կա երկու սխալ թույլ տալու վտանգ: Շատերը կարծում են, թե անձի արարքն արդարացնող այս հիմքն իրականում ոչ մի նշանակություն չունի, քանի որ ամրագրված չէ ՔրՕ-ում, այնինչ առկա է սովորության իրավունքում:⁴⁰ Բացի այդ՝ Մ-ի անչափահասությունը դեռ չի նշանակում, թե նա ունակ չէ տալու իր համաձայնությունը:

Լուծում: Տ-ն Մ-ին փիրսինգ անելով՝ նրան պատճառել է մարմնական վնասվածք:⁴¹ Առաջին սխալն այն կլինի, որ արարքի հակաիրավականությունն ստուգելիս անտեսվի տուժողի համաձայնությունը՝ իբրև Տ-ի արարքն արդարացնող հիմք, այն պատճառաբանությամբ, թե նման հիմք նախատեսված չէ ՔրՕ-ում: Որովհետև տուժողի համաձայնությունն արարքն արդարացնող չգրված և միայն սովորության իրավունքում առկա հիմք է:⁴² Բացի այդ՝ Մ-ի սահմանափակ գործունակությունը (ՀՀ ՔաղՕ 30-րդ հոդ.) դեռ բավարար հիմք չէ պարտադիր կերպով ժխտելու իրեն վնասող արարքներին համաձայնություն տալու նրա ունակությունը:

³⁶ Wessels/Beulke/Satzger StrafR AT, 49. Aufl. 2019, Rn. 1198; Roxin StrafR AT II, 2003, § 32 Rn. 181ff.; Kühl StrafR AT, 8. Aufl. 2017, § 18 Rn. 94f.

³⁷ Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 50 Rn. 77.

³⁸ Fischer, 66. Aufl. 2019, StGB § 13 Rn. 54.

³⁹ Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 23 Rn. 1.

⁴⁰ Կա նաև կարծիք, որ տուժողի համաձայնությունը բացառում է փաստակազմը, այլ ոչ թե հակաիրավականությունը: Տե՛ս Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 23 Rn. 2. Im Sinne der aA etwa Roxin StrafR AT I, 4. Aufl. 2006, § 13 Rn. 12ff., § 18 Rn. 3.

⁴¹ Փիրսինգը զուտ կոսմետիկ բնույթի է ու այդ պատճառով բժշկական միջամտություն չէ: Տե՛ս Lackner/Kühl/Kühl, 29. Aufl. 2018, StGB § 223 Rn. 10.

⁴² Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 23 Rn. 1; MüKoStGB/Hardtung, Münchener Kommentar zum StGB, 3. Aufl. 2017, § 228 Rn. 1.

նը, որովհետև իբր թե դրա համար անհրաժեշտ է նրա ծնողների համաձայնությունը: Քրեական իրավունքում անվիճելիորեն համաձայնություն տալու ունակ է նա, ով իր մտավոր ու բարոյական հասունության հիման վրա կարող է հասկանալ ու պատշաճ գնահատել միջամտության նշանակությունն ու ծավալը, ընդ որում՝ ինչքան ավելի ծանրակշիռ է միջամտությունը, և ինչքան ավելի դժվար է կանխատեսել դրա հետևանքները, այնքան ավելի խիստ են պահանջները:⁴³ Փիրսինգի դեպքում, որը միայն կարճատև ցավ է պատճառում, և որի առաջացրած վնասվածքը լիովին բուժվում է, պետք է ելնել 16-ամյա Մ-ի՝ համաձայնություն տալու ունակությունից:⁴⁴ Տ-ն ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Հիշիր: Տուժողի համաձայնությունը՝ իբրև արդարացնող հիմք, հիմնված է միայն սովորության իրավունքի վրա: Քրեական իրավունքում համաձայնություն տալու ունակությունը չի գնահատվում քաղաքացիաիրավական գործունակության հիման վրա, ոչ էլ դրա համար կան հստակ տարիքային սահմաններ:

Է. Չի կարելի ժխտել անհրաժեշտ պաշտպանության իրավունքը (ՀՀ ՔրՕ 42-րդ հոդ.) անհրաժեշտ պաշտպանության այն սահրանքի դեպքում, որը կատարվել է անուղղակի դիտավորությամբ

Խնդիր: Ուղևոր Տ-ն ուզում է հանգիստ երթևեկել գնացքում և այդ պատճառով փորձում է բազմաթիվ հակաիրավական վիրավորանքների միջոցով իր վագոնից վննդել բարձր երաժշտություն լսող Օ-ին: Ինչպես որ Տ-ն գիտակցում էր ու վերջին հաշվով համաձայն էր՝ Օ-ն վերին աստիճանի կատաղում է ու բռնում Տ-ի կոկորդից: Քանի որ Օ-ից խուսափելու փորձերն ու օգնության կանչերն ապարդյուն են լինում, Տ-ն գրպանի դանակով հարվածում է Օ-ի փորին: Վերջինս բաց է թողնում Տ-ին:⁴⁵

Տիպիկ սխալը: Անուղղակի դիտավորությամբ հրահրված ոտնձգության պատճառով շատերը հապճեպորեն մերժում են Տ-ի արարքի արդարացուն անհրաժեշտ պաշտպանությամբ:

Լուծումը: Տ-ի արարքը (դանակահարությունը) արդարացված է անհրաժեշտ պաշտպանությամբ: Անվիճելիորեն, Օ-ի արարքն առկա հակաիրավական ոտնձգություն է Տ-ի կյանքի ու առողջության նկատմամբ: Այդ ոտնձգությունն իր հերթին արդարացված չէր անհրաժեշտ պաշտպանությամբ, քանի որ Տ-ի վիրավորանքներն արդեն ավարտվել էին: Դանակով հարվածը նաև անհրաժեշտ էր պաշտպանվելու համար, քանի որ օգնության կանչերն ու խուսափելու փորձերն ապարդյուն էին ու այդպիսով՝ պաշտպանության համար ոչ պիտանի: Ըստ այսօրվա գերիշխող կարծիքի⁴⁶ սահրանք անողը (Տ-ն) չի կարող օգտվել անհրաժեշտ պաշտպանության իրավունքից *միայն ուղղակի դիտավորությամբ* սահրանքի դեպքում,⁴⁷ այսինքն՝ երբ նա ոտնձգություն է հրահրում՝ օբյեկտիվորեն առկա անհրաժեշտ պաշտպանության վիճակի քողի տակ ոտնձգողին վնասելու նպատակով:⁴⁸ Անհրաժեշտ պաշտպանության իրավունքի մերժման պատճառը, նախ, պաշտպանության կարիքի բացակայությունն է (անհատական պաշտպանության սկզբունք), քանի որ հրահրողը հենց ինքը ցանկանում է ոտնձգության ենթարկվել:⁴⁹ Բացի այդ՝ սահրանք անողը չարաշահում է անհրաժեշտ պաշտպանության իրավունքը, ուստի չպետք է կարողանա օգտվել դրա դրական կողմերից: Հակաիրավական եղանակով հրահրված անհրաժեշտ պաշտպանության մյուս բոլոր դեպքերի՝ ներառյալ *անուղղակի դիտավորությամբ* սահրանքի համար⁵⁰ գերիշխող կարծիքը ոչ թե մերժում է անհրաժեշտ պաշտպանության իրավունքը, այլ՝ սոսկ սահմանափակում է պաշտպանական

⁴³ BGH NStZ 2018, 537; Wessels/Beulke/Satzger StrafR AT, 49. Aufl. 2019, Rn. 568; Exner JURA 2013, 103 (104ff.).

⁴⁴ Stü Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 23 Rn. 19.

⁴⁵ Ըստ BGH NJW 1996, 2315:

⁴⁶ Stü Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 18 Rn. 86; anders die Einschätzung bei NK-StGB/Paeffgen/Zabel, 5. Aufl. 2017, Vor § 32 Rn. 146 mwN.

⁴⁷ BGH NStZ 2019, 263; Kühl StrafR AT, 8. Aufl. 2017, § 7 Rn. 228.

⁴⁸ Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 18 Rn. 84; Wessels/Beulke/Satzger StrafR AT, 49. Aufl. 2019, Rn. 534.

⁴⁹ Kaspar StrafR AT, 3. Aufl. 2020, § 5 Rn. 207; LK-StGB/Rönnau/Hohn, Leipziger Kommentar zum StGB, 13. Aufl. 2019, § 32 Rn. 252f.

⁵⁰ Kaspar StrafR AT, 3. Aufl. 2020, § 5 Rn. 210; Kühl StrafR AT, 8. Aufl. 2017, § 7 Rn. 250.

գործողությունները: Ըստ քաջ հայտնի «երեք աստիճանի տեսության»⁵¹ սադրանք անողն իրավունք չունի միանգամից անցնելու (նորմալ դեպքերում թույլատրելի) ագրեսիվ պաշտպանության (3-րդ աստիճան): Սկզբում նա պարտավոր է փորձել խուսափել ոտնձգությունից կամ փախչել (1-ին աստիճան, այստեղ, բնականաբար, այլևս չի կարող կիրառվել ՀՀ ՔրՕ 42-րդ հոդ. 3-րդ մասը) և, եթե այդ փորձերն ապարդյուն են լինում՝ դիմել միայն պասիվ պաշտպանական գործողությունների (2-րդ աստիճան), որոնց դեպքում, որպես կանոն, թույլատրելի է ոտնձգողին սոսկ թեթև վնասվածքներ պատճառելը:⁵² Ոչ ուղղակի դիտավորությամբ հրահրված անհրաժեշտ պաշտպանության դեպքերում անհրաժեշտ պաշտպանության իրավունքն ամբողջովին մերժելու դեմ խոսում է այն, որ այստեղ սադրիչը պաշտպանության կարիք ունի, քանի որ նա վստահ չէ, որ սադրանքի ենթարկվողը հաստատ կհարձակվի իր վրա: Բացի այդ՝ այս դեպքում իրավունքի չարաշահումն այդքան էլ ակնհայտ չէ, ինչպես որ ուղղակի դիտավորությամբ սադրանքի դեպքում:⁵³ Մեր խնդրում S-ի պաշտպանությունը միայն սահմանափակված էր, այլ ոչ թե արգելված: Քանի

որ ոտնձգությունից խուսափելու և պասիվ կերպով պաշտպանվելու փորձերը (1-ին և 2-րդ աստիճան) անօգուտ էին, ուստի S-ն դրանից հետո իրավունք ուներ դիմելու ագրեսիվ պաշտպանության՝ դանակով O-ի փորին հարվածելու միջոցով (3-րդ աստիճան): Եթե փախուստի կամ այլ անձանց օգնությունից օգտվելու հնարավորություն լիներ, ապա S-ի արարքը (դանակով հարվածելը) այլևս արդարացված չէր լինի անհրաժեշտ պաշտպանության իրավունքով:

Տիպի: Անհրաժեշտ պաշտպանության ոչ բոլոր դիտավորյալ սադրանքներն են հանգեցնում անհրաժեշտ պաշտպանության իրավունքի մերժման: Անուղղակի դիտավորությամբ կատարված սադրանքի դեպքում գերիշխող կարծիքը սոսկ սահմանափակում է անհրաժեշտ պաշտպանության իրավունքը «երեք աստիճանի տեսության» միջոցով: Ըստ այդ տեսության՝ ագրեսիվ պաշտպանությունը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ փախչելու կամ պասիվ պաշտպանական գործողություններով ոտնձգությունից խուսափելու փորձերը ձախողվում են:



⁵¹ Jahn JuS 2006, 466 (467); Wessels/Beulke/Satzger StrafR AT, 49. Aufl. 2019, Rn. 537.

⁵² Rengier StrafR AT, 11. Aufl. 2019, § 13 Rn. 56, 80; Satzger/Schluckebier/Widmaier/Rosenau, 4. Aufl. 2019, StGB § 32 Rn. 30; Stuckenberg JA 2002, 172 (174).

⁵³ BGHSt 24, 356 (359) = NJW 1972, 1821; BGHSt 39, 374 (379) = NJW 1994, 871; BGH NStZ 1997, 194f.; Kaspar StrafR AT, 3. Aufl. 2020, § 5 Rn. 210; Satzger/Schluckebier/Widmaier/Rosenau, 4. Aufl. 2019, StGB § 32 Rn. 46.

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ասիստենտ, ոստիկանության ավագ լեյտենանտ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԶԴԻՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Ժամանակակից աշխարհում թմրամոլությունը մեծագույն չարիք է և սոցիումը ներսից քայքայող գործոն, որը խարխուլում է հասարակության բարոյական արժեքների գաղափարախոսական հիմքերը, խոչընդոտում ընտանիքի ձևավորման, անչափահասների իրավական և բարոյական դաստիարակության ինստիտուտների արդյունավետ իրականացումը, նաև՝ մի շարք վտանգավոր հիվանդությունների առաջացման և տարածման, ինչպես և որոշ հանցագործությունների դետերմինանտ է: Այս երևույթի կանխարգելման միջոցառումների հիմնախնդիրների մշտադիտարկման անհրաժեշտությունը պայմանավորված է դրա վտանգավորության բնույթով և աստիճանով, որն արտահայտվում է այն հասարակական հարաբերությունների խախտմամբ, որոնք ապահովում են մարդկային կարևոր սոցիալական արժեքների պաշտպանությունը և միավորվում են «բնակչության առողջության անվտանգություն» հասկացության մեջ:

Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության դեմ պայքարի քաղաքականությունը, խորհրդային ժամանակաշրջանի համեմատ, էական փոփոխություններ է ունեցել, մասնավորապես՝ խիստ պատժամիջոցները փոխարինվել են միջազայնորեն ընդունված առավել մեղմ պատժատեսակներով: Դա են վկայում 2008 թվականի մայիսի 26-ին կատարված օրենսդրական փոփոխությունները, որոնց արդյունքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի՝ թմրամիջոցներ գործածելու համար պատասխանատվություն սահմանող 271-րդ հոդվածը ճանաչվել է ուժը կորցրած: Փոխարենը՝ վերոնշյալ արարքի համար պատասխանատվություն է սահմանվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ

օրենսգրքով (այսուհետ՝ ՎԻՎՕ), որի 44¹ հոդվածի համաձայն՝

- առանց իրացնելու նպատակի մանր չափերով թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելն առաջացնում են տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով,
 - նույն արարքները մեկ տարվա ընթացքում կրկին անգամ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով:
- Եվ, ՎԻՎՕ-ի 44² հոդվածի համաձայն՝

1. Առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:
2. Նույն արարքը մեկ տարվա ընթացքում կրկին անգամ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:
3. Այն անձը, որ առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածելու կապակցությամբ բժշկական օգնություն ստանալու համար կամովին դիմել է համապատասխան բժշկական կազմակերպություն, ազատվում է սույն հոդվածով նախատեսված իրավախախտման համար վարչական պատասխանատվությունից:

Օրենսդրական հիշյալ փոփոխության արդյունքով՝ իրականացված մեղմ պատժի կիրառման քաղաքականությունը՝ որպես քննարկվող

• ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 121 2021

երևույթի կանխարգելման կամ վերացման դեմ պայքարի չափորոշիչ, ոչ արդյունավետ համարելով, կարծում ենք՝ առավել իրատեսական է որպես հիմնաքար դիտել դրա արմատապես ոչնչացման միտումը՝ վերստին քրեականացնելով թմրամիջոցների գործածումը:

Ինչպես նշել է Վ.Մ Կոգանը՝ «այսօրվա օրենքը վաղվա բարոյականությունն է»¹:

Նշված արարքի քրեականացման պահանջումնքը պայմաններ է ստեղծում Հայաստանի Հանրապետությունում իրավական և բարոյական արժեքների համաչափության և անհատի, հասարակության, պետության միասնական ռեգրեսիայի ապահովման համար:

Նախ՝ նշենք, որ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության կանխարգելման ընդհանուր միջոցառումների արդի համակարգում կարևոր նշանակություն ունի քրեաիրավական դաշտից դուրս գտնվող օրինական շրջանառության նկատմամբ պատշաճ հսկողության իրականացումը, մասնավորապես՝ բժշկական և դեղագործական հաստատություններում: Այդ հաստատությունների աշխատակիցները երբեմն հանցավոր գործարքների մեջ են մտնում թմրամոլների հետ, հափշտակում են թմրամիջոցներով սրվակները և վաճառում թմրամոլներին²:

Ինչ վերաբերում է թմրամիջոցից կախվածություն ունեցող անձին՝ թեև վերջինս համարվում է «հիվանդ», ում անհրաժեշտ է պետության և հասարակության աջակցությունը, այնուամենայնիվ, պետք է փաստել, որ նա, մինչ թմրամիջոց գործածելը և կախվածություն ձեռք բերելը, եղել է գիտակից, առողջ բանականությամբ օժտված անձ, ով լիովին կարող էր ղեկավարել իր ցանկություններն ու գործողությունները և զերծ մնալ նման հետևանքներից, ինչպես, օրինակ՝ դա կարող էր անել հետիոտնին ավտոմեքենայով վրաերթի ենթարկած անձը՝ ակոհով գործածելուց առաջ: Բացի այդ՝ անհատական դրդապատճառները, առանձին վերցված, անհրաժեշտ, բայց հաճախ ոչ բավարար

պայմաններ են հոգեներգործուն նյութերի գործածման առաջին փորձերն սկսելու համար: Որպեսզի անձը փորձի որևէ թմրամիջոց կամ հոգեմետ նյութ՝ հաճախ նրան անհրաժեշտ է նպաստող արտաքին միջավայր, ինչպիսիք են՝ ընկերների ազդեցությունը, թմրամիջոցների և կոնկրետ թմրամիջոց գործածելու տարածվածությունը, անձնական կամ կենցաղային դժվարությունները: Շատ հաճախ երիտասարդները, հատկապես՝ դեռահասության շրջանում, հանդիպում են թմրամիջոց գործածողների և հայտնվում վերջիններիս խմբերում, ինչի պատճառով տեղի է ունենում թե՛ ֆիզիկական և թե՛ հոգեկան առողջության խեղում: Թմրամոլների մեծ մասին բնորոշ է ցինիզմը. նրանք ամեն կերպ փորձում են իրենց արատավոր սովորույթի մեջ ներգրավել երրորդ սերնդին՝ հաճույք ստանալով նրանց գայթակղելուց: Դա իրենց հոգեկան բավարարվածություն է պատճառում, միևնույն ժամանակ՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար նպաստում թմրաբիզնեսի զարգացմանը: Ինչպես նշում է Զիգմունդ Ֆրոյդը. «Թմրամոլությունը ծագում է որոշակի սոցիալական պայմաններում և դետերմինավորված է անձի և ապրելակերպով, և կենսաբանական նախադրյալներով ու դաստիարակությամբ»³:

Այսպիսով՝ այն փաստը, որ թմրամոլությունը սերտորեն կապված է հանցավորության հետ, անհերքելի է. նախ՝ այն հանգամանքը, որ գործածելը որևէ քրեաիրավական հետևանք չի առաջացնում, անձի մեջ առաջացնում է հետաքրքրություն, ինքնահաստատման պոռթկում, ռիսկի դիմելու մեծ ցանկություն, պատասխանատվության ժամանակավոր բացակայություն: Իսկ, ինչպես գիտենք՝ թմրամիջոցների ձեռքբերումն էական նյութական ծախսեր է պահանջում, հետևաբար՝ թմրամիջոցից հոգեբանական կամ ֆիզիկական կախվածություն ունեցող անձի համար իր պահանջումների բավարարումը և էջֆորիան վեր են դառնում իրավական ու բարոյական չափանիշների սահմաններից: Եվ երբ թմրամիջոցների նոր դեղաչափերն այլևս չեն բավարարում նախորդ ան-

¹ Տե՛ս Կոգան В.М. Планирование борьбы с преступностью и механизм уголовно-правового воздействия//Планирование мер борьбы с преступностью, Сборник научных статей. Отв. ред. Коган В.М., М., Изд-во ИГ ИП АН СССР, 1982, էջ 81:

² Տե՛ս Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքար: Գիտագործնական ձեռնարկ: ՀՀ ոստիկանության կրթահամալիր: Երևան, Լիմուշ հրատ., 2013թ, էջ 52:

³ Տե՛ս Ֆրեյդ, Интерес к психоанализу, Ростов - на-Дону, “Феникс”, 1998.

գամվա էյֆորիան ստանալու համար, իսկ օրգանիզմը պահանջում է թմրամիջոցի ավելի մեծ քանակություն, ինչպիսի հանգամանքը թմրամոլությանը և թունամոլությանը բնորոշ տոլերանտությունն է, թմրամիջոց գործածող անձն ինքը կարող է վերածվել «հանցագործի» և իր նպատակին հասնելու համար կատարել հանցանքներ:

Բացի այդ՝ ՎԻՎՕ-ի վերը նշված հոդվածներում առկա գործողություններն ինքնին նպաստում են քրեական օրենսգրքով նախատեսված համապատասխան հոդվածներում առկա արարքների իրականացմանը⁴, ինչպիսի հանգամանքից էլ բխում է դրա հանրային վտանգավորությունը, քանզի թմրամիջոց պարբերաբար գործածող անձի մեջ, ինչպես նշվեց, վաղ թե ուշ առաջ է գալիս հոգեբանական կախվածություն, իսկ չդադարեցնելու դեպքում նաև՝ ֆիզիկական կախվածություն, և վերջինս, իր պահանջունքները բավարարելու համար, դիմում է այն անձանց, ովքեր ունեն ապօրինի ճանապարհով թմրամիջոց հանդիսացող նյութ կամ հոգեմետ դեղորայք իրացնելու նպատակ: Պարզ է դառնում, որ այս ոլորտում առավել բարդ համակարգ են կազմում անձինք, ովքեր անմիջականորեն մասնակցում են թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը: Թմրամոլությամբ տառապող անձանց թվի աճն օրինաչափորեն հանգեցնում է դրա հետ կապված հանցագործությունների աճին, հետևաբար՝ հանցավոր եկամուտների աճին:

Թմրաբիզնեսն այսօր ամբողջ աշխարհում ստվերային ամենաձավալուն շրջանառությունն ապահովող երևույթն է, որի հիերարխիկ բուրգ հիշեցնող համակարգում առանձնանում են թմրաբիզնեսի կազմակերպիչները (քրեական ենթամշակույթի կրողներ, քաղաքական ներկայացուցիչներ և այլն), ովքեր տնօրինում են ահռելի նյութական ռեսուրսների, կապեր ունեն հանցաշխարհի հետ, որպես կանոն՝ նախկինում դատապարտված անձինք են: Այս խմբի

մեջ ներառվում են նաև շրջանառողները (մեծածախ առևտրականները, գնորդները, տարբեր իրացնողներ), պատրաստողները, փոխադրողները, թմրամիջոցներ գործածելու համար որջեր պահողները, անձինք, ովքեր ուրիշներին հակում են թմրամիջոցների գործածմանը⁵: Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունից ստացված ահռելի եկամուտները (համաշխարհային առևտրի 10 տոկոսը) հարուցում են նշված հանցատեսակով զբաղվող հանցավոր խմբավորումների հետաքրքրությունը՝ մշտապես կատարելագործելու հանցավոր գործունեության մեխանիզմը⁶: Թմրամիջոցի գործածման քրեականացումը ոչ միայն էականորեն կարող է նպաստել այդ արարքների կանխարգելմանը, այլ նաև՝ թույլ կտա առհասարակ վերացնել թմրամիջոցների կամ հոգեմետ դեղորայքների ապօրինի շրջանառությունը և նվազեցնել դրանք հանցավոր նպատակներով օգտագործելու հնարավորությունը, քանի որ պահանջարկի բացակայության պայմաններում նվազում է աճի միտումը:

Այս ամենից զատ՝ որոշակի կազուսային իրավիճակներ են առաջանում նաև՝ հանցագործությունների բացահայտման և արարքի որակման տեսանկյունից: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածից պարզ է դառնում, որ իրացնելու նպատակով թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր ապօրինի պատրաստելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը հիմք են 3-7 տարի ժամկետով ազատազրկմամբ պատիժ նշանակելու համար: Նույն արարքն առանց իրացնելու նպատակի նախատեսված է սույն օրենսգրքի 268-րդ հոդվածով, այսինքն՝ նշված արարքներից որևէ մեկը կատարելով (նույնիսկ թմրամիջոցի մեկանգամյա գործածման նպատակ ունենալու համար)՝ անձը պատժվում է կալանքով՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 1 տարի ժամկետով:

⁴ Տե՛ս ՀՀ ՔՕ, հ. 266-274:

⁵ Տե՛ս Павленок, П. Д. Наркомания и токсикология как формы девиантного поведения: теория и практика работы по предотвращению и избавлению от наркотической зависимости: / Наркомания - понятие, классификация, типы наркотиков, причины и последствия распространения / Социальная работа с лицами и группами девиантного поведения: учеб. пособие / П. Д. Павленок, М. Я. Руднева. - М., 2010, էջ 187:

⁶ Տե՛ս Антонян Ю. М., Князев В. В. Борьба с незаконным оборотом наркотиков за рубежом. - М. МИ МВД России, 2003թ, էջ 5:

Նախ՝ անձը կարող է բացահայտվելու վտանգի առկայության դեպքում իրացման նպատակը թաքցնել, իսկ հանցավորից առգրավված թմրամիջոցների մեծ քանակությունն ինքնըստինքյան դրանք իրացնելու անվիճելի ապացույց չէ. դա պետք է գնահատել միայն իրացման նպատակի մասին վկայող այլ տվյալների հետ համակցության մեջ⁷: Բացի այդ՝ ստացվում է, որ, առանց իրացնելու նպատակի մանր չափով թմրամիջոց պահելու դեպքում՝ անձը համարվում է հասարակության համար անվտանգ, ով հիվանդության «գոհ» է և ունի բուժման կարիք, սակայն զգալի չափերով թմրամիջոց պահելու դեպքում արդեն անձը դառնում է հանցավոր, ով ենթակա է քրեական պատասխանատվության:

Անշուշտ, մի շարք միջազգային կազմակերպություններ և անհատներ, մարդու իրավունքների գերակայության սկզբունքից ելնելով, նշված արարքի քրեականացման մերժման հիմքում առավելապես դնում են առողջապահական տեսանկյունը, սակայն կարծում ենք, թե թմրամոլ-անհատի առողջությունը, որի խթարմանը հանգեցրել է հենց ինքը, անշուշտ, չի կարող գերակա լինել հասարակության մյուս անդամների կյանքի և առողջության, անվտանգության, գենետիկայի պահպանման և մի շարք այլ խնդիրների արդյունավետ իրականացման պայքարի նկատմամբ. չէ՞ որ, ինչպես նշվում է ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածով՝ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Քանի որ յուրաքանչյուր մարդու իրավունքի ու ազատության սահմանը վերջանում է այնտեղ, որտեղ սկսվում է այլոց իրավունքների և ազատությունների սահմանները, նշված դեպքում, որոշ իրավունքների քրեաիրավական սահմանափակումը, կարծում ենք, կլինի օրինական զսպում ապօրինի գործողություններից, ինչով և բավարար պայմաններ ու հնարավորություններ կստեղծվեն հասարակության համընդհանուր շահերն ու հետաքրքրությունները պաշտպանելու համար:

Պետք է փաստել նաև, որ՝ հայ հասարակության գերակշիռ մասի կարծիքով՝ թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձինք չեն

ընկալվում որպես «հիվանդությամբ տառապող մարդիկ»: Այս է պատճառը, որ նրանք շատ հաճախ ենթարկվում են խտրական վերաբերմունքի: Նմանատիպ վերաբերմունքը բնորոշ է ինչպես հանրության լայն շերտերին, այնպես էլ ոլորտի հետ առնչվող պետական մարմինների ներկայացուցիչներին: Արարքի ապաքրեականացումը, սակայն, չի առաջացնում նման կարծրատիպային մոտեցման չեզոքացում: Թեև նշվում է, որ, երբ թմրամիջոց գործածող անձինք իրավական առումով հանդես եկան ոչ թե որպես հանցագործ, այլ՝ որպես հիվանդ, նրանք սկսեցին դիմել բուժհաստատություններ, այնուամենայնիվ, կարծում ենք՝ առավել իրատեսական է դա համարել քողարկման միջոց. անձը բավականին ուշ դիմում է բուժհաստատություն, միևնույն ժամանակ՝ հայտարարում, որ, թեև ինքը ցանկություն ունի բուժվելու, սակայն թմրամոլությունն իր համար անհաղթահարելի է: Այդպիսով զերծ է մնում պետության իրավական և հասարակության բարոյական պարսավանքից, խուսափում է իր արարքների համար պատասխանատվություն կրելու պարտավորությունից և շարունակում իր գերեՍ-ի պահանջմունքները բավարարելուն ուղղված կործանարար ուղին: Կարծում ենք՝ երևույթի կանխման կամ անձի բուժման համար պետք է նախ և առաջ փոխել վերջինիս իրավագիտակցությունը և հոգեբանությունը: Այդ նպատակով՝ անհրաժեշտ է թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց կողմից հիվանդության հետևանքով «պարտադրված» թմրամիջոցներ գործածելու հանգամանքի օբյեկտիվ գնահատմամբ թերևս, նախապայման ստեղծել բուժման և ուղղման, որի անարդյունավետ իրագործման դեպքում արդեն կարող է կիրառելի լինել ազատագրկման ձևով պատիժը:

Մի շարք երկրներում, որտեղ առանց բժշկի նշանակման թմրամիջոցների գործածումը նախատեսել է քրեական պատասխանատվություն, գոյություն են ունեցել որոշակի առանձնահատկություններ, օրինակ՝ Բելգիայում քրեական պատասխանատվություն է առաջացրել միայն արգելված թմրամիջոցների խմբակային գործածումը, Էստոնիայի քրեական օրենսգրքով արգելվել է թմրամիջոցների գործածումը կա-

⁷ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի ՎԲ -135/07 որոշումը:

լանավորված, ձերբակալված և դատապարտված անձանց համար, Հունաստանում արգելված թմրամիջոցի գործածումը հանգեցրել է քրեական պատասխանատվության այն դեպքում, երբ մեղադրյալը կախվածություն ունեցող անձ չէր, հակառակ դեպքում՝ նա ենթակա էր հարկադիր բուժման: Ուկրաինայում քրեականացված էր թմրամիջոցների խմբակային գործածումն այնպիսի վայրերում, որոնք նախատեսված են կրթական, մշակութային և սպորտային միջոցառումներ իրականացնելու համար: Միևնույն ժամանակ՝ որոշ երկրներում, որտեղ թմրամիջոցի գործածումն ապաքրեականացվել է, այժմ նախատեսված է վարչական պատասխանատվություն, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում վարչական պատասխանատվություն է առաջանում թմրամիջոցի գործածման յուրաքանչյուր դեպքում, իսկ Իսպանիայում՝ միայն այն դեպքում, երբ գործածվել է հասարակական վայրերում⁸:

Հաշվի առնելով նշված երևույթի դեմ պայքարում մի շարք երկրների քրեաիրավական փորձը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ քրեականացումը կհանդիսանա ներպետական խնդիրների լուծման հարաբերականորեն արդյունավետ միջոց:

Քրեականացումը հանցագործություն չհամարվող արարքներից որոշակի հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտության մասին որոշման ընդունումն ու այդ որոշումը քրեական օրենսգրքի «Հատուկ մասի» հոդվածում ամրագրումն է՝ հիմնական հանցակազմ նախատեսելու կամ դրանում հատկանիշներ ավելացնելու, փոփոխելու կամ վերացնելու միջոցով⁹, ուստի առաջարկվում է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասը ենթարկել փոփոխման և հանել «գգալի չափերով» բառը: Մասնավորապես՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը,

վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը: Առաջարկվում է նաև ՎԻՎՕ 44² հոդվածի 1-ին մասը ենթարկել լրամշակման. առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով և հարկադիր բուժում մինչև բուժման անհրաժեշտության վերանալը: Հիշյալ փոփոխությանը պայմանավորված, միևնույն ժամանակ՝ նախատեսել ՀՀ քրեական օրենսգրքում 266¹ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածելը, եթե անձը նախկինում ենթարկվել է վարչական պատասխանատվության նույն արարքը կատարելու համար, պատժվում է՝ տուգանքով չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով կամ կալանքով կամ ազատազրկմամբ առավելագույնը 1 տարի ժամկետով:

Առաջարկվում է նաև քրեակատարողական հիմնարկներում ստեղծել սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոն, որտեղ կաշխատեն և մասնագիտացված բժիշկներ, և հոգեբաններ, և սոցիալական աշխատողներ, ովքեր ազատազրկման ամբողջ ժամանակահատվածում, պետական հսկողության ներքո, կիրականացնեն անձի լիարժեք բուժմանն ուղղված գործունեություն:

Ինչպես նշում է Յու.Ի. Լյապունովը. «Անձի վտանգավորությունը կարող է արտահայտվել միայն նրա արարքում»¹⁰: Թմրամիջոց գործածող կամ դրանից կախվածության մեջ գտնվող անձի արարքները, չնայած վարչական տույժի կիրառմանը, կարող են ձեռք բերել հանրային բարձր վտանգավորություն և հանդիսանալ հիմնական պատճառ և սնուցող աղբյուր մի շարք հանցագործությունների կատարման ու տարածման համար: Հետևաբար՝ արատավոր այս երևույթի դեմ իրական պայքարում, որտեղ առ-

⁸ Стен Сравнительное уголовное право, Особенная часть, Монография, В.Н.Додонов, О.С. Капинус, С.П. Щерба: изд. Юрлитинформ, Москва, 2010.
⁹ Стен «Բանբեր Երևանի համալսարանի իրավագիտություն», 132.3, 2010, ԵՊՀ, Երևան: Մ.Մարկոսյան Քրեական օրենսդրության բացերի լրացման հիմնախնդիրները (քրեականացման որոշ հարցեր) էջ 56:
¹⁰ Стен Ляпунов Ю.И. Общественная опасность деяния как универсальная категория советского уголовного права. М., Изд-во ВЮЗШ МВД СССР,1989 /նշված՝ Մ.Մ. Մարկոսյան: Քրեականացման և ապաքրեականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Մենագրություն, Երևան, Լիմուշ, 2011, էջ 204:

կա չեն լինի քողարկված նպատակներ, քրեաիրավական հետևանք առաջացնող նման քաղաքականությունը կարող է՝

- առանց ոտնահարելու կոնկրետ անձի միջազգային իրավունքի նորմերով և ներպետական օրենսդրությամբ սահմանված սոցիալական արժեք ներկայացնող իրավունքները՝ օրինական զսպման մեխանիզմների կիրառման միջոցով ապահովել բնակչության առողջության անվտանգությունը,
- իրականացնել օրենքներով պաշտպանվող մի շարք կարևոր օբյեկտների պաշտպանություն,
- ապահովել հասարակության մեջ հակաթմրամոլային աշխարհայացքի ձևավորում և առողջ ապրելակերպի արմատավորում,
- կանխել ձևախեղումը,
- չեզոքացնել անձի մեջ պոտենցիալ հանցագործ դառնալու միտումը,

- հարկադիր աջակցություն ցուցաբերել թմրամիջոցից կախվածություն ունեցող և բուժման կարիք ունեցող անձանց,
- իրավական և բարոյական պատասխանատվություն կրելու պարտավորություն ձևավորել հասարակության անդամների մեջ, հատկապես՝ նրանց, ովքեր կարող են հայտնվել «թմրամոլության ծուղակում» և այլն:

Ի վերջո՝ ինչպես նշել է 18-րդ դարի իտալացի հանճարեղ լուսավորիչ և հումանիստ Ջեզարե Բեկարիան իր «Հանցագործությունների և պատիժների մասին» աշխատության մեջ. «Հանցագործության կանխման արդյունավետությունը կախված է ոչ թե պատժի դաժանությունից, այլ՝ անխուսափելիությունից... Նույնիսկ ամենաթեթև պատժի անխուսափելիության մեջ համոզված լինելը միշտ կարող է ավելի մեծ ազդեցություն ունենալ, քան վախը մեկ այլ, ավելի դաժան, բայց խուսափելու հույս ներշնչող պատժի նկատմամբ»¹¹:



¹¹ Снѣ Беккариа Ч.О преступлениях и наказаниях. М., 1939, էջ 308-309:

ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Արդարադատության ակադեմիայի գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնի մասնագետ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանող

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ

Նոր կամ էվոլյուցիոն երևույթների իրավական կարգավորումը՝ իրավունքի ճյուղից անկախ, օրենսդրի համար միշտ էլ զգալի դժվարություններ է առաջացնում: Հասարակության զարգացման արդի փուլում խնդրահարույց հարցեր են ծագում գենոմային հետազոտությունների, ռոբոտատեխնիկայի, համընդհանուր ինֆորմատիզացման և այլ ոլորտներում: Գիտատեխնիկական առաջընթացը մարդկությանը բերում է ոչ միայն օգուտ, այլև նոր մարտահրավերներ և վտանգներ: Այսպես, գիտնականների կարծիքով՝ տեխնիկայի ձեռքբերումների օգտագործմամբ մարդու գործունեությունն արդեն հանգեցրել է կլիմայի էական բացասական փոփոխության և բնապահպանական իրադրության բարդացման¹: Կարելի է, ցավոք, թվել գիտատեխնիկական առաջընթացի մի շարք այլ բացասական հետևանքներ ու ներկայացնել դրանց իրավական կարգավորման խնդիրները: Միևնույն ժամանակ՝ գիտության զարգացման շարժընթացը պայմանավորում է ռոբոտատեխնիկայի և արհեստական բանականության նոր երևույթների իրավական կանոնակարգման անհրաժեշտությունը:

Համեմատաբար վերջերս ռոբոտների, ոչ կենսաբանական նեյրոնային ցանցերի ու արհեստական բանականության՝ կենցաղում և արտադրությունում օգտագործումն ընկալվում էր որպես ֆանտաստիկ, անհասանելի, գոյություն ունեցող միայն գրքերում: Այնուամենայնիվ, ամեն

տարի նկատվում է մարդու գործունեության առավել թվայնացում և ավտոմատացում: Այսպես՝ ակտիվորեն կիրառվում են նեյրոնային ցանցերը բանկային գործունեության, այդ թվում՝ օպերացիոն գործառույթների իրականացման մեջ²: Բժշկության մեջ ակտիվորեն զարգանում է մասնագիտացված ռոբոտատեխնիկան, իսկ արտասահմանյան գրականության մեջ նկարագրվում են ոչ միայն մարդու կողմից կառավարվող, այլև գրեթե ինքնավար սարքերի օգտագործման դրական օրինակներ³: Տեղին է նշել, որ ռոբոտ և արհեստական բանականություն հասկացությունները հոմանիշներ չեն: Արհեստական բանականությունը ծրագրին է, որում դրսևորվում է ինտելեկտը, իսկ ռոբոտը ֆիզիկական տարրն է, որն իրականացնում է արհեստական բանականության կայացրած որոշումները: Սակայն ոչ բոլոր ռոբոտներն են «խելացի», և ոչ բոլոր դեպքերում է, որ արհեստական բանականությունը կարիք ունի ռոբոտի տեսքով արտաքին ձևի՝ իր գործառույթներն իրականացնելու համար⁴:

Ա.Հոքինգը, Բ.Գեյթսը և Ի.Մասքը առաջնաբեմ պլան են մղում տեխնոլոգիական սինգուլյարության (technological singularity) խնդիրը՝ այն պահը, երբ համակարգիչներն իրենց բոլոր դրսևորումներով մարդկանցից խելացի կդառնան: Ռ.Կուրցվելլի կարծիքով՝ երբ դա տեղի ունենա, համակարգիչները հնարավորություն կունենան աճելու երկրաչափական պրոգ-

¹ Տե՛ս Abatzoglou, John T., Williams, Park A. Impact of Anthropogenic Climate Change on Wildfire across Western US Forests. Proceedings of the National Academy of Sciences of the United States of America, 2016, էջ 11770–11775:
² Տե՛ս Маткова, Александра А. Почему в ближайшие 3 года операционистов в банках может заменить искусственный интеллект? Экономика. Право. Менеджмент: современные проблемы и тенденции развития, 2017, էջ 10–18:
³ Տե՛ս Hamet, Pavel, Johanne Tremblay. Artificial intelligence in medicine. Metabolism, Clinical and Experimental 2017, էջ 36–40:
⁴ Տե՛ս Դավթյան Ս., Արհեստական ինտելեկտի ազդեցությունը հեղինակային իրավունքի օրենսդրական քաղաքականության վրա. մարտահրավերներ և արձագանք, Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, Երևան, 2020թ. N 2(32), էջ 38, http://www.y.su.am/files/03T_Davtyan.pdf (հասանելի է՝ 09.11.2020թ.):

● ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ № 121 2021

րեսիայով՝ վերարտադրելով իրենց իսկ ինտելեկտը միլիարդավոր անգամներ ավելի արագ, քան մարդկայինը⁵: Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Ն.Բոստրոմի կարծիքով՝ 60 տարի անց արհեստական բանականությունը լուրջ սպառնալիք կդառնա մարդկության համար: 2022 թվականին ռոբոտի և մարդու մտածողության գործընթացների նմանությունը հավասար կլինի մոտավորապես 10%-ի, 2040 թվականին՝ 50%-ի, իսկ 2075 թվականին ռոբոտների մտածողության գործընթացներն այլևս չեն կարող տարբերվել մարդկային գործընթացներից. նմանությունը կհասնի 95%-ի⁶: Այսպիսով՝ տեխնոլոգիական զարգացման տեմպերը վկայում են, որ նշված գործընթացն ավելի արագ տեղի կունենա: Ա.Սանդբերգի և Ն.Բոստրոմի նոր հետազոտություններում արված կանխատեսումներում նշված ժամկետները զգալիորեն ճշգրտվել են նվազման ուղղությամբ^{7, 8}:

Բարոյականության և բարոյական ընտրության խնդիրն ավելի ու ավելի արդիական է դառնում արհեստական բանականության համար: Ռազմական կարիքների համար ռոբոտների մշակմամբ զբաղվող պրոֆեսոր Ռ.Արկինը նշում է, որ իր հետազոտություններն ունեն զգալի էթիկական ռիսկեր, որոնք հնարավոր են հանցավոր նպատակներով նրա մշակումների օգտագործման դեպքում: Պատերազմի ընթացքում արհեստական ինտելեկտի կիրառումը կարող է փրկել հազարավոր կյանքեր, սակայն բանականություն ունեցող և ինքնուրույն հանդես եկող զենքը սպառնալիք է ստեղծում նույնիսկ իր ստեղծողների համար: Կանխատեսելով իր մշակումների հնարավոր ռիսկերը՝ Ռ.Արկինը ստեղծել է ավգորիթմների հավաքածու («էթիկական ղեկավար»), որը կոչված է օգնելու ռոբոտներին գործել մարտադաշտում. ինչ իրավիճակներում դադարեցնել կրակը, ինչ իրավիճակում ձգտել նվազագույնի հասցնելու զոհերի թիվը:

Սակայն, եթե ռազմական ոլորտում ար-

հեստական բանականության կիրառման հնարավոր ռիսկերն ակնհայտ են, և գիտնականներն արդեն աշխատանք են տանում դրանց նվազեցման ուղղությամբ, ապա արհեստական բանականության խաղաղ ոլորտներում կիրառման իրավիճակն այլ է: Վ.Շերշուլսկին նշել է, որ. «Շուտով տեղեկատվական համակարգերը կկարողանան կարևոր որոշումներ կայացնել ֆինանսական գործարքների, ավտոմեքենաների կառավարման, բժշկական ընթացակարգերի և զենքի կիրառման վերաբերյալ: Ո՞վ է պատասխան տալու հետևանքների համար⁹»:

Արհեստական բանականության կիրառումը անխուսափելիորեն կհանգեցնի բարոյական ընտրության խնդրի: Օրինակ՝ անօդաչու ավտոմեքենայում օգտագործվող արհեստական բանականությունն անհաղթահարելի ուժի պայմաններում պետք է ընտրություն կատարի, թե ճանապարհային երթևեկության մասնակիցներից ո՞ւմ կյանքը պետք է պահպանվի: Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարանում 2016 թվականի սկզբին գործարկվել է Moral Machine-ի («էթիկա ավտոմեքենայի համար») լայնածավալ հետազոտությունը, որի շրջանակներում ստեղծվել է հատուկ կայք, որտեղ անօդաչու մեքենայի օգտատիրոջ համար մոդելավորվել են իրավիճակներ, տարբեր սցենարներ, որոնցով հնարավորություն է ընձեռվել ճանապարհին ընտրություն կատարելու արտակարգ իրավիճակի դեպքում, օրինակ՝ ո՞ւմ կյանքը զոհաբերել անխուսափելի վթարի դեպքում: 2,3 մլն պատասխանների վերլուծությունը ցույց է տվել, որ հարցվածները հաճախ նախընտրում են փրկել մարդկանց, այլ ոչ թե՛ կենդանիներին, երիտասարդներին՝ ծերերի փոխարեն: Բացի դրանից՝ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հարցվածների պատասխանների ընտրության մեջ զգալի դեր են խաղացել հավանական զոհի սեռը, կրոնական հայացքները, իսկ տղամարդիկ՝ քիչ դեպքերում ողջ կթողնեին կանանց, մինչդեռ

⁵ Տե՛ս Kurzweil R. The Singularity Is Near: When Humans Transcend Biology. New York: Duckworth, 2010. էջ 1012:

⁶ Տե՛ս Bostrom N. Superintelligence: Paths, Dangers, Strategies. Oxford: Oxford Univ. Press, 2014. էջ 390:

⁷ Տե՛ս Sandberg A. Space Races: Settling the Universe Fast. Technical Report-2018 / A. Sandberg. University of Oxford, 2018. – URL: <https://www.fhi.ox.ac.uk/wp-content/uploads/space-races-settling.pdf> (հասանելի է՝ 09.11.2020թ.):

⁸ Տե՛ս Bostrom N. Strategic Implications of Openness in AI Development // Global Police. 2017. Vol. 8, iss.2. էջեր 135–148:

⁹ Տե՛ս Шершульский В. Юриспруденция и искусственный интеллект: наступает эпоха беспрецедентных вызовов – URL: https://ru.valdaiclub.com/events/posts/articles/yurisprudentsiya-i-iskusstvennyy-intellekt-nastupaet-epokha-bespret-sedentnykh-vyzovov/?sphrase_id=20616 (հասանելի է՝ 09.11.2020թ.):

կրոնական հայացքներ ունեցողները նախապատվությունը տվել են մարդու, այլ ոչ թե կենդանու փրկությանը: Գերմանական Mercedes-Benz ավտոմոբիլային ընկերության ներկայացուցիչներն իրենց հերթին նշել են, որ նրանց մեքենաներն առաջնահերթություն են տալու ուղևորներին, ինչին Գերմանիայի տրանսպորտի նախարարությունում անմիջապես պատասխան է տրվել, որ նման ընտրություն կատարելը մի շարք չափանիշների հիման վրա սխալ կլինի, և ցանկացած դեպքում արտադրողը պատասխանատվություն կկրի¹⁰: Այսպիսով՝ կարևոր է ընդգծել արհեստական բանականության նախագծման, արտադրության, օգտագործման և փոփոխման ընթացքում էթիկայի շրջանակների հստակ, խիստ և արդյունավետ որոշման անհրաժեշտությունը:

Բացառություն չէ նաև առողջապահության ոլորտը: Արհեստական բանականության ներդրումն օնկոլոգիական հիվանդությունների ախտորոշման և բուժման մեջ հանգեցրել է ոչ միանշանակ հետևանքների: 2018 թվականի ամռանը տեղի է ունեցել ապարատային և ծրագրային ապահովման խոշորագույն արտադրողներից մեկի՝ IBM ընկերության ներքին փաստաթղթերի արտահոսքը: Որպես արդյունք՝ հայտնի է դարձել, որ նրա կողմից մշակված աշխարհի 230 հիվանդանոցում օգտագործվող բժշկական արհեստական բանականությունը՝ Watson Health-ը, 84 հազար հիվանդների մոտ 13 տեսակի քաղցկեղի բուժման համար, կատարում է բժշկական սխալներ՝ առաջարկելով ոչ ճիշտ բուժման մեթոդներ, որոնք կարող են հանգեցնել հիվանդի մահվան¹¹: Նշված հանգամանքները վկայում են արհեստական բանականության կիրառման քրեաիրավական կարգավորման հարցերի քննարկման անհրաժեշտության մասին:

Այսպիսով՝ արհեստական բանականության կիրառման ընթացքում հնարավոր են քրեաիրավական կարգավորում պահանջող չորս իրավիճակ.

- արհեստական բանականության համակարգ ստեղծելիս թույլ է տրվել հանցանք կատարելու հանգեցրած սխալ,
- արհեստական բանականության համակարգ կատարվել է ոչ իրավաչափ մոտք, որը հանգեցրել է նրա գործառույթների վնասմանը կամ փոփոխմանը, ինչի հետևանքով կատարվել է հանցանք,
- ինքնուսուցման ունակություն ունեցող արհեստական բանականությունը որոշում է կայացրել հանցանք համարվող արարք կատարելու մասին,
- արհեստական բանականությունը հանցագործների կողմից ստեղծվել է հանցանքներ կատարելու համար:

Ջ.Քինգսթոնն իր 2017 թ. հետազոտության մեջ հիպոթետիկ իրավիճակ է նկարագրել, երբ արհեստական բանականությամբ կառավարվող մեքենան վրաերթի է ենթարկում հետիոտնին, և քրեական պատասխանատվության հարց է բարձրացրել¹²: Ցավոք, իրավիճակն իրական է դարձել արդեն 2018 թվականի սկզբին, երբ ամերիկյան միջազգային ընկերության անօդաչու ավտոմեքենան ծրագրի առանձնահատկությունների պատճառով ԱՄՆ-ի Արիզոնա նահանգում վրաերթի է ենթարկել մի կնոջ¹³:

«Հ քրեական օրենսդրքի¹⁴ (այսուհետ՝ Օրենսգիրք) համաձայն՝ քրեական պատասխանատվության կարող են ենթարկվել բացառապես ֆիզիկական անձինք, որոնց վրա կարող է դրվել կանոնների կատարման կամ պահպանման պարտականություն, քանի որ արհեստական բանա-

¹⁰ Стів Карлюк М.В. Этические и правовые вопросы искусственного интеллекта / М.В. Карлюк.– URL: <https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/eticheskie-i-pravovye-voprosy-iskusstvennogo-intellekta/> (հասանելի է՝ 09.11.2020թ.):

¹¹ Стів Коленов С. ИИ-онколога IBM Watson уличили во врачебных ошибках / С. Коленов // Hightech.plus. 2018.– URL: <https://hightech.plus/2018/07/27/ii-onkologa-ibm-watson-ulichili-vo-vrachebnyh-oshibkah/> (հասանելի է՝ 09.11.2020թ.):

¹² Стів Kingston J.K. Artificial Intelligence and Legal Liability / J.K. Kingston // Research and Development in Intelligent Systems XXXIII: Incorporating Applications and Innovations in Intelligent Systems XXIV: Conference Paper. Cambridge, 2016. էջ 269–279:

¹³ Стів Bergen M., E. Newcomer Uber Halts Autonomous Car Tests After Fatal Crash in Arizona. – URL: <https://www.bloomberg.com/news/articles/2018-03-19/uber-autonomous-car-involved-in-fatal-crash-in-arizona> (հասանելի է՝ 09.11.2020թ.):

¹⁴ Стів Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ընդունել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 2003 թվականի ապրիլի 18-ին: Ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին: Գործում է: ՀՕ-528-Ն, ՀՀԳՏ 2003.05.02/25(260) Հոդ. 407:

կանությունը տեղեկատվական-հեռահաղորդակցային տեխնոլոգիա է, իսկ Օրենսգրքի 257-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում **համակարգչային** համակարգը կամ ցանցը շահագործելու կանոնները խախտելն այն անձի կողմից, ով դրանցում մուտք գործելու թույլտվություն ունի, եթե այդ արարքն անզգուշությամբ առաջացրել է օրենքով պահպանվող համակարգչային տեղեկատվության ոչնչացում, ուղեփակում (մեկուսացում), փոփոխում, համակարգչային սարքավորումների աշխատանքների խաթարում կամ առաջացրել է այլ զգալի վնաս:

Օրենսգրքի 257-րդ հոդվածի առաջին մասի դիսպոզիցիան բլանկետային է: Ուստի տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշների բացահայտման համար անհրաժեշտ է նախ և առաջ դիմել այն կոնկրետ դրույթներին, որոնք ամրագրում են համակարգչի, համակարգչային համակարգի կամ ցանցի բնականոն շահագործման կանոնները: Այդպիսիք ՀՀ-ում համարվում են հիմնականում տեղայնացված, նեղ գերատեսչական բնույթի նորմատիվ ակտերը (կանոնները, ցուցումները, հրահանգները և այլն), որոնց վերաբերյալ պարտադիր տեղեկացվում է տվյալ կազմակերպության յուրաքանչյուր աշխատակից, ով այս կամ այն կերպ առնչվում է համակարգչային տեղեկատվական ռեսուրսների հետ¹⁵:

Համակարգչային համակարգի և ցանցի շահագործման կանոնները խախտելու համար նշված նորմը լիովին կիրառելի է արհեստական բանականության օգտագործմամբ իրավիճակների նկատմամբ: Հարկ է նշել խախտման և տեղի ունեցած էական վնասի միջև պատճառահետևանքային կապ հաստատելու պարտադիր անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ հավաստիությունը, որ արհեստական բանականության գործունեության խախտման հետևանքները շահագործման կանոնների խախտման հետևանք են, այլ ոչ թե ծրագրային սխալ կամ այլ արարք՝ համակարգչային և տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված:

Հարցը նույն կերպ է լուծվում նաև այն դեպքում, երբ արհեստական բանականության համակարգում իրականացվել է իր գործառույթների

վնասման կամ փոփոխման պատճառ դարձած ոչ իրավաչափ մուտք, որի հետևանքով կատարվել է հանցանք: Այսպես, օրինակ՝ Օրենսգրքի 254-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալու համար: Հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է ակտիվ գործողություններով, որոնց էությունը հանցավորի կողմից համակարգում, համակարգչային համակարգում, ցանցում կամ մեքենայական կրիչների վրա պահվող տեղեկատվությունն առանց թույլտվության պատճենահանելն է կամ այլ կերպ ապօրինի տիրանալը կամ համակարգչային կապի միջոցների օգտագործմամբ հաղորդվող տեղեկատվությունը որսալը: Օրենսգրքի 256-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում վնասաբեր ծրագրեր մշակելու, օգտագործելու և տարածելու համար: Նույն՝ 256-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում համակարգում, համակարգչային համակարգում, ցանցում կամ մեքենայական կրիչների վրա պահվող տեղեկատվությունն առանց թույլտվության ոչնչացնելու, ուղեփակելու (մեկուսացնելու), վերափոխելու կամ պատճենահանելու նպատակով համակարգչային ծրագրեր մշակելու կամ գոյություն ունեցող ծրագրերում փոփոխություններ ներմուծելու կամ հատուկ հարուցիչներով ծրագրեր մշակելու, դրանք օգտագործելու կամ այդպիսի ծրագրերով կրիչներ տարածելու համար:

Այսպիսով՝ արհեստական բանականություն մշակողը և (կամ) սեփականատերը պատասխանատվություն են կրում իրենց կողմից ստեղծված և (կամ) շահագործվող արհեստական բանականության պատճառած ցանկացած վնասի համար: Uber անվարորդ ավտոմոբիլի հետ կապված իրավիճակում, որ որոշում էր կայացրել հետիոտնին վրաերթի ենթարկել երթևեկելի մասում, անօդաչու մեքենայի գործողությունների համար պատասխանատվությունը կրելու են դրա մշակողները:

Պետք է համաձայնել Օ.Ա. Ռադուտնիի կարծիքին, որ, քանի դեռ արտադրողը (մշակողը) և (կամ) արհեստական բանականության սեփականատերն են պատասխանատվություն կրում,

¹⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), խմբագրությամբ՝ ի. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ.Ս. Ղազինյանի, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 609:

սուբյեկտի որոշման հետ կապված դժվարություններ չեն առաջանում¹⁶: Սակայն արհեստական բանականության համակարգերն ունեն բավական բարդ ճարտարապետություն, որը բաղկացած է մի քանի ծրագրաապարատային համալիրներից, կամ կարող են ստեղծված լինել սկզբնական բաց կողերի օգտագործմամբ: Նշված իրավիճակներում արհեստական բանականություն մշակողի և սեփականատիրոջ որոշումը դառնում է բավականին դժվար: Այդ բարդությունները հաղթահարելու համար հնարավոր է թվում կիրառել արհեստական բանականության ստեղծման և շահագործման գործունեության ստանդարտացման և սերտիֆիկացման համակարգ:

Շատ ավելի մեծ թվով խնդիրներ և դժվարություններ է ստեղծում «ինքնագիտակցությամբ» օժտված ինքնավար արհեստական բանականության օգտագործումը, որը կարող է ինքնակատարելագործվել, ինքնապահպանվել, ստեղծագործել: Ինչպես արդարացիորեն նշում է Պ.Մ.Մորիսաթը. «Հիմնական բարդությունը կապված է գործողության (կամ անգործության) և դրա հետևանքների միջև պատճառահետևանքային կապի հաստատման հետ: Այն դեպքում, երբ նման մեքենաների օգտագործումը հանգեցրել է լուրջ սխալի, հարց է առաջանում. ինչն է տեղի ունեցածի պատճառը՝ սարքավորումների սկզբնական բարդությունը՝ թե՛ ոչ կոռեկտ ծրագրավորումը և ուսուցումը»¹⁷: Եվ ի՞նչ կետք է պատասխանատվություն կրի ինքնուսուցման հնարավորությամբ օժտված արհեստական բանականության արարքների համար, որը որոշում է կայացրել հանցանք համարվող գործողություններ/անգործություն կատարելու մասին:

Մարդու կողմից ստեղծված բոլոր օբյեկտներն ընկալվում են որպես սեփականության օբյեկտներ, հանցագործության առարկաներ, իրեր, որոնք չունեն իրավունքներ և օրինական

շահեր: Համապատասխանաբար, նրանք չեն կարող պատասխանատվություն կրել պատճառված վնասի համար և այլն¹⁸: Մինչդեռ ինքնավար, ինքնուսուցման ունակ արհեստական բանականությունն էապես տարբերվում է այլ երևույթներից ու օբյեկտներից, ինչն զգալիորեն բարդացնում է արհեստական բանականության պատասխանատվության հարցի լուծումը, որն ինքնուրույն է որոշում կայացրել հանցանք կատարելու մասին: Հանցանք կատարելու համար արհեստական բանականությանը քրեական պատասխանատվության ենթարկելու հարցն անքակտելիորեն կապված է նրան իրավասուբյեկտությամբ օժտելու հետ: Նշենք, որ իրավագիտության ոլորտում ներկայումս այս հարցի շուրջ ակտիվ քննարկում է ընթանում, որի առիթը Սաուդյան Արաբիայի Թագավորության հպատակության տրամադրումն է մարդանման ռոբոտ Սոֆիային, որը մշակել է Հոնկոնգի Hanson Robotics ընկերության մասնագետ Դ.Հենսոնը¹⁹:

Այսպես՝ Ն.Նեյանսը եզրակացնում է, որ արհեստական բանականությանն ինքնուրույն իրավասուբյեկտությամբ օժտելու գաղափարն անկայուն է, քանի որ նշված դեպքում մարդու իրավունքները տարածվելու են արհեստական բանականության վրա: Որպես փաստարկ՝ Ն.Նեյանսը օրինակ է ներկայացնում որոշ կենդանիների, որոնք «գիտակցություն ունեն և կարող են զգացմունքներ ունենալ», հետևաբար՝ դելֆիններին առաջարկում օժտել իրավասուբյեկտությամբ²⁰:

Ֆ.Վ. Ուժովը, ընդհակառակն՝ կարծում է, թե արհեստական բանականությունը՝ ծրագրային կարգավորումները անկախ, իրավական կարգավորման կարիք ունի, և առաջ է քաշում հետևյալ հարցերը. «Պետք է մտածել, թե ինչ իրավունքներով նա պետք է օժտված լինի: Ինչպես սահմանափակել դրանց ցանկը: Ինչից

¹⁶ Տե՛ս Radutniy O.E. Criminal Liability of the Artificial Intelligence // Problems of Legality. 2017. Iss. 138. էջ 132–141:

¹⁷ Տե՛ս Морхат П.М. Искусственный интеллект: правовой взгляд. Москва: Буки Веди, 2017. էջ 257:

¹⁸ Տե՛ս Radutniy O.E. Criminal Liability of the Artificial Intelligence // Problems of Legality. 2017. Iss. 138. էջ 132–141:

¹⁹ Ռոբոտը նախագծված է այնպես, որ ունակ լինի սովորելու և ընդօրինակելու մարդկանց վարքագիծը, ինչպես նաև՝ աշխատելու մարդկանց հետ: Սոֆիայի հետ բազմաթիվ հանդիպումներ են տեղի ունեցել ամբողջ աշխարհում: 2017 թվականի հոկտեմբերին նա դարձել է Սաուդյան Արաբիայի հպատակն ու առաջին ռոբոտը, որ ստացել է որևէ երկրի քաղաքացիություն: Այս մասին ավելի մանրամասն տեղեկատվություն հնարավոր է ստանալ՝ անցնելով ստորև առկա հղումներով՝ <https://tass.ru/ekonomika/4680400> (հասանելի է՝ 09.11.2020թ.):

²⁰ Տե՛ս Nevejans N. European Civil Law Rules in Robotics: Study / N. Nevejans. European Union, 2016. էջ 15 – URL: [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2016/571379/IPOL_STU\(2016\)571379_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2016/571379/IPOL_STU(2016)571379_EN.pdf) (հասանելի է՝ 09.11.2020թ.):

պետք է սկսել: Անշուշտ, պետք է սկսել իրավունքի նոր սուբյեկտի ստեղծումից»²¹:

Հարկ է նշել, որ Եվրամիությունում անօդաչու ավտոմեքենաների կիրառմամբ մի շարք ողբերգական միջադեպերից հետո սկսել են լայնորեն քննարկել ռոբոտներին իրավական կարգավիճակ տալու հնարավորությունը և, որպես հետևանք՝ էլեկտրոնային անձին (էլեկտրոնային էությանը) պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը: Այսպես՝ Եվրախորհրդարանի բանաձևը՝ Ռոբոտատեխնիկայի ոլորտում քաղաքացիական-իրավական կարգավորման հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 16-ի՝ Ռոբոտատեխնիկայի մասին քաղաքացիական իրավունքի նորմերի վերաբերյալ առաջարկությունների²² հետ, ուղղված է մարդկանց հասարակությունում ռոբոտների իրավական կարգավիճակի կարգավորմանը հետևյալ գործողությունների միջոցով՝

- ռոբոտատեխնիկայի և արհեստական բանականության հարցերով եվրոպական հատուկ գործակալության ստեղծում,
- խելամիտ ինքնավար ռոբոտի նորմատիվային սահմանման, ինչպես նաև՝ ռոբոտների բոլոր տարբերակների գրանցման համակարգի մշակում՝ դրանց դասակարգման համակարգի հետ,
- ռիսկերի կանխարգելման երաշխիքի ապահովման համար մշակողներին ներկայացվող պահանջների ձևակերպում,
- ռոբոտներ օգտագործող կամ դրանց կարիքն ունեցող ընկերությունների համար հաշվետվությունների նոր կառուցվածքի ստեղծում, որը կներառի տեղեկություններ ընկերության գործունեության տնտեսական արդյունքների վրա

նոբոտատեխնիկայի և արհեստական բանականության ազդեցության մասին²³:

Հատկանշական է, որ Եվրախորհրդարանի հիշյալ բանաձևում նշվում է ռոբոտների անօդար փոփոխությունը, որը կանխորոշում է ոչ միայն գործունեության առանձին տեսակներով զբաղվելու, այլև՝ ինքնուսուցման և ինքնավար, անկախ որոշումների ընդունման ունակությունը:

Գիտնականները, իրենց հերթին, արձանագրում են նման համակարգերի՝ պոլիմորֆային բնույթով կանխորոշված բարդությունն արհեստական ինտելեկտի աշխատանքի խափանման համար պատասխանատու սուբյեկտի որոշման հարցում^{24,25}: Անհրաժեշտ է համաձայնել Պ.Մ. Մորխատի կարծիքին, որ աննպատակահարմար է և ոչ իրավաչափ՝ պատասխանատվություն դնել արհեստական բանականության նախագծողների և մշակողների վրա, քանի որ արհեստական բանականությունն առանձին մշակված բարդ սարքավորումների և սարքերի համալիր է, որտեղ արհեստական բանականության վերջնական որոշման արդյունքը մեծապես կախված է դրա կիրառման իրադրությունից և դրա վրա դրված խնդիրներից²⁶:

Արհեստական բանականության ինքնուրույն որոշումների ընդունման հնարավոր ռիսկերն ու բացասական հետևանքները կանխելու նպատակով բանաձևի նախագծում առաջարկվում է խոր վերլուծություն կատարել նման հետևանքների վերաբերյալ, ինչի հիման վրա մշակել գործուն մեխանիզմներ արհեստական բանականության պատճառած վնասի ապահովագրության (անօդաչու ավտոմեքենաների օրինակով), վնասի ծածկման համար փոխհատուցման ապահովագրական ֆոնդերի ստեղծման, արհեստական բանականության շահագործման պարտադիր գրանցման ոլորտներում²⁷: Ենթադրվում է նաև

²¹ Տե՛ս Ужов Ф.В. Искусственный интеллект как субъект права / Ф.В. Ужов // Пробелы в российском законодательстве. 2017. №3. էջ 358:

²² Տե՛ս Delvaux M. Draft Report with recommendations to the Commission on Civil Law Rules on Robotics / European Parliament, 2016, էջ 10 – URL: [https://www.europarl.europa.eu/doceo/document/JURI-PR-582443_EN.pdf?redirect\(hասանելի է՝ 09.11.2020թ.\):](https://www.europarl.europa.eu/doceo/document/JURI-PR-582443_EN.pdf?redirect(hասանելի է՝ 09.11.2020թ.):)

²³ Տե՛ս Radutniy O.E. Criminal Liability of the Artificial Intelligence // Problems of Legality. 2017. Iss. 138. էջեր 132–141:

²⁴ Տե՛ս Prakken H. On How AI & Law Can Help Autonomous Systems obey the Law: a Position Paper // Artificial Intelligence Workshop on Artificial Intelligence for Justice. Hague: Univ. Amsterdam, 2016, էջ 42:

²⁵ Տե՛ս Del Castillo A.P. A Law on Robotics and Artificial Intelligence in the EU? // The Foresight Brief. 2017. № 2. էջ 10:

²⁶ Տե՛ս Морхат П.М. Искусственный интеллект: правовой взгляд. Москва: Буки Веди, 2017, էջ 257:

²⁷ Տե՛ս Delvaux M. Draft Report with recommendations to the Commission on Civil Law Rules on Robotics, European Parliament, 2016, էջ 22 – URL: [https://www.europarl.europa.eu/doceo/document/JURI-PR-582443_EN.pdf?redirect\(hասանելի է՝ 09.11.2020թ.\):](https://www.europarl.europa.eu/doceo/document/JURI-PR-582443_EN.pdf?redirect(hասանելի է՝ 09.11.2020թ.):)

ռոբոտի մեխանիզմին անվտանգության անջատիչի, ինչպես նաև՝ որոշակի ծրագրային ապահովման ինտեգրման հնարավորությունը՝ վթարային իրավիճակներում բոլոր գործընթացներն անհապաղ անջատելու նպատակով²⁸:

Այս կապակցությամբ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Եվրախորհրդարանի բանաձևում նկարագրված՝ ռոբոտներին իրավական կարգավիճակ տալու հնարավորությունը: Սակայն պետք է նշել, որ էլեկտրոնային անձի իրավական կարգավիճակը զգալիորեն տարբերվելու է ֆիզիկական անձի կարգավիճակից: Արհեստական բանականության իրավասուբյեկտության հարցում կարելի է առանձնացնել երեք առանցքային մոտեցում.

- արհեստական բանականությանը մարդկային իրավասուբյեկտությանը համապատասխան իրավասուբյեկտությամբ օժտելը,
- արհեստական բանականությանն իրավաբանական անձի իրավական կարգավիճակին համապատասխան իրավասուբյեկտությամբ օժտելը,
- արհեստական բանականությանը նոր սահմանափակ իրավասուբյեկտությամբ օժտելը^{29, 30}:

Մենք համակարծիք ենք որոշ գիտնականների այն կարծիքին, որ արհեստական բանականության իրավասուբյեկտությունը չի կարող հավասարեցվել մարդու իրավասուբյեկտությանը կամ իրավաբանական անձի իրավական կարգավիճակին: Իրավական կարգավիճակ ունեցող մարդը գործում է մտքի գործընթացների հիման վրա՝ առաջնորդվելով սուբյեկտիվ համոզմունքներով: Իրավաբանական

անձի գործողությունների հետևում նույնպես ֆիզիկական անձինք են, առանց որոնց իրավաբանական անձի գործունեությունն անհնար է: արհեստական բանականությունը, իր հերթին, գործում է ինքնուրույն՝ չունենալով գիտակցություն կամ զգացմունքներ³¹:

Դրա հետ մեկտեղ՝ մի շարք հեղինակներ նշում են, որ արհեստական բանականությունը կարող է օժտված լինել առանձին իրավունքներով, որոնք տարբերվում են իրական ֆիզիկական անձի իրավունքներից^{32,33}: Նշված դեպքում տեղին է խոսել իրավաբանական ֆիզիցիայի մասին, որի դեպքում արհեստական բանականության հատուկ իրավասուբյեկտությունը կարող է ընկալվել որպես իրականությունից տարբերվող ոչ ստանդարտ իրավական դրություն³⁴: Ինչպես հայտնի է՝ իրավական ֆիզիցիաների գոյությունը պայմանավորված է իրավական բացերը հաղթահարելու և հասարակական հարաբերություններում անորոշությունը վերացնելու անհրաժեշտությամբ³⁵: Կարծում ենք՝ նման որոշումը կարող է վերացնել այսօր գոյություն ունեցող մի շարք իրավական սահմանափակումներ, որոնք խոչընդոտում են արհեստական բանականության ակտիվ ներգրավումն իրավական հարթությունում:

Սակայն գոյություն ունեցող իրավական իրականության շրջանակներում իրավունքի ոչ բոլոր ճյուղերում է հնարավոր արհեստական բանականությանն օժտել իրավասուբյեկտությամբ, նույնիսկ սահմանափակ:

Այսպես՝ հայրենական քրեական օրենսդրության շրջանակներում արհեստական բանականությանն իրավունքների և պարտականությունների ամբողջությամբ օժտելը և, որպես հետևանք՝ նրան իրավունքի սուբյեկտ ճանա-

²⁸ S՛նու Radutniy O.E. Criminal Liability of the Artificial Intelligence // Problems of Legality. 2017 Iss. 138, էջ 132–141:

²⁹ S՛նու Robertson J. Human Rights vs. Robot Rights: Forecasts from Japan // Critical Asian Studies. 2014. Vol. 46, iss. 4. էջ 593:

³⁰ S՛նու Muzyka K. The Outline of Personhood Law Regarding Artificial Intelligences and Emulated Human Entities // Journal of Artificial General Intelligence. 2013, Vol.4, iss. 3. էջ 168:

³¹ S՛նու Nevejans N. European Civil Law Rules in Robotics: Study, European Union, 2016. էջ 15 – URL: https://www.europarl.europa.eu/doceo/document/JURI-PR-582443_EN.pdf?redirect (հասանելի է՝ 09.11.2020թ.):

³² S՛նու Asaro P.M. Robots and Responsibility from a Legal Perspective // Proceedings of the IEEE. 2007, Vol.4, iss.14. էջ 3:

³³ S՛նու Hood K. Artificial Intelligence and the Legal Profession / Horizon Scanning. 2018, էջ 11 – URL: <https://www.lawsociety.org.uk/topics/blogs/will-lawyers-be-replaced-by-robots> (հասանելի է՝ 09.11.2020թ.):

³⁴ S՛նու Курсова О.А. Юридические фикции современного российского права: сущность, виды, проблемы действия // Проблемы юридической техники: сб. ст. / под ред. В.М. Баранова. Нижний Новгород, 2000, էջ 450–459:

³⁵ S՛նու Давыдова М.Л. Проблемы понятия и классификации правовых фикций / Вестник Волгоградского государственного университета. Сер. 5, Юриспруденция. 2009, № 11. էջ 17–23:

չելն անհնար է: ՀՀ քրեական օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է սույն օրենսգրքով սահմանված տարիքի: Գործող քրեական օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ իրավաբանական անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության: Սակայն այս առումով այլ մոտեցում է որդեգրել ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը³⁶. 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է մեղսունակ ֆիզիկական անձը, ում տասնվեց տարին լրացել է հանցանք կատարելու պահին, ինչպես նաև՝ իրավաբանական անձը³⁷:

Ն.Ս.Տազանցը նշել է, որ հանցավոր արարք հասկացությունը ներառում է երկու հանգամանք. արտաքին՝ օրենքով արգելված ոտնձգություն, և ներքին՝ մեղավորությունը կամ հանցավոր կամքը³⁸: Այսօր քրեական իրավունքի դոկտրինում սուբյեկտիվ կողմի ներքո ընդունված է հասկանալ անձի կողմից հասարակական վտանգավոր արարք կատարելիս առկա գործոնների ներքին հոգեբանական ամբողջությունը, այսինքն՝ անձի հոգեկան գործունեությունը, որն անմիջականորեն կապված է հանցանքի կատարման հետ³⁹: Այս դիտանկյունից՝ բացակայում է հանցակազմի պարտադիր տարր համարվող սուբյեկտիվ կողմը:

Նման դիրքորոշում ունեցողներից է Հ. Հավլին, ով առաջիններից էր, որ գիտական շրջանակում բարձրացրեց արհեստական բանականության քրեական պատասխանատվության

հարցը: Նա նշում է, որ հանցագործության պարտադիր տարրերն են հանցավոր վարքագիծը՝ *actus reus*-ը, և ներքին (հոգեկան) տարրը՝ *mens rea*-ն: Արհեստական բանականության նկատմամբ մենթալ տարրի սահմանումն անհնար է, հետևաբար՝ անհնար է արհեստական բանականության կողմից հանցագործության ճանաչումը⁴⁰: Ընդ որում՝ ինչպես արդարացիորեն նշում են Հ.Հավլին և Ջ.Քինգսթոնը՝ անգլոսաքսոնական իրավունքի համակարգում առկա են ծանր ոտնձգություններ, որոնց նկատմամբ *mens rea*-ի սահմանումը պարտադիր չէ, և միանգամայն արդարացված է, որ նշված հանգամանքներում արհեստական բանականությունը կարող է ճանաչվել ոտնձգության սուբյեկտ⁴¹:

Հ.Հավլին իրավացիորեն հարց է տալիս հանցագործություն կատարած արհեստական բանականության նկատմամբ քրեական պատասխանատվության միջոցների կիրառելիության և պատժի նպատակի իրականացման մասին⁴²: ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև՝ կանխել հանցագործությունները: Հանցանք կատարած արհեստական բանականության ուղղման նպատակով պատժի ավանդական տեսակների կիրառման արդյունավետության վերաբերյալ հիմնավոր կասկածներ են առաջանում: Այսպիսի կասկածներ առկա են նաև Նախագծի վերաբերելի դրույթների մասով. Նախագծի 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի նպատակներն են վերա-

³⁶ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.parliament.am/draft_docs/7/K-634.pdf (հասանելի է՝ 09.11.2020թ.):

³⁷ Նպատակ չունենալով սույն հոդվածի շրջանակներում ներկայացնելու իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության առանձնահատկությունները, այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ իրավաբանական անձանց համար քրեական պատասխանատվություն նախատեսելու հանգամանքը բոլոր քննարկումների տեղիք է տվել քրեական իրավունքի տեսության մեջ: Ընդիմախոսները մշտապես շեշտել են քրեական իրավունքի հիմնական սկզբունքները՝ ըստ մեղքի պատասխանատվության և անձնական պատասխանատվության սկզբունքները:

³⁸ Տե՛ս Таганцев Н.С. Русское уголовное право. Часть Общая. В 2 т. Т.1. Тула: Автограф, 2001, էջ 407:

³⁹ Տե՛ս Papog A.И. Квалификация преступлений по субъективным признакам. Санкт-Петербург: Юрид. центр Пресс, 2003, էջ 207:

⁴⁰ Տե՛ս Hallevy G. The Criminal Liability of Artificial Intelligence Entities, from Science Fiction to Legal Social Control // Akron Intellectual Property Journal. 2010. Vol. 4, iss. 2, էջ 178:

⁴¹ Տե՛ս նույն տեղում, էջ 191-192:

Տե՛ս նաև Kingston J.K.C. Artificial Intelligence and Legal Liability // Research and Development in Intelligent Systems XXXIII: Incorporating Applications and Innovations in Intelligent Systems XXIV. Cham: Springer, 2016. էջ 276:

⁴² Տե՛ս Hallevy G. The Criminal Liability of Artificial Intelligence Entities, from Science Fiction to Legal Social Control // Akron Intellectual Property Journal. 2010. Vol. 4, iss. 2. էջ 195:

կանգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականցնել պատժի ենթարկված անձին ու կանխել հանցագործությունները:

Սակայն որոշ իրավագետներ պնդում են արհեստական բանականության քրեական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտության մասին: Նրանց կարծիքով՝ արհեստական բանականության համար պետք է նախատեսել հատուկ պատիժներ, ինչպիսիք են ապաստիվացումը, վերածրագրավորումը կամ հանցագործի կարգավիճակ տալը, ինչը նախագուշացում կծառայի իրավահարաբերությունների բոլոր մասնակիցների համար⁴³: Կարծում ենք՝ նման որոշումն ապագայում կարող է նվազագույնի հասցնել արհեստական բանականության կիրառման կրիմինոլոգիական ռիսկերը⁴⁴:

Նույն կարծիքին է նաև Ֆ.Վ.Ուսովը, ով կարծում է, թե «արհեստական բանականության վերադաստիարակումը» կարող է իրականացվել միայն դրա լիարժեք վերածրագրավորման միջոցով, ինչը կարելի է որոշակի իմաստով համեմատել մարդու նկատմամբ լոբոտոմիայի հետ, այսինքն, արհեստական բանականության հատկությունների բացարձակ և, հավանաբար, անդառնալի փոփոխություն: Երկրորդ ճանապարհը արհեստական բանականության վերամշակումն է: Այս կամ այն մեթոդի առաջնայնության հարցը պետք է քննարկվի արհեստական բանականության արժեքի գնահատման, նրա կատարած «սխալների» քանակի, տեխնիկական ճանապարհով այդ սխալների ու թերությունների «անցավ» վերացման հնարավորության շրջանակներում⁴⁵:

Մենք համակարծիք ենք Ի.Վ.Պոնկինին և Ա.Ի. Ռեդկինային այն հարցում, որ «արհեստական բանականության իրավական ապահովումը պետք է զարգանա հետևողականորեն (թեև ինտենսիվ)՝ հաշվի առնելով նախնական ուսումնասիրությունը, բոլոր ռիսկերի որոնք հնարավոր է ենթադրել տեխնոլոգիաների և

արհեստական բանականության օգտագործման զարգացման ներկա առանձնահատկությունները: Արհեստական բանականության առաջ զարգացումը մոտ ապագայում «կպահանջի իրավունքի ոլորտների և ինստիտուտների վերանայում (իրավական պատասխանատվության ռեժիմ, հարկման ռեժիմ, հսկողության և հաշվետվողականության կարգավորում, մտավոր սեփականության իրավունքների կարգավորում, «էլեկտրոնային առևտրի» ռեժիմ (առևտրային բոտերի գործունեության մասով)»⁴⁶:

Ամփոփելով շարադրվածը՝ պետք է եզրակացնել, որ գալիք 10-15 տարիներին արհեստական բանականությամբ համակարգերի և սարքերի զարգացման տեմպերն իրավունքի բոլոր ճյուղերի ընդհանուր վերանայման ու վերամշակման անհրաժեշտություն կառաջացնեն: Մասնավորապես՝ սեփականության ինստիտուտները, հարկման ռեժիմը և այլն, ինչը, ի վերջո՝ կհանգեցնի ինքնավար արհեստական բանականությանը որոշակի իրավունքների և պարտականությունների հավաքակազմով օժտելու հայեցակարգային խնդրի լուծման անհրաժեշտությանը: Ընդ որում՝ մեր կարծիքով՝ արհեստական բանականությամբ համակարգերը կպահանջեն քրեական իրավունքի ինքնուրույն ինստիտուտի ստեղծում՝ եզակի կառուցվածքով և բովանդակությամբ, որը կտարբերվի ավանդական մարդակենտրոն մոտեցումից: Նշված ինստիտուտի շրջանակներում նպատակադիր է նախատեսել արհեստական բանականության տեխնիկական և այլ բնութագրերի սիմբիոզի վրա հիմնված, սուբյեկտի ավանդական ընկալումից տարբերվող հասկացություն, ինչպես նաև՝ պատասխանատվության այլընտրանքային տեսակներ, ինչպիսիք են ապաստիվացումը, վերածրագրավորումը կամ հանցագործի կարգավիճակ տալը, ինչը նախագուշացում կլինի իրավահարաբերությունների բոլոր մասնակիցների համար:

⁴³ Stü Kopfstein J. Should Robots Be Punished For Committing Crimes:

⁴⁴ Stü Бегишев И.Р., З.И. Хисамова Криминологические риски применения искусственного интеллекта // Всероссийский криминологический журнал. 2018. Т. 12, №6. Стр 767–775, DOI:10.17150/2500-4255.2018.12(6).767-775 https://www.researchgate.net/publication/330313981_Criminological_Risks_of_Using_Artificial_Intelligence (հասանելի է՝ 09.11.2020թ.):

⁴⁵ Stü Ужов Ф.В. Искусственный интеллект как субъект права / Пробелы в российском законодательстве. 2017. №3, Стр 360:

⁴⁶ Stü Морхат П.М. К вопросу о правосубъектности «электронного лица», Юридические исследования. 2018. №4. Стр 1–8:

ԴԱԿԻԹ ՕՀԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

«ԳՐԱՎԱՌՈՒՄ ԿՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼԸ» ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

17.06.2016թ. ՀՀ քրեական օրենսգրքում կատարվեց լրացում, և նախատեսվեց նոր հանցակազմ՝ գրավառուին վնաս պատճառելը (184.1-րդ հոդված): Այս հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ գրավ դրված գույքը դիտավորությամբ ոչնչացնելը, թաքցնելը, օտարելը, ինչպես նաև՝ վնասելը կամ որևէ այլ կերպ ոչ պիտանի դարձնելը, ինչով խոչընդոտվել է գրավառուի գույքային իրավունքի իրականացումը, և նրան պատճառվել է Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկը գերազանցող գումարի չափով վնաս:

Նմանատիպ հանցակազմի ընդունման համար հիմք հանդիսացավ ՀՀ-ում առկա իրավիճակը: Մասնավորապես՝ ըստ նախագծի հեղինակների՝ Հայաստանի բանկերում գրավի առարկա հանդիսացող գույքի հետ կատարված գեղծարարությունների՝ 2013-2015 թվականների վիճակագրության ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ վարկառուներն սկսել են հստակ գիտակցել, որ գրավի առարկա հանդիսացող գույքի ոչնչացման, վնասման, անպիտան դարձնելու, օտարելու կամ գրավառուին վնաս հասցնող նմանատիպ՝ դիտավորությամբ կատարված գործողությունները չունեն իրավական հետևանքներ:

Ընդ որում՝ այդ դեպքերի ինչպես քանակը, այնպես էլ պատճառով ու վնասի գումարային ծավալը տարեցտարի հստակ աճելու միտում են արձանագրում: Այդ դիտավորությամբ կատարված արարքների պատճառով վնաս կրած վարկատուները չունեն իրենց օրինական շահերը պաշտպանելու ոչ մի մեխանիզմ, քանի որ՝

1. քաղաքացիաիրավական դաշտում՝ գրավի

վի առարկան արդեն գոյություն չունի կամ վնասված է, հետևաբար՝ դրանով չի կարող պաշտպանվել վարկառուի օրինական շահը, իսկ՝

2. քրեական օրենսգրքը չի նախատեսում որևէ պատասխանատվություն այդ արարքների համար¹:

Այս նախագծի հեղինակները ՀՀ-ում առկա իրավիճակը բնութագրում էին որպես **ֆինանսական համակարգի կայունությանը (SIC)** սպառնացող հանրային վտանգ: Մասնավորապես, ըստ նրանց՝ այս իրավիճակը ֆինանսական համակարգի համար էական ռիսկեր է ստեղծում, քանի որ հեշտացնում է գրավի առարկայի նկատմամբ դիտավորությամբ գեղծարարություններ կատարելը՝ առավել ևս հաշվի առնելով վերը նշված իրավական հետևանքների բացակայության հանգամանքը:

Մասնավորապես՝ գրավ դրված գույքը պարտավորության ապահովման միջոց է: Ի տարբերություն այլ գույքի՝ գրավ դրված գույքի ոչնչացման, վնասման, օտարման, անպիտան դառնալու պարագայում վնաս է կրում ոչ միայն գրավառու ֆինանսական կազմակերպությունը այլ նաև՝ հանրությանը, քանի որ.

1. Ֆինանսական կազմակերպությունը վարկերը տրամադրում է հանրությունից ներգրավված միջոցներով, օրինակ՝ ավանդներով: Հետևաբար՝ եթե ֆինանսական կազմակերպությունը հետ չի ստանում իր տրամադրած վարկը, ապա վտանգում է իր ավանդատուի գումարն ու իր կայունությունը:

2. Եթե նման իրավիճակը շարունակվի, ապա գրավով ապահովված վարկերի տրամադրումը կվերածվի ռիսկային պրոդուկտի, իսկ ռիսկային պրոդուկտների տոկոսադրույքները

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 121, 2021

¹ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, Կ-886²-28.10.2015, 07.12.2015-ՊԻ-010/0 <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=7867&Reading=0>

էականորեն բարձր են: Այսինքն՝ հասարակության անդամները ստիպված կլինեն ավելի թանկ վարկեր վերցնել ու ավելի շատ վճարել:

3. Նույնիսկ մեկ վտանգված ֆինանսական կազմակերպության առկայությունը Հայաստանում անխուսափելիորեն նշանակում է ֆինանսական համակարգի ընդհանուր անկայունություն: Մինչդեռ երկրի ֆինանսական համակարգի կայունության պահպանությունը գերակա հանրային շահ է: Պետությունը դրական պարտավորություն ունի պաշտպանելու այդ հանրային շահը²:

Բացի այս հիմնավորումներից՝ նախագծի հեղինակներն ընդգծում էին նաև երրորդ անձանց իրավունքները պաշտպանելու՝ պետության դրական պարտավորությունները: Գրավի իրավունքը պետության կողմից ճանաչված ու պաշտպանվող՝ պարտավորությունների ապահովման միջոց է ու նախապատվության իրավունք:

Մասնավորապես՝ օրենսդիրը սահմանել է գրավի ինստիտուտ, նախատեսել գրավի իրավունքի պետական գրանցման ընթացակարգ: Դա նշանակում է, որ հասարակության յուրաքանչյուր անդամ ողջամտորեն իրավունք ունի վստահ լինելու, որ, եթե ինքն ունի գրավի իրավունք, իր նկատմամբ պարտավորությունների կատարումը երաշխավորված է պետության կողմից գրանցված գրավի իրավունքով:

Ավելին՝ գրավի իրավունք գրանցած յուրաքանչյուր անձ ունի նախապատվության իրավունք բոլոր այլ պարտատերերի հանդեպ, այդ թվում նաև՝ պարտատիրոջ սնանկության դեպքում: Հետևաբար՝ գրավի իրավունք գրանցելով, անձը ողջամտորեն իրավունք ունի վստահ լինելու, որ իր նախապատվության իրավունքը պաշտպանված է: Մինչդեռ, գործնականում, չնայած պետությունը հայտարարել ու սահմանել է այսպիսի ընթացակարգ ու երաշխիքներ, սակայն դրանց պաշտպանության արդյունավետ մեխանիզմները բավարար չեն: Հետևաբար՝ պետությունն ունի դրական պարտավորություն՝ արդյունավետ պաշտպանության մե-

խանիզմ ապահովելու, որը ՀՀ իրավական համակարգի պայմաններում քրեական պատասխանատվության ներդրումն է³:

Ընդհանրացնելով քննարկվող օրենսդրական լրացման հայեցակարգային մոտեցումները՝ հանգում ենք այն եզրակացության, որ սույն նախագծի նպատակն էր *ապահովել քաղաքացիական շրջանառության կայունությունն ընդհանրապես և ֆինանսական, դրամավարկային հարաբերությունների կայունությունը՝ մասնավորապես*:

Սակայն, չգիտես ինչու, այս նպատակներին հասնելու համար նախագծի հեղինակները գրավառուին վնաս պատճառելը որպես հանցակազմ նախատեսեցին է ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ գլխում, այսինքն՝ սեփականության դեմ ուղղված հանցագործություններ գլխում⁴: Քրեական օրենսգրքի այս գլխում հիմնականում նախատեսված են երկու տեսակի հանցակազմեր.

1. Երբ ուրիշի գույքը (սեփականությունը) մտնում է հանցավորի ապօրինի տիրապետման տակ, այսինքն՝ գործ ունենք հափշտակությունների հետ: Ընդ որում՝ այդ հափշտակություններն ունեն տարբեր դրսևորումներ. մի դեպքում՝ լինում է բացահայտ (կողոպուտ, 176-րդ հոդված), մեկ այլ դեպքում՝ գաղտնի (գողություն, 177-րդ հոդված), կարող է զուգորդվել կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ գործադրելու սպառնալիքով (ավազակություն, 175-րդ հոդված), կարող է կատարվել խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով (խարդախություն, 17-րդ հոդված) և այլն: Հափշտակություններն ակնհայտորեն ուղղված են սեփականության իրավունքի դեմ, զրկելով սեփականատիրոջը գույքից՝ զրկում ենք նրան իր իրային իրավունքներն իրացնելու հնարավորությունից:

2. Այս դեպքում գույքը կարող է և դուրս չգալ սեփականատիրոջ տիրապետումից, սակայն վտանգի տակ է դրվում ինքնին գույքը: Խոսքը ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնաս-

² Տես նույն տեղը:

³ Տես նույն տեղը:

⁴ Նշենք, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծով դարձյալ այս հանցակազմը նախատեսված է սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններ գլխում (գլուխ 31, հոդված 249):

սելու մասին է, ինչը կարող է լինել և՛ դիտավորյալ (185-րդ հոդված), և՛ անզգուշությամբ (186-րդ հոդված): Այս դեպքում գուցե գույքը սեփականատիրոջ տիրապետումից դուրս չի գալիս, սակայն ակնհայտորեն խախտվում են օգտագործման, տնօրինման իրավագործությունները:

Վերլուծելով այս գլխում ամրագրված հանցակազմերը՝ հանգում ենք այն եզրակացության, որ հանցավորի գործողությունները պետք է խախտեն սեփականության իրավունքը: Մի դեպքում սեփականության իրավունքը կարող է էականորեն վնասվել, մեկ այլ դեպքում՝ սեփականության իրավունքը կարող է ամբողջությամբ վերանալ: Մի բան ակնհայտ է, որ այս գլխում պետք է նախատեսվի այնպիսի հանցակազմ, որն ուղղված է սեփականության իրավունքի դեմ:

Արդյոք մեր կողմից վերլուծվող հանցակազմը հետապնդում է նման նպատակ: Այս հանցակազմում, իհարկե, խոսվում է գույք ոչընչացնելու կամ վնասելու մասին (դրանք ընդամենը հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումներ են), սակայն այդ ամենն իզոլացված, առանց հոդվածում նշված մյուս տարրերի, հանցակազմ չեն ձևավորում: Վերջինիս համար նաև պետք է որ խոչընդոտվեն գրավառուի գույքային իրավունքները, և նրան վնաս պատճառվի: Պետք չէ անգամ մանրամասն վերլուծել հանցակազմի տարրերը, հոդվածի վերնագիրն արդեն իսկ բավարար է եզրակացնելու, որ այստեղ գործ ունենք գրավառուի շահերի խախտման հետ: Սակայն արդյոք գրավառուն համարվում է սեփականատեր: Այլ կերպ ասած՝ արդյոք գրավառուի շահերի խախտման դեպքում, նրան վնաս պատճառելու դեպքում, խախտվում է սեփականության իրավունքն ընդհանրապես, և մասնավոր սեփական հարաբերությունը՝ մասնավորապես:

Այս հարցերի պատասխանն ստանալու համար պետք է ներկայացնել գրավի իրավունքի և սեփականության իրավունքի հարաբերակցությունը: Իրականում դա այդքան էլ պարզ

խնդիր չէ, որքան առաջին հայացքից թվում է: Խնդիրն այն է, որ գրավի իրավունքի ծագման և պատկանելիության մասով առկա է խորը դոկտրինալ բանավեճ, որն աչքի է ընկնում ընդգծված դրախնդով: Իսկ եթե ավելի պարզ, ապա մինչ օրս քննարկման հարց է հետևյալը՝ գրավը համարվում է իրային իրավունք, թե՛ պարտավորության կատարման ապահովման միջոց:

Ներպետական օրենսդրական մակարդակով գրավի իրավունքը նախատեսված է քաղաքացիական օրենսգրքի չորրորդ բաժնում՝ *Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ*⁵: Գրավի ինստիտուտին նվիրված է 46 հոդված (226-272):

Գ. Ֆ. Շերշենևիչն առանձնացնում է գրավի իրավունքը բնութագրող երեք հատկանիշ.

1. Գրավի իրավունքն իրային իրավունք է, որն արտահայտվում է այն փաստում, որ, ունենալով իրը որպես օբյեկտ՝ վերջինս ամենուր հետևում է իրեն՝ նրա նկատմամբ սեփականության իրավունքից անկախ, որը կարող է փոխանցվել մեկ անձից մյուսին:

2. Գրավի իրավունքն օտար իրի նկատմամբ իրավունք է, քանի որ միայն ուրիշին պատկանող իրի արժեքը կարող է ծառայել որպես պահանջի իրավունքի իրավունքի ապահովում: Ուստի գրավի առարկա չի կարող լինել սեփական (պարտատիրոջ) իրը, իսկ եթե պարտատերը սեփականության իրավունք է ձեռք բերել իր կողմից գրավով ծանրաբեռնված այդ իրի նկատմամբ, ապա գրավի իրավունքը դադարում է.

3. Քանի որ գրավի նպատակը պահանջի իրավունքի ապահովման մեջ է, ուստի գրավի իրավունքը լրացուցիչ հարաբերություն է, որը ենթադրում է այլ պարտավորական հարաբերության առկայությունը⁶:

Գ. Ֆ. Շերշենևիչը որոշակի ուշադրություն է դարձրել նաև գրավի իրավունքի այն առանձնահատկություններին, որոնք տարբերում են դրան այլ իրային իրավունքներից, որ, ի տարբերություն այլ իրային իրավունքների՝

⁵ Ինչպես նկատում է պրոֆեսոր Ս. Կ. Բարսեղյանը՝ գրավի իրավունքը «Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ» բաժնում զետեղելը պայմանավորված է օրենսդրի կողմից, անհիմն կերպով, Ղազախստանի Հանրապետության քաղ. օր-ի կրկնօրինակմամբ, ինչը փաստորեն վերադարձ է 1923թ. ՀՍՍՀ քաղ. օր.: Տե՛ս Բարսեղյան Ս. Կ. ՀՀ քաղաքացիական իրավունք, Երևան, 2000, էջ 457:

⁶ Տե՛ս Шершеневич Г. Ф. Учебник гражданского права (по изданию 1907) М., 1995, էջ 250:

գրավի իրավունքն ինքնուրույն գոյություն ունենալ չի կարող, այլ կախված է հիմնական պարտավորության գոյությունից: Սակայն, ըստ նրա՝ գրավի իրավունքը սուբյեկտին տալիս է անհամեմատելիորեն ավելի լայն իրավասություններ, քան այլ իրային իրավունքները: Այսինքն՝ գրավը կարող է սեփականատիրոջը զրկել նրան պատկանող սեփականության իրավունքից⁷:

Պետք է նկատել, սակայն, որ գրավը որպես իրային իրավունք էապես տարբերվում է սեփականության, սերվիտուտի և այլ իրային իրավունքներից: Բավարար է միայն այն փաստարկը, որ, ի տարբերություն սեփականատիրոջից կամ այլ իրային իրավունքի սուբյեկտներից՝ գրավառուն գրավի առարկայի նկատմամբ երկարատև, համաչափ, անմիջականորեն և սեփական հայեցողությամբ ներգործելու իրավասությունից չի օգտվում:⁸ Գրավի տարբերությունը պարտավորությունների ապահովման մյուս միջոցներից այն է, որ գրավը պարտավորահրավական բնույթի իրային-իրավական ապահովման միջոց է⁹: Ինչպես շատ դիպուկ նկատում է Վ. Մ. Խվոստովը՝ գրավի «իրայնությունը» գոյություն ունի սոսկ այնքանով, որքանով ի վիճակի է ապահովելու հիմնական պարտավորությունը¹⁰: Ամբողջությամբ ցանկանում ենք համաձայնել գրավի մասին Մ. Վ. Խվոստովի Mutatis Mutandis տեսակետին, քանզի գրավը իրային իրավունք չէ այն չափով, որքանով որ, օրինակ՝ սեփականության կամ լրիվ տնտեսվարման իրավունքն է: Եվ որպես լրացուցիչ, գույքային բնույթի ապահովման միջոց՝ գրավի իրավունքը չի կարող ծագել պարտավորական իրավունքից շուտ և չի կարող շարունակել իր գոյությունը, երբ դադարել են պարտավորական հարաբերությունները:

Մեր այս հետևությունները հիմք են տալիս ենթադրելու, որ գրավն իր բոլոր իրային հատկանիշներով հանդերձ չի կարող հավասարվել սեփականության իրավունքին: Եթե նույնիսկ գրավն ունի իրային բնույթ, ապա, միևնույն է՝ հանդես է գալիս որպես սահմանափակ իրա-

յին իրավունք: Եթե գրավը ծագում է սեփականությունից կամ ուղեկցում է դրան, ապա միևնույն է՝ չի կարող փոխարինել սեփականության իրավունքը: Եթե նույնիսկ այս հանցակազմը պաշտպանում է իրային իրավունք կրողի շահեր, դա չի նշանակում, թե պաշտպանվում են սեփականության իրավահարաբերություններ: Հետևաբար՝ ապրիորի սխալ է այս հանցակազմը նախատեսել սեփականության դեմ ուղղված հանցագործություններ գլխում:

Ինչպես քաղաքացիական իրավունքի ցանկացած ինստիտուտ, այնպես էլ գրավը կիրառվում է որոշակի ոլորտներում: Այսպես՝ գրավը կիրառվում է թե՛ վարկային հարաբերությունների, թե՛ վարկային հարաբերությունների հետ չկապված ոլորտներում:

Գրավի կիրառման վարկային հարաբերությունների ոլորտի մասին խոսելիս պետք է նշել, որ գրավով հիմնականում ապահովվում է վարկային կամ փոխառության պայմանագրից բխող պարտավորությունների կատարումը: Գրավը՝ որպես բազմադարյա պատմություն ունեցող պարտավորությունների ապահովման միջոց, կիրառվում է ինչպես քաղաքացիների, նրանց և իրավաբանական անձանց, այնպես էլ՝ իրավաբանական անձանց միջև վարկային հարաբերություններում: Սակայն պետք է նշենք, որ գրավն առավել լայն տարածում և կիրառություն ունի բանկերի և այլ վարկային կազմակերպությունների հարաբերություններում:

Ինչպես գիտենք՝ բանկային գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում վարկավորումը, ուստի, ելնելով վարկերի վերադարձնելիության ապահովման սկզբունքից՝ բանկերը և այլ վարկային կազմակերպությունները լայնորեն կիրառում են գրավի ինստիտուտը: Այսպիսով՝ գրավը հիմնականում ապահովում է վարկային պարտավորությունների կատարումը:

Գրավի՝ գլխավորապես վարկային պարտավորությունների ապահովման միջոց լինելու

⁷ Տե՛ս նույն տեղը:

⁸ Տե՛ս Брагинский М. И., Витрянский В. В. Договорное право, Книга первая, М., Статут, 1997, էջ 399:

⁹ Տե՛ս Гражданское право. Под ред. А. Г. Калинина, А. И. Масляева, М., 1997, էջ 135:

¹⁰ Տե՛ս Хвостов В. М. Система римского права Учебник, М., Спарк, 1996, էջ 47:

հանգամանքը, ինչպես վերը նշեցինք, շեշտում էին նաև հանցակազմի նախագծի հեղինակները: Այսինքն՝ այս հանցակազմի թիվ մեկ նպատակն ի սզկբանե ֆինանսա-վարկային հարաբերությունների կայունությունը և պաշտպանությունն էր:

Համադրելով այս բոլոր վերլուծությունները՝ կարող ենք հանգել մեկ հստակ հետևության. **ավելի ճիշտ կլիներ այս հանցակազմը նախատեսել փնտրեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ գլխում:** Մասնավորապես՝ առաջարկում ենք ուժը կորցրած ճանաչել քրեական օրենսգրքի 184.1-րդ հոդվածը և հանցակազմը նույն բովանդակու-

թյամբ նախատեսել քրեական օրենսգրքի 191.1 հոդվածով:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե այն վերլուծությունները և մտահանգումն ինքնանպատակ էին և խնդիրը սուկ տեխնիկական է: Սակայն հենց այս հարցի կարգավորումից են առաջանում մի շարք իրավահարաբերություններ, բխեցվում են տարատեսակ իրավական հետևանքներ, որոնք կքննարկենք մեր հետագա աշխատություններում (օրինակ՝ այս հստակեցումը կօգնի որոշակիացնել հանցակազմի սուբյեկտի հարցը, հնարավորություն կտա կոնկրետացնելու հոդվածում նշված վնասների հարցը և այլն):



ՀՈՒՓՍԻՄԵ ԽԱՉԱՏՐՅԱԼ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ի. գ. թ., ոստիկանության փոխգնդապետ

ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐ ԽՄԲԵՐԻՆ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Մեր նախկին հետազոտություններում՝ անդրադարձել ենք և խոսել անչափահասների հանցավոր խմբերին պրոֆիլակտիկ հաշվառման վերցնելու և խմբային պրոֆիլակտիկա ներդնելու հարցերին: Կարծում ենք՝ դրա անհրաժեշտությունն արդիական է, քանի որ, ինչպես ցույց է տալիս փորձը՝ ժամանակի ընթացքում անչափահասների հանցավոր խմբերը ձեռք են բերում նոր որակներ ու ձևեր, ինչը նույնիսկ հավանական է դարձնում դրանց կազմակերպչի վերաճումը: Այսինքն՝ մենք, ճիշտ և ժամանակին ներգործելով անչափահասների հանցավոր խմբերի վրա, կհակազդենք նաև կազմակերպված հանցավորությանը:

Մինչ օրս Հայաստանի Հանրապետությունում անչափահասների խմբային հանցավորության կանխարգելումը կառուցվել է անհատական պրոֆիլակտիկայի շուրջ, սակայն կարծում ենք, որ խմբի կազմում հանցանք կատարած անչափահասները հանցավոր վարքագիծ դրսևորում են և վտանգավոր են հենց խմբի կազմում: Հետևաբար՝ կանխարգելիչ գործունեությունը պետք է ուղղված լինի ոչ միայն խմբի անչափահաս անդամներին առանձին-առանձին, այլ նաև խմբին՝ ամբողջությամբ վերցրած:

Իսկ հնարավոր է արդյոք անչափահասների հանցավոր խմբերին հաշվառման վերցնել և ինչպե՞ս: Պատասխանում ենք՝ այո: Ինչպես ցույց են տալիս մեր իրականացրած հետազոտության արդյունքները՝ անչափահասների հանցավոր խմբերը ձևավորվում են կամ

իրենց բնակության կամ ուսման վայրերում, հազվադեպ՝ ժամանցի վայրերում: Կարծում ենք, որ հաշվառման վերցնելը հնարավոր է և անհրաժեշտ է ըստ խմբերի ձևավորման վայրերի ոստիկանության տարածքային բաժինների անչափահասների և ընտանիքում բռնության կանխարգելման գործերով բաժանմունքներում:

Անչափահասների հանցավոր խմբի գոյատևման փաստը հայտնաբերելուց հետո տեսուչը, խմբի բոլոր անդամներին բացահայտելով, պարտադիր պետք է վերցնի պրոֆիլակտիկ հաշվառման՝ նրանց նկատմամբ պրոֆիլակտիկ ներգործություն իրականացնելու նպատակով: Պրոֆիլակտիկ այդպիսի ներգործությունը պետք է ենթադրի կանխարգելիչ, վերահսկողական միջոցառումների համակարգ, որում ներգրավված կլինեն ոչ միայն անչափահասների գործերով տեսուչները, այլև ինչպես ոստիկանության մյուս ստորաբաժանումների, այնպես էլ իրավապահ մյուս մարմինների ծառայողները և առհասարակ բոլոր շահագրգիռ մարմիններն ու անձինք: Ընդ որում՝ պետք է օգտագործել և՛ ընդհանուր և՛ անհատական պրոֆիլակտիկայի հնարավորությունները: Առհասարակ՝ կոնկրետ անհատին հասցեագրված ներգործությունն առավել արդյունավետ է ազդում նրա բարոյահոգեբանական որակների վրա՝ հետ պահելու այս կամ այն պահին սխալ քայլ կատարելուց, ազդում է դրական հակումների և հետաքրքրությունների զարգացման, վարքագծի թերությունները վերացնելու, ինչ-

¹ Տե՛ս Հ.Մ. Խաչատրյան, «Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները ՀՀ-ում», թեկ. առենախոսություն, էջ 109-115, 130-134, Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման որոշ հարցեր // Օրենքի պատվար մարտ N7, 2019, էջ 18-26: Անչափահասների խմբային հանցավորության հակազդման քրեաիրավական և կրիմինալոգիական որոշ հարցեր // Օրենքի պատվար, մարտ, N9, 2020, էջ 67-74:

● ՕՐԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 121 2021

պես նաև՝ ուսման և աշխատանքի նկատմամբ սեր ձևավորելու վրա²:

Հայտնաբերելով անչափահասների հանցավոր խմբերը՝ անհրաժեշտ է ուսումնասիրել այդ խմբերը՝ առանձնացնել լիդերին, խմբի ակտիվ մասնակիցներին, մնացած անդամներին, պարզել խմբի անդամների հավաքատեղին և անչափահասների նկատմամբ անցկացնել պրոֆիլակտիկ աշխատանքներ՝ խմբի անդամների կապերը քայքայելու, նրանց հակաիրավական գործունեությունը, խմբի լիդերի բացասական ազդեցությունը խմբի անդամների վրա կանխելու նպատակով:

Կարծում ենք, որ անչափահասների հակահասարական ոչ բոլոր խմբերը պետք է վերցնել հաշվառման, այլ միայն այն խմբերը, որոնց անդամները թույլ են տալիս իրավախախտումներ, այսինքն՝ քրեածին և հանցավոր: Հենց այս խմբերը պետք է բացահայտեն տեսուչները, հաշվառեն և նրանց նկատմամբ իրականացնեն պրոֆիլակտիկ աշխատանքներ: Սակայն դա չի նշանակում, թե մեզ չեն հետաքրքրում անչափահասների հակահասարակական ուղղվածությամբ խմբերը: Հայտնաբերելով այդպիսի խմբերը՝ նրանց նկատմամբ անհրաժեշտ է ներգործել վաղ և անմիջական պրոֆիլակտիկայի միջոցով՝ դրանց գործունեության հանցավորի վերաճումը կանխարգելելու նպատակով: Իսկ խմբերի հաշվառումը, կարծում ենք, անհրաժեշտ է իրականացնել արդեն իսկ հանցավոր գործունեությամբ անչափահասների խմբերի նկատմամբ:

Հաշվի առնելով ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման տեսուչների մասնագիտական պատրաստվածության որակներն ու գերծանրաբեռնվածությունը, գործունեության կարգավորման իրավական բացթողումները³ ենթադրվում է պրոֆիլակտիկ հաշվառման մեջ գտնվող անչափահասների նկատմամբ կանխարգելիչ ներգործության սահմանափակ հնարավորությունների մասին: Սակայն կարծում ենք, որ նրանց պարտականությունը պետք է

հանդիսանա նաև անչափահասների հակահասարակական խմբերի հայտնաբերումը և, ըստ անհրաժեշտության՝ դրանց հաշվառումը, այդ մասին շահագրգիռ շրջանակներին տեղեկացնելը, անչափահասներին և նրանց խմբավորումների ուսումնասիրման կազմակերպումը մասնագետների (նկատի ունենք հատուկ որակավորում և անչափահասների հետ աշխատանքի փորձ ունեցող հոգեբանների, մանկավարժների, սոցիալական աշխատողների, քրեաբանների) կողմից, վերջիններիս տրված կարծիքի հիման վրա կազմակերպել պրոֆիլակտիկ ներգործությունը: Դաստիարակչական աշխատանքները պետք է կազմակերպել և իրականացնել ինչպես անչափահասների հետ առանձին-առանձին, այնպես էլ անչափահասների խմբի հետ: Այստեղ կարևորվում է բոլոր շահագրգիռ մարմինների հետ փոխհամաձայնեցված համագործակցությունը: Ընդ որում՝ դա միայն տեղեկատվության փոխանակման մակարդակով չպետք է, որ արտահայտվի, այլև ունենա նպատակային բնույթ: Ներգործությունը պետք է տարաբնույթ լինի: Նախ՝ համատեղ աշխատանքում պետք է լինի ռազմավարություն, որը պետք է մշակվի համագործակցության բոլոր սուբյեկտների կողմից համատեղ ջանքերով՝ համաձայնեցնելով բոլոր միջոցառումները, դրանց անցկացման մարտավարությունը՝ հաշվի առնելով անչափահասների հանցավոր խմբերի առանձնահատկությունները:

Այսպիսով՝ անչափահասների հանցավոր խմբերի հանցավոր գործունեության կանխարգելման համար արդյունավետ միջոց է պրոֆիլակտիկ ներգործությունը՝ ուղղված ամբողջ խմբին: Այդպիսի միջոցներ են.

1. Խմբի վերակողմնորոշումը, սա նշանակում է, որ խումբը պահպանում է իր կազմը, սակայն խմբին և նրա լիդեր և մյուս անդամներին ուղղված ներգործության միջոցների օգնությամբ փոխվում է խմբի գործունեության ուղղվածությունը: Ընդ որում՝ կամ վերակողմնորոշվում է խմբավորման լիդերը, և նրա միջոցով է տեղի ունենում ամբողջ խմբի վրա ներգործու-

² Տե՛ս Սանով Ս. Ս., Քեյգին Ա. Վ. Պրավոյե և օրգանիզացիոննոե օսնովե զեյատելնոստի ՕՎԴ թո օնդիվիդուալնոյ թրօֆիլակտիկե թրավոնարուշաոչեյո թեվեդենի // Ձակոնօդատելստվո և թրակտիկա. 2013. №2. էջ 73:

³ Տե՛ս Հ.Մ.Խաչատրյան, «Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները ՀՀ-ում», թեկ. առենախոսություն, էջ 108-139:

թյունը, կամ էլ նա փոխարինվում է մեկ ուրիշով, օրինակ՝ նախկին լիդերով: Այս մեթոդը պետք է կիրառվի վաղ, խմբավորման ոչ հանցավոր գործունեության դեպքում:

2. Խմբի գործունեության զսպումը, ինչը թույլ չի տա հանցնանք կատարել: Այս միջոցը պետք է կիրառվի այլ միջոցների կիրառման գործընթացում, որ դրանք կիրառելիս էքսցես, հանցագործություն չլինի, կամ էլ՝ եթե այլ միջոցներով հնարավոր չէ պառակտել խումբը:

3. Խմբի պառակտում, որը հնարավոր է՝ խմբի առանձին անդամների նկատմամբ կիրառելով ներգործության տարբեր միջոցներ՝ թույլ չտալու համար միմյանց հետ շփումը կամ էլ վերջինս հասցնելու նվազագույնի: Հիմնականում դա իրագործվում է՝ խմբի անդամներին տարբեր ուսումնական հաստատություններ տեղավորելով, տարբեր միջոցառումներում ընդգրկելով: Որոշ դեպքերում առանձին անդամներ կարող են դատապարտվել ազատազրկման կամ էլ տեղավորվել հատուկ դատարակչական հիմնարկ (վերջինիս կանդիդատանք մեր հաջորդ աշխատությունում):

Խմբային պրոֆիլակտիկան սերտ կապված է անհատական պրոֆիլակտիկայի հետ, քանի որ ներգործությունն ուղղված է նաև խմբի յուրաքանչյուր անդամին՝ խմբում նրա դերակատարումով պայմանավորված:

Խմբային պրոֆիլակտիկայի համար կարևոր է նաև հետևյալ տվյալների ուսումնասիրումը.

1. Հակահրավական գործունեության բնույթը՝ հանցագործությունների հաճախությունը, ներքին հանգամանքներով պայմանավորված դրվագային հանցագործությունների կատարումը, հանցավոր իրավախախտումների պարբերականությունը:

2. Հանցավոր գործունեության կազմակերպվածության աստիճանը՝ կազմակերպվածության հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը:

3. Հանցավոր գործունեության կազմակերպչի առկայությունը – չափահաս է, դատվածություն ունեցող անձ է, թե անչափահաս է, ինչ բնութագրիչ առանձնահատկություններ ունի, թե բացակայում է կազմակերպիչը, և այդ դերն ամեն անգամ կատարում է անդամներից մեկը՝ իրավիճակով պայմանավորված:

4. Չափահաս հանցագործների ազդեցությունը՝ եթե գործ ունենք խառը խմբի հետ, ապա ինչ ազդեցություն ունեն չափահասները խմբի անչափահաս անդամների նկատմամբ, կազմակերպում և վերահսկում են անչափահասների հանցավոր գործունեությունը, այդ խմբի լիդեր են, տարածում են հանցավոր ենթամշակույթը անչափահասների շրջանում:

5. Խմբի ձևավորման վայրը՝ ըստ բնակավայրի, ըստ ուսման կամ ժամանցի վայրի:

6. Հանցավոր գործունեության տեսակը՝ օրինակ՝ եթե գողություններ են, ապա ինչպիսի, թե իրավիճակային հանցանքներ են կատարում:

7. Խմբի անդամների միջև կապի տեսակը՝ հոգեբանական, կայուն, ընկերական, լիդերի կողմից հոգեբանական ճնշում գործադրելով, ուժով պահելով, լիդերի հեղինակությամբ պայմանավորված:

Եթե բացահայտվել է խումբ, որի կողմից հանցանքներ կատարելու հավանականություն կա, ապա կանխարգելիչ աշխատանքները պետք է ուղղված լինեն ուսումնասիրելու խմբի տեսակը, գործունեության ձևերը, տևողականությունը, խմբի իրավախախտումների վայրը կամ անդամների հավաքատեղին, խմբի անդամների ժողովրդագրական, բարոյահոգեբանական և այլ բնութագրիչ առանձնահատկությունները, խմբի կապերն այլ ոչ ֆորմալ խմբերի կամ անձանց հետ: Իսկ կանխարգելիչ միջոցները պետք է պայմանավորված լինեն խմբի հակահասարակական ուղղվածությամբ: Հանցանքներ գործող խմբի նկատմամբ պրոֆիլակտիկ ներգործության միջոցներն ուղղված են գլխավորապես խմբի վերակողմնորոշմանը, այսինքն՝ գործունեության նպատակների, իդեալների, հայացքների փոփոխմանը և այլն: Այս աշխատանքները կարող են արդյունավետ լինել տարբեր միջոցների և եղանակների համալիր կիրառմամբ, մասնավորապես՝ օգտագործելով քրեաիրավական միջոցները, օպերատիվ-հետախուզական մեթոդները, ներգործությունը հարազատների և մերձավորների նկատմամբ, հոգեբանական և մանկավարժական մեթոդներով և ներգործության այլ հնարքներով և այլն: Պրոֆիլակտիկ ներգործությունն անմիջականորեն պետք է ուղղված լինի խմբին ամբողջությամբ և արտահայտվի՝ խմբի անդամների մե-

կուսացման օգնությամբ խմբի կազմալուծում (մեկուսացման մեթոդ), խմբի վերակողմնորոշում, խմբի տարանջատումն այլ եղանակներով (անլուր), անդամի վրա անհատական ներգործության միջոցների զուգորդումն ամբողջ խմբին ուղղված միջոցների հետ:

Անչափահասների խմբերի հետ աշխատանքում անհրաժեշտ է հաշվի առնել և հետագայում կոռեկցիայի ենթարկել հետևյալ հանգամանքները. ըստ բնակության վայրի կամ հետաքրքրությունների ձևավորված անչափահասների խմբերի կազմն ու ժամանցային ուղղվածությունը, խմբի գոյատևմանն ու գործելուն նպաստող արտաքին պայմանները, խմբի ժամանցի բնույթը, խմբի անդամների կողմից կատարվող կոնկրետ արարքները, հատկապես՝ իրավախախտումներն ու հանցանքները, խմբային ենթամշակույթի ձևավորման առանձնահատկությունները (կարգ ու կանոնը, ավանդույթները, համոզմունքները, արժեքները և այլն), խմբի հիերարխիկ կառուցվածքը, անդամների միջև փոխհարաբերությունների բնույթը, միմյանցից կախվածության աստիճանն ու մակարդակը, խմբի բոլոր անդամների հոգեբանական առանձնահատկությունները, նրանց դերերը, հատկապես՝ լիդերի և ակտիվ անդամների:

Դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքով՝ հատուկ ուշադրություն ենք հրավիրում հետևյալ հանգամանքին. հանցանք կատարած անչափահասները հազվադեպ են դատապարտվում ազատազրկման և պատիժը կրում ազատազրկման ձևով⁴: Այն դեպքերում, երբ դատարանը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ է նշանակում՝ հանգելով հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, հիմնվում է ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի վրա, և պատիժը պայմանակորեն չի կիրառում: Որպես կանոն՝ այս անչափահասները ոչ միայն կրում են քրեածին պոտենցիալ, այլ նաև՝ հակաիրավական գործունեության մեջ ակտիվ ներգրավում են այլ անձանց: Անչափահասից անչափահաս հանցավոր «վարակվածությունն» ընթանում է առավել

ինտեսիվ, քան չափահասից, քանի որ տեղի է ունենում համատեղ ժամանցի ընթացքում: Հետևաբար՝ պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հանցավոր «վարակվածությունը» չեզոքացնելու կամ դրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու ուղղությամբ:

Անչափահասների հակահասարակական ուղղվածությամբ խմբերի վրա համալիր և նպատակաուղղված ներգործությունը կնպաստի նրանց հակաիրավական գործունեության պրոֆիլակտիկայի արդյունավետությանը: Այդ նպատակով անհրաժեշտ է, առաջին հերթին, վերհանել անչափահասների հանցավոր խմբերը և հաշվառել, այնուհետև բացահայտել լիդերներին և կազմակերպիչներին, չափահասներին, ովքեր ներգրավում են անչափահասներին հանցանքների կատարման մեջ: Եվ վերջապես՝ պետք է վերահսկողություն իրականացնել ինչպես նրանց, այնպես էլ ամբողջ խմբի գործունեության նկատմամբ:

Այն դեպքերում, երբ պրոֆիլակտիկ աշխատանքները հաջողված են, այսինքն՝ խումբը վերակողմնորոշված (ուղղված) է կամ քայքայված, երբ պրոֆիլակտիկ հաշվառման վերցնելու հիմքերն արդարացված չեն, երբ ի հայտ է եկել իրավիճակ, որը բացառում է նոր հանցագործությունները, կամ թե խմբում մնացել է մեկ անդամ (մնացածները, օրինակ, ուղղվել են), որ պետք է կրի ազատազրկման ձևով պատիժը, կամ թե՛ լրացել է 18 տարեկանը, կամ թե՛ մահացել է, անչափահասների խումբը պետք է հանվի պրոֆիլակտիկ հաշվառումից:

Անչափահասների հանցավոր խմբերի պրոֆիլակտիկ հաշվառման և նրանց հետ տարվող աշխատանքների ընթացքում կարելի է, նույնիսկ կարելի է ասել՝ պարտադիր է հոգեբանների ներգրավումը, քանի որ զրույցները համարվում են կանխարգելիչ գործունեության հիմնական և ազդեցիկ մեթոդ: Հենց հոգեբանները, ունենալով անչափահասների հոգեբանության վերաբերյալ խոր գիտելիքներ, ունակ են տեղեկատվությունը տեղ հասցնելու և ազդելու անչափահասների վարքագծի վրա:

Անչափահասների հանցավոր խմբերի նկատմամբ աշխատանքներում կարևոր նշա-

⁴ Տե՛ս Հ.Մ. Խաչատրյան, «Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները ՀՀ-ում», թեկ. ատենախոսություն, էջ 112-113:

նակություն է ստանում հատուկ պրոֆիլակտիկան, որը ենթադրում է այնպիսի պրոֆիլակտիկ միջոցներ կիրառում, ինչպիսիք են անչափահասների հետ պրոֆիլակտիկ գրույցները, քրեաիրավական նորմերը լուսաբանելը, անչափահասների հիմնական պարտականությունների և դրանց չկատարման հետևանքների պարզաբանումը, ոչ բարենպաստ ընտանքիների հետ տարվող աշխատանքը, անչափահասների հաշվառումը և այլն:

Հատուկ պրոֆիլակտիկան պետք է ուղղված լինի անչափահասների շեղվող վարքագծի դեպի սոցիալական դրական փոփոխմանը և նրանց կողմից հանցանքների կատարման անթույլատրելիությանը: Հատուկ պրոֆիլակտիկայի համակարգում կարևոր նշանակություն

ունի սոցիալական վերահսկողությունը՝ իր հասարակական ներգործության միջոցներով, և պետական հարկադրանքը՝ ներառելով պրոֆիլակտիկ հաշվառումները: Այս միջոցների համալիրն օբյեկտիվորեն ունենում է նշանակալից ներգործություն: Ինչպես արդարացիորեն նշում է Ի.Ադնենեսը. «Նույնիսկ պատժողական նշանակություն չունեցող միջոցները կարող են ունենալ նույնքան դրական ազդեցություն, որքան պատժի կիրառումը»⁵:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք՝ անչափահասների հանցավոր խմբերի պրոֆիլակտիկ հաշվառումը կհանդիսանա անչափահասների հանցավորության կանխարգելման արդյունավետության բարձրացման միջոց:



⁵ Сѣи Адненис И. Наказание и предупреждение преступлений. М., 1979, էջ 82:

ՎԻՐԱՔ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի Դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովման վարչության Դատավորների ընդհանուր ժողովի և հանձնաժողովների գործունեության ապահովման բաժնի առաջատար մասնագետ, ՀՀ ՊԿԱ իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

ՄԵՂՔԻ ԵՎ ՊԱՏԺԻ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԻՆՏԵՐՊՐԵՏԱՑԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎԱԸՆԿԱԼՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Իրավունքն անընդհատ գտնվում է զարգացման մեջ: Դա էլ, իր հերթին, հանգեցնում է որոշակի փոփոխությունների իրավունքի ընկալման հարցում և իր հետևանքն է թողնում նաև այս կամ այն իրավունքի ճյուղում իրավունքի սկզբունքների դրսևորման գործում: Այս հարցում փոքր-ինչ առանձնահատկություն ունեն սահմանադրական սկզբունքները:

Սահմանադրական սկզբունքներն իրենց այս կամ այն դրսևորումը կարող են ստանալ ոչ միայն սահմանադրական իրավունքի ոլորտում, այլ նաև՝ իրավունքի այլ ճյուղերում և, բացի սահմանադրական իրավունքի գիտությունից՝ կարող են ուսումնասիրվել նաև իրավունքի այլ գիտությունների կողմից: Մինչդեռ՝ հատկանշական է, որ այդ սկզբունքները կարող են ուղղակիորեն արտացոլված չլինել իրավունքի այլ ճյուղերում, դրանք կարող են լինել նաև՝ տվյալ իրավունքի ճյուղերին առնչվող հասարակական հարաբերությունները կարգավորող օրենսդրության մեջ:

Իրավական համակարգում իրավունքի ընդհանուր զարգացման լույսի ներքո տեղի է ունենում նաև Սահմանադրության զարգացման գործընթաց: Նշված գործընթացը կարող է իրականանալ տարբեր եղանակներով:

Սահմանադրության կայունությունն ապահովելու տեսանկյունից՝ հնարավոր է դրա զարգացումն ապահովել առանց տեքստային փոփոխությունների՝ գործող սահմանադրական կարգավորումների շրջանակներում մեկնաբա-

նություն կատարելով: Հայաստանի Հանրապետության տեսանկյունից՝ դրանք, մասնավորապես, այն դեպքերն են, երբ առաջանում է ոչ թե այս կամ այն նորմի վերափոխման, այլ՝ բովանդակության բացահայտման անհրաժեշտություն: Այսպիսով՝ կարելի է փաստել, որ մեկնաբանությունը ՀՀ Սահմանադրության զարգացման կարևորագույն եղանակներից է, և որ նպատակահարմար է Սահմանադրության տեքստում փոփոխություններ չկատարել այն բոլոր դեպքերում, երբ հնարավոր է վերջինիս զարգացումն ապահովել հիշատակված եղանակի միջոցով¹:

Վերոնշյալից երևում է, որ մեկնաբանությունը, որպես ինտերպրետացիայի դրսևորում, իրավական նորմի բովանդակության բացահայտման յուրատեսակ միջոց է, ինչը գործնականում կարող է տեղի ունենալ քննարկման առարկա սահմանադրական սկզբունքների պարագայում, ինչն էլ, իր հերթին, կհանգեցնի նաև Սահմանադրության որոշակի զարգացման:

Սահմանադրական սկզբունքները որոշակի իմաստով կարելի է համարել ունիվերսալ սկզբունքներ, քանի որ դրանք շատ հաճախ համընդհանուր են իրավունքի մի շարք ճյուղերի համար:

Միևնույն ժամանակ՝ գուցե հենց այդ համընդհանուր բնույթ ունենալու հանգամանքն է հանգեցրել դրանց սահմանադրակացմանը: Չէ՞ որ սահմանադրական սկզբունքն է, որ կարող է տարածական մեկնաբանվել, բացահայտվել

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 121 2021

¹ Մանայան Ա., «Սահմանադրության զարգացման եղանակների արդյունավետ իրացումը՝ որպես սահմանադրական կայունության կարևորագույն երաշխիք», «Պետություն և իրավունք», թիվ 1 (83) 2019թ., Երևան, էջ 9:

և համապատասխան կիրառություն ստանալ այս կամ այն հասարակական հարաբերություններում՝ մինչ այդ, իհարկե, որոշակի տրանսֆորմացիայի ենթարկվելով տվյալ հասարակական հարաբերությունները կարգավորող իրավունքի նորմերում:

Վերոշարադրյալ վերլուծությունը հիմք է տալիս առաջ քաշելու այն պնդումը, որ սկզբունքների սահմանադրականացման պատճառներից և տեսական հիմքերից մեկն էլ զուցե հենց սա է. համընդհանուր բնույթը, սահմանադրականացումը, համապատասխան տրանսֆորմացիաների շնորհիվ տարբեր իրավանորմերի միջոցով այս կամ այն իրավունքի ճյուղում դրսևորվելը: Ի դեպ՝ վերջինս և՛ անհրաժեշտություն է, և՛ իրավական համակարգի զարգացման որոշակի քաղաքականության արդյունք:

Գուցե հենց նաև վերոշարադրյալ տեսական վերլուծության շնորհիվ ի հայտ եկած հանգամանքներն են, որ տեսական առումով հիմք են սկզբունքների սահմանադրականացման գործում, որպիսի երևույթներ տեղի են ունեցել նաև մեր երկրի մայր օրենքում ամրագրված սկզբունքների պարագայում, մասնավորապես՝ այն սկզբունքների, որոնք իրենց սահմանադրական ամրագրումն են ստացել սահմանադրական որոշակի փոփոխությունների գործընթացում: Նմանատիպ սկզբունքներ են մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը:

Դա տեղի է ունենում այս կամ այն իրավունքի ճյուղում տարբեր կերպ դրսևորվելու ընթացքում, այդ թվում՝ տվյալ իրավունքի ճյուղին վերաբերող նորմատիվ իրավական ակտերում սահմանվելով, Սահմանադրական դատարանի կողմից իր կայացվող ակտերում այս կամ այն իրավունքի սկզբունքը մեկնաբանելով և այլն:

Կարծում ենք՝ այս իմաստով Սահմանադրական դատարանին կարելի է տալ իրավունքի ոլորտի ինտերպրետատորի դեր՝ պայմանավորված իր՝ այս կամ այն իրավունքի սկզբունքը կամ նորմը մեկնաբանելու լիազորությունով՝ Սահմանադրության դրույթներից սկսած:

Կարծում ենք նաև, որ հենց ինտերպրետացիայից և դրա շնորհիվ արված հետևություններից է կախված նաև իրավունքի կոնկրետ սկզբունքների իրավաընկալումն իրավունքի

տարբեր ճյուղերում: Այսինքն՝ իրավունքի սկզբունքների իրավաընկալումը պայմանավորված է նաև ինտերպրետացիայի շնորհիվ վեր հանված իմաստով և նշանակությամբ: Բացառություն չեն նաև ուսումնասիրության առարկա հանդիսացող մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքները: Իհարկե, թե՛ տեսական, թե՛ գործնական մակարդակներում նախապատվությունը պետք է տալ պաշտոնական մեկնաբանությանը, այսինքն՝ մեր կողմից, այսպես կոչված, իրավունքի ոլորտի ինտերպրետատորի, այն է՝ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներով տրված պաշտոնական մեկնաբանություններին: Կարծում ենք, որ ապագայում իրավակիրառ պրակտիկայում ականատես կլինենք խնդրո ուսումնասիրման առարկա հանդիսացող սկզբունքների վերաբերյալ Սահմանադրական դատարանի կամ տվյալ ժամանակահատվածում սահմանադրական սկզբունքները մեկնաբանելու լիազորությամբ օժտված մարմնի կողմից հայտնած իրավական դիրքորոշումներում տրված մեկնաբանություններին:

Հատկանշական է նաև դատարանների կողմից կոնկրետ իրավահարաբերությունների շրջանակներում նորմատիվ իրավական ակտերի տարբեր դրույթների, այդ թվում՝ Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքների իրավաընկալման հարցը:

Ինչպես գիտենք՝ աշխարհում ընդունված պրակտիկայի համաձայն՝ դատավորը կարող է կասեցնել գործի վարույթը և դիմել սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնին՝ այս կամ այն դրույթի վերաբերյալ այդ մարմնի մեկնաբանությունը ստանալու համար: Իհարկե, տարբեր երկրներում այդ գործընթացը տեղի է ունենում տարբեր առանձնահատկություններով՝ տվյալ երկրի օրենսդրությամբ այդ գործընթացի վերաբերյալ առկա կարգավորումներից կախված:

Թերևս՝ որոշակի իրավադրույթների հակասահմանադրականության վերաբերյալ դատավորների կասկածների փարատումը սահմանադրական արդարադատություն իրականացնող ինստիտուտի կողմից ինքնին դատարանների՝ դրանց իրավաընկալման վրա էական ազդեցություն ունեցող գործոն է: Ընդ որում՝ հենց դրանք կարող են լինել իրավունքի

տարբեր ոլորտներում արդարադատություն իրականացնող դատարաններ:

Այդուհանդերձ՝ հետաքրքրական է մեղքի և պատժի համաչափության սկզբունքների արտացոլումը քրեական և վարչական իրավունքում:

Մեծ է քննարկվող սկզբունքների կապը քրեական իրավունքի ոլորտի հետ: Մինչև 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության ընդունումը՝ մեղքի և պատժի համաչափության սկզբունքներն ամրագրված չէին Սահմանադրությամբ: Նշված սկզբունքները սահմանված չեն եղել նաև ՀՀ քրեական օրենսգրքով:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրներն են հանցավոր ոտնձգություններից պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իրավաբանական անձանց իրավունքները, սեփականությունը, շրջակա միջավայրը, հասարակական կյանքը և անվտանգությունը, սահմանադրական կարգը, խաղաղությունը և մարդկության անվտանգությունը, ինչպես նաև՝ կանխել հանցագործությունները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այդ խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքն ամրագրում է քրեական պատասխանատվության հիմքն ու քրեական օրենսդրության սկզբունքները, որոշում, թե հանրության համար վտանգավոր ընդ արարքներն են համարվում հանցագործություններ, և սահմանում է պատժի տեսակներ ու քրեաիրավական ներգործության այլ միջոցներ՝ դրանք կատարելու համար:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսդրությունը սահմանում է հանցագործություն համարվող արարքների, այսպես ասած, սպառիչ ցանկը, որոնցից յուրաքանչյուրը **մեղքով** դրսևորված այնպիսի արարք է, որի համար նախատեսվում է քրեական պատասխանատվություն, որն էլ, իր հերթին, ենթադրում է **համաչափ** պատիժ: Այդ համաչափության սահմանը որոշելը ևս թողնված է օրենսդրի հայեցողությանը, ով որոշում է այդ սահմանը այնպես, որ վերջինս լինի բավարար՝ համապատաս-

խան պատիժ նշանակելիս և կիրառելիս պատժի նպատակների իրականացման համար:

Այսինքն՝ կար մի իրավիճակ, երբ վերոնշյալ օրենսդրական դրույթների համատեքստում հիմնական դեր ունեցող երկու բաղադրիչ, այն է՝ մեղքը և պատիժը (համաչափ պատիժը), որպես սկզբունքներ ուղղակիորեն ամրագրված չեն եղել ոչ ՀՀ Սահմանադրությամբ, ոչ ՀՀ քրեական օրենսգրքով: Իսկ գուցե, ի թիվս այլնի, այդ պահի դրությամբ արդեն իսկ ամրագրված օրենսդրական դրույթների համատեքստում կարևորագույն դեր ունենալով էր նաև պայմանավորված դրանց հենց Սահմանադրությամբ ամրագրելու անհրաժեշտությունը:

Նշվածից կարելի է եզրահանգել, որ մեղքի և պատժի համաչափության սկզբունքներն ունեն առանցքային դեր Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրների սահմանման և, առհասարակ՝ պետության քրեաիրավական քաղաքականության հարցում՝ չլինելով նույն օրենսգրքով նախատեսված քրեական օրենսդրության սկզբունքների շարքում:

Քրեական իրավունքի ոլորտում կիրառելի սահմանադրական սկզբունքների ինտերպրետացիան հիմնականում հանդիպում է սահմանադրական հսկողության կամ վերահսկողության մարմինների գործունեության մեջ: Վերջիններս հաճախ վեր են հանում քրեական իրավունքի որոշ ճյուղային սկզբունքներ առավել ընդհանուր սահմանադրական դրույթներից՝ հենվելով առկա գիտական ուսմունքների վրա: Օրինակ՝ շատ երկրներում սահմանադրական արդարադատությունը գործում է պատժի համաչափության սկզբունքով, չնայած դա պաշտոնապես չի հիշատակվում Սահմանադրության մեջ կամ համապատասխան պետության որևէ օրենքում:

Քրեական իրավունքի ոլորտի հետ քննարկվող սահմանադրական սկզբունքների կապն առավել խորությամբ վեր հանելու համար անհրաժեշտ է մեջբերել քրեական օրենսդրության ևս մի քանի դրույթ:

Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մե-

ղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված գրկմամբ կամ սահմանափակմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև՝ կանխել հանցագործությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները:

Վերոշարադրյալից երևում է, որ օրենսդիրը ոչ միայն սահմանում է պատժի հասկացությունը և դրա նպատակները, այլև՝ այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ պատժի տեսակը, պատժաչափը, ինչպես նաև՝ դրանց որոշման համար կարևոր մի շարք գործոնների ամբողջությունը:

Իսկ վերոնշյալ հոդվածի երրորդ մասի մեջբերված բովանդակությունից հստակ երևում է պատժի ու դրա նպատակների միջև համաչափ բալանսի ապահովման կարևորությունը՝ ելնելով, իհարկե, մարդասիրական (հումանիստական) սկզբունքից: Վերջինս արտացոլվում է այն փաստում, որ նշված ձևակերպմամբ օրենսդիրը, փաստորեն, դնում է արգելք՝ պատժի նպատակների ապահովման համար բավարար պատժից ավելի խիստ պատիժ նշանակելու համար, ինչը, նախ, չէր բխի մարդու հիմնարար իրավունքներից ու ազատություններից, ինչպես նաև՝ կլիներ իմաստազուրկ:

Մեղքի և պատժի համաչափության սկզբունքներն իրենց արտացոլումն են գտել նաև վարչաիրավական ոլորտում:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված են մեղքով պայմանավորված այնպիսի արարքներ, ո-

րոնց համար սահմանված է համապատասխան պատիժ:

Նշված օրենքի իմաստով՝ մեղքով դրսևորված արարքը վարչական իրավախախտումն է կամ, այլ կերպ ասած՝ զանցանքը, որի հասկացությունը տրվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածով, որի համաձայն՝ Վարչական իրավախախտում զանցանք է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգող հակաիրավական, մեղավոր դիտավորյալ կամ անզգույշ այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումներն իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան:

Սույն հոդվածի համատեքստում ուշագրավ է նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը, ըստ որի՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վերոնշյալից երևում է, որ, ինչպես ՀՀ քրեական օրենսգրքում, այստեղ ևս օրենսդիրը սահմանում է վարչական տույժի տեսակի ու չափի որոշման համար կարևոր մի շարք գործոնների ամբողջությունը, իսկ նպատակը խախտման և վրա հասնող հարկադրանքի միջոցի միջև համաչափության ապահովման անհրաժեշտությունն է:

Վերջինս էլ, իր հերթին, ոչ այլ ինչ է, քան մեղքի և պատժի համաչափության սկզբունքների յուրատեսակ դրսևորում:

Առհասարակ՝ իրավունքի սկզբունքները համարվում են նաև իրավունքի յուրատեսակ աղբյուր:

Տարբեր պետությունների հայտնի են իրավունքի աղբյուրների հետևյալ տեսակները. իրավական սովորույթ, դատական նախադեպ,

իրավական դոկտրինա, նորմատիվ բովանդակության պայմանագրեր, կրոնական նորմեր, **իրավունքի սկզբունքներ**, դատական պրակտիկա, նորմատիվ իրավական ակտեր: Երբեմն որպես իրավունքի ինքնուրույն աղբյուր անվանում են **միջազգային իրավունքի սկզբունքներն** ու նորմերը և միջազգային պայմանագրերը²:

Այսինքն՝ վերոգրյալից կարելի է եզրակացնել նաև, որ իրավունքի այս կամ այն ճյուղում սահմանադրական սկզբունքների տեղայնացումը կամ այս կամ այն կերպ արտացոլումը կապված է դրանց՝ որոշակի իմաստով իրավունքի աղբյուր լինելուց ևս, քանի որ դրանք կանխորոշում են իրավունքի՝ տվյալ ճյուղում համապատասխան սահմանադրական սկզբունքի տարածման սահմաններում տվյալ սկզբունքի արտահայտած իմաստի և բովանդակության արտացոլում տվյալ իրավունքի ճյուղը սպասարկող օրենսդրության համապատասխան կարգավորումներում:

Իրավունքի սկզբունքները գործնականորեն իրավունքի աղբյուրներ են բոլոր իրավական համակարգերում: Ռոմանագերմանական իրավական համակարգում իրավունքի բացերի դեպքում թույլատրվում է դատական որոշումների հիմնավորում ընդհանուր իրավական սկզբունքներով³:

Հայաստանի Հանրապետությունը ևս ռոմանագերմանական իրավական համակարգ ունեցող երկիր է և վերը նշվածի համատեքստում մեր երկրի դատական պրակտիկայում կիրառելով իրավունքի անալոգիա՝ շատ հաճախ հղում է արվում տարբեր իրավական կարգավորումների հիմնադրյուր հանդիսացող իրավունքի սկզբունքներին: Մասնավորապես՝ յուրաքանչյուր իրավունքի ճյուղի նորմերի կարգավորմանը ենթակա հասարակական հարաբերությունների կապակցությամբ ընդունվող դատական ակտի պարագայում անհրաժեշտության դեպքում հղում է արվում նույն իրավունքի ճյուղի հիմնարար սկզբունքներին: Այստեղ ևս առաջ է գալիս սահմանադրական սկզբունքների և, մասնավորապես՝ նրանց ինտերպրետացիայի և դրսևորման անհրաժեշտության ա-

ռաձնահատկությունները: Կարծում ենք՝ այդ առանձնահատկությունները, ի թիվս այլ իրավիճակների, կարող են դրսևորվել այն դեպքերում, երբ, օրինակ՝ հենց նույն դատական պրակտիկայում՝ իրավունքի բացի պարագայում, լինի անհրաժեշտություն հղում անելու այս կամ այն իրավական սկզբունքին, սակայն տվյալ իրավունքի ճյուղին սպասարկող ոչ նյութական, և ոչ էլ՝ դատավարական օրենսդրությունում չլինեն համահունչ սկզբունքներ, այլ՝ նմանատիպ սկզբունքեր լինեն միայն մայր օրենքում, կամ էլ՝ համապատասխան օրենսդրությամբ սահմանված սկզբունքները ոչ այնքան պիտանի լինեն իրավունքի կամ օրենքի տվյալ բացի լրացման համար, քան սահմանադրական որոշ սկզբունքներ: Որպես արդյունք՝ առաջ է գալիս սահմանադրական համապատասխան սկզբունքների ինտերպրետացիայի և տեղայնացման անհրաժեշտություն իրավունքի այս կամ այն ճյուղին վերաբերող հասարակական հարաբերություններ կարգավորելիս:

Սահմանադրական դատարանը՝ իր 2010 թվականի փետրվարի 5-ի թիվ ՍԴԴ-864 որոշմամբ, ի թիվս այլնի, մասնավորապես՝ նշել է հետևյալը.

«...Իրավակարգավորման նշված բացը, սակայն, պայմանավորված է ոչ թե ինքնին օրենսգրքի վիճարկվող դրույթներով, այլ՝ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտի ոչ ամբողջական իրավակարգավորմամբ, որի հաղթահարումը ՀՀ Ազգային ժողովի իրավասության հարցն է: Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և Սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակ-

² Л.А. Морозова, Теория государства и права, 4-е издание, Российское юридическое образование, 2010, с. 189.

³ Նույն աշխատության մեջ, էջ 193:

ներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք:

Ելնելով վերոհիշյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է լրացնել նշված իրավունքի բացը՝ ապահովելով օրենքի իրացման գործունե կառուցակարգ, վարչական իրավախախտումների համար պաշտոնատար և այլ անձանց վարչական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի գործադրման իրական երաշխիքներ»⁴:

Ընդունելով Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմամբ արտահայտած դիրքորոշումը առ այն, որ իրավունքի կամ օրենքի բացի լրացման պարտականությունը կրող հիմնական սուբյեկտը երկրի օրենսդիր մարմինն է, այնուամենայնիվ, կարծում ենք, որ սահմանադրական սկզբունքները Սահմանադրական դատարանի կողմից ինտերպրետացիայի կամ մեկնաբանման շնորհիվ, ինչը մեծապես վերջինիս լիազորությունն է, կարող են հանդիսանալ արդյունավետ գործիք իրավունքի կամ օրենքի բացի լրացման կամ, նվազագույնը, այդ բացի պատճառով առաջացած իրավական, առավել ևս՝ հնարավոր սահմանադրականության խնդրի վերացման համար:

Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ կարելի

է գալ այն եզրահանգման, որ իրավական սկզբունքներն ունեն տարբեր իրավունքի ճյուղերի ընդհանուր կարգավորումների համատեքստում մեկնաբանվելու և այդ ճյուղերում տեղայնացվելու հատկություն: Դրանք իրենց բնույթով հիմնարար և ելակետային են, նաև, որոշակի իմաստով՝ կանխորոշում են իրավունքի նորմերի բնույթն ու սահմանները: Սակայն առանձնակի տեղ են զբաղեցնում սահմանադրական սկզբունքները՝ ավելի կարևոր դիրք ունենալով իրավական այլ սկզբունքների համեմատությամբ, ինչը հետևում է դրանց՝ այլ սկզբունքների համեմատ առավել ունիվերսալ լինելու հանգամանքից, քանի որ դրանք առավել լավ են տեղայնացվում իրավունքի տարբեր ճյուղերում և դրանով իսկ լուծում առավել դժվար և կարևոր իրավական խնդիրներ թե՛ տեսական, թե՛ գործնական հարթությունում:

Նման սահմանադրական սկզբունքների շարքն են դասվում խնդրո քննարկման առարկա հանդիսացող մեղքի և պատժի համաչափության սկզբունքները, որոնց ինտերպրետացիան և իրավաընկալումն իրավունքի տարբեր ճյուղերում պայմանավորվում են յուրաքանչյուր իրավունքի ճյուղի առանձնահատկություններով և, միևնույն ժամանակ՝ ինտերպրետացիայի շնորհիվ բացահայտվում են այդ առանձնահատկությունների իմաստն ու նշանակությունը, բացահայտվում է նաև կոնկրետ սահմանադրական սկզբունքների բովանդակությունը, ինչն էլ ապահովում է այդ մասով Սահմանադրության որոշակի զարգացման գործընթաց:



⁴ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը, Երևան, 2016, էջ 719:

ՎԱՆԻՆԵ ՀՈՎԱՆՓՅԱՆ

ՀՀ «Երևան» նոտարական տարածքի նոտար
 ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ
 ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ**

Իրավաբանական պատասխանատվությունը իրավունքի կազմակերպչական գործառույթի իրականացման էական ձևերից է¹: Հատկապես իրավական նորմերի խախտման համար պատասխանատվությունը «պսակում» է իրավունքի պաշտպանիչ մեխանիզմը, դարձնում տրամաբանորեն ավարտված և սոցիալապես արժեքավոր: Իհարկե, պատժամիջոցների սպառնալիքը, արգելքի կանխարգելիչ դերը ևս իրավունքի պաշտպանիչ գործառույթի իրականացման կարևոր ձևեր են, առանց դրանց հնարավոր չէ պատկերացնել պաշտպանիչ ազդեցության լիարժեք պատկերը, սակայն իրավաբանական պատասխանատվությունը՝ իրավունքի սուբյեկտների համար իրականացման առավել շոշափելի ձև է, քանի որ հատկապես դրա հետ է կապված նրանց կողմից անհատական, գույքային կամ կազմա-

կերպական բնույթի ոչ շահավետ հետևանքների կրումը, դրա իրականացումը հաճախ հանգեցնում է իրավախախտի իրավական կարգավիճակում բացասական փոփոխությունների և այլն:

Հասարակության բազմաթիվ անդամներ դրական են վերաբերվում սահմանված պատժամիջոցների և արգելքների նկատմամբ, որոշները դրանց հետ համաձայն չեն, սակայն իրավունքի սուբյեկտներից որևէ մեկը չի ցանկանում ենթարկվել իրավաբանական պատասխանատվության, այսինքն՝ բացասական հետևանքների կրմանը, որոնք միշտ հաստատվում են նրանց համար, ովքեր ենթարկվում են իրավաբանական պատասխանատվության:

Եթե գնահատվի իրավունքի պաշտպանիչ ներուժը, ապա չի կարելի չհանգել այն եզրակացության, որ իրավաբանական պատասխա-

¹ Տե՛ս Բարսեղյան Ս.Կ. Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը (Տեսապատմական և գիտագործնական հետազոտություն): Ատենախոսություն իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հմր: Երևան, 2006, Համբարձումյան Ա.Դ. Իրավաբանական պատասխանատվությունը ազգային իրավական համակարգում: Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2015, Խաչատրյան Ա.Մ. Актуальные проблемы теории и практики юридической ответственности. Автореферат дис.... канд. юрид. наук. Ереван, 2015; Салющенко И.С., Фаракин М.Х. Сущность юридической ответственности в советском обществе. М., 1974; Кудрявцев В.Н. Право и поведение. М., 1978; Նույնի՝ Правовое поведение и патология. М., 1982; Братусь С.Н. Юридическая ответственность и законность; очерк теории. М., 1976; Денисов Ю.А. Общая теория правонарушения и ответственности. М., 1981; Рыбаков В.А. Позитивная юридическая ответственность (воспитательные аспекты). Рязань, 1988; Николаева Л. А., Шмаров А.Ю. Административно-правовой аспект юридической ответственности // Правоведение. 1986. № 1; Агеева Е.А. Юридическая ответственность в государственном управлении. М., 1990; Базылев Б.Т. Юридическая ответственность: теоретические вопросы. Красноярск, 1985; Колосов Ю.М. Ответственность в международном праве. М., 1975; Сыроватская Л.А. Ответственность по советскому трудовому праву. М., 1974; Молеин Н.С. Имущественная ответственность в хозяйственных отношениях. М., 1968; Малеин Н.С. Юридическая ответственность и справедливость. М., 1992; Бахрах Д. Н. Административная ответственность. М., 1999; Тарханов Р.А. Гражданские права и ответственность. Уфа. 1996; Խաչատրյան Ր.Լ., Կարսյան Ր.Գ. Юридическая ответственность. Тольятти, 1995; Лейст О.Э. Санкции и ответственность по советскому праву (теоретические проблемы). М., 1981; Липинский Д.А. Формы реализации юридической ответственности. Тольятти, 1998; Липинский Д.А. Проблемы юридической ответственности. СПб. 2004; Мусаткина А.А. Финансовая ответственность в системе юридической ответственности. Тольятти, 2004; Габричидзе Б.Н., Чернявский А.Г. Юридическая ответственность. М., 2005; Овсянник Ж.И. Юридическая ответственность и государственное принуждение. Ростов н/Д, 2005; Родионова Е.В. Юридическая ответственность как разновидность социальной ответственности: современные подходы. М., 2011; Радько Т.Н. Теория юридической ответственности // Актуальные проблемы права. М.: Формула права, 2013, Липинский Д.А. Общая теория юридической ответственности. Дисс. д-ра юрид. наук. Самара, 2004 և այլն:

նատվությունը խաղում է դրանում բավականին էական դեր, գրավում առավել նշանակալից սանդղակը: Սակայն իրավաբանական պատասխանատվության խնդիրը ժամանակակից իրավագիտությունում բավականին վիճելի² է: Բանավեճի գործընթացի վրա ունեցել և ունենում են ազդեցություն ոչ միայն իրավագիտության, այլ նաև՝ փիլիսոփայության, հոգեբանության, սոցիոլոգիայի եզրակացությունները³: Հնարավոր է, որ դրանով է բացատրվում այն հանգամանքը, որն չնայած աշխատանքների հսկայական քանակը, որոնք նվիրված են պատասխանատվություն խնդիրներին, պատասխանատվության հասկացության վերաբերյալ ընդհանուր տեսակետ դեռ չեն գտել: Իրավաբանական պատասխանատվություն հասկացության հարցի վերաբերյալ առկա տարաձայնությունները, մի կողմից՝ գիտնականների ակտիվ ստեղծագործ որոնումների արդյունք են, մյուս կողմից՝ այդ հասկացության բարդ բովանդակության, դրա էության խորքային հատկությունների հետևանք:

Իրավաբանական գրականության մեջ «պատասխանատվություն» երևույթը կիրառվում է ամենատարբեր իմաստներով, բովանդակությամբ ու ենթատեքստերով: Հնարավոր չէ պատկերացնել այս երևույթի որևէ մեկ, ընդ որում՝ անվիճելի օպտիմալ սահմանում: Օրինակ՝ պատասխանատվությունը կարող է դիտարկվել որպես անհատների, կոլեկտիվի, հասարակության միջև փոխադարձ ներկայացված պահանջների գիտակցական իրականացման տեսանկյունից՝ որպես փոխհարաբերությունների օբյեկտիվ պատմական բնույթն արտահայտող փիլիսոփայական-սոցիոլոգիական հասկացություն:

Տարբերում են իրավաբանական, բարոյական, էսթետիկ, անձնական, կոլեկտիվ, խմբային, անհատի, այսինքն՝ քաղաքացու, հասարակության, պետության և այլ պատասխանատվություն: Հնարավոր է պատասխանատվության՝ քաղաքականի, սոցիալականի, էսթետիկի և այլ տարանջատումներ:

Մեր խնդիրը՝ գտնել և բացատրել այս կամ այն կերպ «պատասխանատվություն» հասկացության հետ կապված երևույթների ծագման, իմաստի, բովանդակության և ժամանակակից նշանակության բոլոր հնարավոր տարբերակները: Սակայն, իրականացնելով այս աշխատանքը, առաջին հերթին՝ պարզենք հարցի իրավաբանական կողմը, «պատասխանատվություն» բառի՝ «պատասխանատվության» ենթատեքստում դրան հարակից իրավաբանական իրավիճակների, հարաբերությունների, կապերի, կոնֆլիկտների, վեճերի և քննարկումների, իրավական կոլիզիաների կիրառության իրավաբանական հիմքով: Այդ իսկ պատճառով սկզբում բնութագրենք պատասխանատվության՝ որպես մարդու և հասարակության, քաղաքացու և պետության փոխգործունեության երևույթի, ձևի հիմնական տեսակները, պատասխանատվության տեսակները հասարակության և պետության, մարդ-քաղաքացու կենսագործունեության տարբեր ոլորտներում և հատվածներում, իսկ հետագայում առավել մանրամասն՝ պետական կառավարման կոնկրետ ոլորտներում: Բառի լայն իմաստով՝ պատասխանատվության տեսակների շարքում կարելի է պայմանականորեն առանձնացնել, բարոյական-էթիկական պատասխանատվությունը, աշխատանքային գործունեության ընթացքում մարդկանց կոլեկտիվի և անհատների փոխադարձ պատասխանատվությունը, ժողովուրդների (ազգերի) պատասխանատվությունը և փոխհարաբերությունները միմյանց հետ: Հետագայում հետևում է առավել բարձր մակարդակի պատասխանատվությունը՝ քաղաքական, սոցիալական, ազգային (էթնիկ) հարաբերությունների ոլորտում և այլն⁴:

Իրավաբանական պատասխանատվության ինստիտուտն՝ իրավունքի համապատասխան ճյուղի միջուկն է, որն իրավական ամբողջ համակարգի ինտեգրատիվ տիրույթ է: Այս իսկ պատճառով իրավունքի ճյուղի կառուցվածքում իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն ինստիտուտի առկայությունը դասվում

² Стів Липинский Д.А. Общая теория юридической ответственности. дис... д-ра юрид. наук, Самара, 2004:

³ Стів Философия права: концептуальные основы преподавания в юридических вузах. Под. ред. проф. Л.А. Деминой. М., 2016, էջ 52-53; Пржилонский В.М. Философия юридической науки, М., 2016, էջ 24-25:

⁴ Մանրամասն տե՛ս Чернявский А.Г. Юридическая ответственность. М., 2015, էջ 179-180:

է լրացուցիչ հատկանիշներից մեկին, որն ընդգծում է իրավունքի համապատասխան ճյուղի ինքնուրույնությունը, ինչն էլ, իր հերթին՝ դրա կատարելության և ձևավորվածության հատկանիշ է: Անկասկած՝ ազգային իրավունքի ճյուղերի՝ քրեականի, վարչականի, սահմանադրականի, քաղաքացիականի, աշխատանքայինի, ֆինանսականի, քրեակատարողականի, քրեական-դատավարության և քաղաքացիական-դատավարության մեծամասնությունում գոյություն ունեն իրավաբանական պատասխանատվության ճյուղային ինստիտուտներ, որոնք իրավունքի ոլորտի միջուկ են և ապահովում այլ իրավական ինստիտուտների գործունեությունը: Տվյալ դեպքում խոսում ենք իրավունքի այս կամ այն ճյուղի շրջանակներում իրավական պատասխանատվության ինստիտուտի վերաբերյալ: Սակայն հարց է ծագում. հնարավոր է արդյոք խոսել իրավունքի ամբողջ համակարգի մակարդակում իրավական պատասխանատվության ինստիտուտի վերաբերյալ, և ինչպիսի՞ ինստիտուտ դա կհանդիսանա՝ դատավարական, թե՛ նյութական, բարդ կամ պարզ, գործառնական կամ ոչ:

Դ.Ա. Լիպինսկին համարում է, որ իրավաբանական պատասխանատվության ինստիտուտը դասվում է իրավունքի տարբեր ճյուղային ոլորտներին ծառայող պրակտիկային, իրականացնում է իրավախախտողների իրավաբանական պատասխանատվությանը ենթարկման հետ կապված կարևոր դրույթների «միջանցիկ» կարգավորում: Մինևույն ժամանակ՝ հայտնի աստիճանով դա կարելի է ներկայացնել նաև որպես նյութական իրավունքի ինստիտուտ: Այսպես՝ դրա կարգավորման առարկա կոնֆլիկտները, նեգատիվ (իրավախախտ) հարաբերությունները, որոնք, հասարակական վտանգավորության աստիճանից կախված՝ տարբերակվում են ըստ տիպերի, սակայն նման են ըստ կարգի⁵: Ռ. Լ. Խաչատուրովը և Ռ. Գ. Յագուտինը իրավաբանական պատասխանատվության կարգավորման առարկան դիտարկում են առավել լայն՝ համարելով, որ իրավաբանական պատասխանատվության ինստիտուտը կարգավորում է պետության կողմից ամրագրվող և

զարգացվող, ինչպես նաև՝ իրավախախտումներից ծագող հարաբերությունները⁶:

Իրավաբանական պատասխանատվության ինստիտուտի կարգավորման առարկայում իրավախախտման իրավաբանական փաստի հետ կապված հարաբերությունների ընդգրկումը պայմանավորված է ինչպես պոզիտիվ, այնպես էլ նեգատիվ ասպեկտ ունեցող իրավական պատասխանատվության լայն ընկալման և իրավական պատասխանատվության կարգավորիչ գործառույթի առկայության հիմնավորվածության հետ:

Կարգավորիչ գործառույթի իրականացումը ծառայում է իրավաբանական պատասխանատվության այլ գործառույթների ծագման նախադրյալ: Իրավաբանական պատասխանատվության ազդեցության կարգավորումը ձևավորվում է կարգավորիչ-ստատիկ և կարգավորիչ-դինամիկ ենթագործառույթներից: Եթե առաջինն ամրագրում է համապատասխան հասարակական հարաբերությունները, ապա երկրորդը կողմնորոշված է առկա հարաբերությունների զարգացմանը, փոփոխությանը և կատարելագործմանը: Կարգավորիչ-ստատիկ գործառույթի ազդեցությունը կապված է իրավական նորմերի հաստատման և դրանցով պատասխանատու, իրավական վարքագծի տարբերակների արտացոլման հետ: Իրավաբանական պատասխանատվության կարգավորիչ գործառույթի տեսակային ազդեցությունն օժտված է իր տարբերակիչ առանձնահատկություններով: Այսպես՝ քրեական պատասխանատվության կարգավորիչ գործառույթին ամենից քիչ է բնորոշ հասարակական հարաբերությունների որոշ տեսակների անմիջական ամրագրումը: Քրեական պատասխանատվությունն անմիջական չի ամրագրում սահմանադրական կառուցվածքի հիմքերը, սեփականության, հարկային հարաբերությունները, սակայն դա չի նշանակում, թե քրեական պատասխանատվությունը չի տիրապետում կարգավորիչ գործառույթի, քանի որ դրա առանձնահատկությունն է քրեաիրավական պաշտպանության տակ վերցված հասարակական հարաբերությունների դինամիկայի զարգացման հատկությունների առկայությունը:

⁵ Ст'у Липинский Д. А. Проблемы юридической ответственности. СПб., 2003, էջ 173-174:

⁶ Ст'у Хачатуров Р. Л. Ягутин Р.Г. Юридическая ответственность. Тольятти. 1995, էջ 66-67:

նը, դրանց բնականոն գործառնության ապահովումը: Իրավաբանական պատասխանատվության ցանկացած ճյուղային ինստիտուտ մասնակցում է կոնֆլիկտային չհանդիսացող կարգավորիչ հարաբերություններում:

Պատասխանատվության ինստիտուտն ունի օբյեկտիվ բնույթ, ամրագրված է նորմատիվ իրավական ակտերում և իրավաբանական պատասխանատվության իրականացման պոզիտիվ կամ նեգատիվ ասպեկտների արտաքին արտահայտման նախադրյալ է: Առանց իրավաբանական պատասխանատվության հաստատման՝ չի կարող ծագել դրա իրականացման վիճակը: Ընդ որում՝ պատասխանատվության ակունքները գտնվում են հասարակական հարաբերությունների պետաիրավական կարգավորման մեջ, վերջինս նաև դրա հաստատման անմիջական նախադրյալ է:

Նման տեսակի պատասխանատվությունը հենվում է իրավունքի նորմերի վրա, ենթարկվում է իրավական ձևավորմանը, այդ իսկ պատճառով՝ անվանվում իրավական, այսինքն՝ ունի է նորմատիվ-իրավական բնույթ: Իրավաբանական պատասխանատվության իրավական նորմերում հաստատումն առկա է մինչև իրավաչափ կամ իրավախախտ վարքագծի փաստը, մինչև դրա պատասխանատու կամ ոչ պատասխանատու գնահատականը: Եվ որքան լայն չմեկնաբանենք իրավունքի և իրավաբանական պատասխանատվության նորմատիվությունը, վերջնական արդյունքով դա արտահայտվում է իրավաբանական պատասխանատվություն նախատեսող իրավական նորմերի համակարգում:

Իրավաբանական պատասխանատվության ինստիտուտի կարգավորիչ բնույթի հակառակորդները ուշադրություն չեն դարձնում այնպիսի կարևոր ասպեկտին, ինչպես կարգավորիչ ազդեցության բաժանումը կարգավորիչ-ստատիկի և կարգավորիչ-դինամիկի, քանի որ պատասխանատվության ինստիտուտին մեծ աստիճանով բնորոշ է, հասարակական հարաբերությունների բնականոն գործունեությանը նպաստող և դինամիկայի զարգացման մեջ ամփոփված կարգավորիչ-դինամիկ ենթագործառնույթը: Ըստ մեր կարծիքի՝ իրավաբանական

պատասխանատվությունն իրավունքի պաշտպանիչ-կարգավորիչ ինստիտուտ է: Պաշտպանիչ-կարգավորիչ է նաև այն պատճառով, քանի որ կարգավորում է իրավախախտումների կատարման նկատմամբ լիազորված մարմինների ներգործությունը:

Իրավախախտման կատարման պահից սկսած՝ պետության մեջ (ի դեմս լիազորված անձի) ծագում են իրավախախտի նկատմամբ իրավասահմանափակումների կիրառության իրավունքը և պարտականությունը, ինչը նախատեսված է խախտված նորմի սանկցիայով և իրավաբանական պատասխանատվության ինչպես դասակարգային, այնպես նաև՝ նյութական ասպեկտները կարգավորող դրույթների հետ խիստ համապատասխանությամբ:

Այսպիսով՝ իրավաբանական պատասխանատվության ինստիտուտի կարգավորման առարկա են երկու տեսակի (տիպի) հասարակական հարաբերություններ, առաջինը՝ կոնֆլիկտային չհանդիսացող հարաբերությունները, և երկրորդը՝ իրավախախտման իրավական փաստի հետ կապված հարաբերությունները:

Իրավաբանական պատասխանատվության ինստիտուտի իրավական բնույթի և հատկանիշների հետազոտության համար անհրաժեշտ է պատասխանել այն հարցին՝ արդյոք այս ինստիտուտը նյութական կամ դատավարական է, մասնավոր թե՛ հանրային: Գիտնականները, ովքեր սահմանում են իրավաբանական պատասխանատվությունը որպես նյութական և դատավարական հարաբերությունների համախումբ, համարում են իրավաբանական պատասխանատվության ինստիտուտը նյութական-դատավարական: Սակայն իրավախախտման իրավաբանական փաստից բխող անբարենպաստ հետևանքներին ենթարկման արգելքները, պարտականությունները և պարտավորությունները նախատեսված են նյութական իրավունքի նորմերով: Քրեական գործի հարուցման, քննության դատավարական ինստիտուտները միայն նպաստում են իրավաբանական պատասխանատվության նյութական իրավախախտության զարգացմանը, դրանք վերջինիս հետ սերտորեն կապված են և կողմնորոշված ինչպես

⁷ Ст'ю Витрук Н.В. Общая теория юридической ответственности. М., 2012, էջ 59-60:

դրա կայացմանը, այնպես էլ իրականացմանը: Պատասխանատվությունը հաստատող դատավարական և նյութական նորմերի միջև սերտ կապի առկայությունը դեռ հիմք չէ իրավաբանական պատասխանատվության ինստիտուտի նյութական-դատավարականին դասակարգման համար:

Վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ իրավաբանական պատասխանատվությունը իրավախախտի նկատմամբ իրավական նորմերի սանկցիաներում նախատեսված պետական հարկադրանքի միջոցների կիրառությունն է: Իրավաբանական պատասխանատվությունը սոցիալական պատասխանատվության տարատեսակ է՝ միայն վերջինիս բնորոշ հատկանիշներով օժտված:

Իրավաբանական պատասխանատվության բնութագրական հատկանիշներն են՝

- ծագում է իրավախախտման կատարման դեպքում,
- կիրառվում է իրավունքի նորմերի խախտման պատճառով,
- անմիջական կապված է իրավախախտում կատարած սուբյեկտի հետ,
- ամրագրվում և հսկվում է իրավական նորմի սանկցիաներով,
- իրավական կարգադրագրերի խախտման նկատմամբ պետության ներգործության միջոց է,
- արտահայտվում է պետական հարկադրանքի միջոցների կիրառման մեջ,
- հանգում է իրավախախտողի համար իրավունքի նորմերով նախատեսված նեգատիվ հետևանքների,
- հաստատվում է միայն իրավախախտման բոլոր հատկանիշների առկայության դեպքում,
- կիրառվում է պետության լիազոր մարմինների կողմից,
- իրականացվում է ընթացակարգային դատավարական ձևերով,
- հետապնդում է որոշակի նպատակներ և իրականացնում հատուկ գործառույթներ,

- հենվում է իրավական նորմերի վրա, ֆորմալ սահմանված և օժտված է հստակությամբ, որոշակիացված և ընդհանուր պարտադիրությամբ,
- ապահովված է պետական հարկադրությամբ կամ պետական համոզմամբ,
- իր հետևանքներով հանգում է պետական հավանության, խրախուսման կամ դատապարտման, պատժի,
- իրականացվում է ընթացակարգային (դատավարական, պրոցեսուալ) ձևով,
- բնորոշ են համակարգվածությունը և հարաբերական առանձնացվածությունը, հիմնական որակով իմպերատիվ, ինչպես նաև լրացուցիչ որակով՝ դիսպոզիտիվ և խրախուսական մեթոդները,
- նախքան իրավախախտման կատարման փաստը դրա կարգավորման առարկա են առավել կարևոր հասարակական հարաբերությունները,
- իրավախախտման կատարման դեպքում կարգավորման առարկա են պատասխանատվության նյութական հարաբերությունները,
- նյութական և դատավարական իրավունքի հանրային ինստիտուտ է, բարդ կառուցվածքով օժտված, և ընդգրկում է իրավաբանական պատասխանատվության տարբեր սուբինստիտուտներ,
- իրականացնում է կարգավորիչ, կանխարգելիչ, պատժիչ, վերականգնող և դաստիարակչական գործառույթներ,
- բնութագրվում է կոորդինացման և սուբորդինացման բարդ փոխկապվածություններով:

Ամփոփելով սույն ենթագլխի վերլուծության արդյունքները՝ կարելի է հանգել հետևյալ եզրահանգումների և հետևությունների.

Իրավաբանական պատասխանատվությունը իրավախախտողի նկատմամբ իրավական նորմի սանկցիայով նախատեսված անձնական, գույքային և կազմակերպական բնույթի սահմանափակումներ առաջացնող պետական հարկադրանքի միջոցների կիրառումն է:

ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան (հայցորդ),
 ՀՀ Տավուշի մարզի դատախազության դատախազ

ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Իրավաբանական գրականության մեջ հազվադեպ է հիշատակվում այն մասին, որ իրավունքի ու բարոյականության տարանջատման սկզբունքի հետ կապված է ևս մեկ ուշագրավ իրավաբանական-պոզիտիվիստական գաղափար, որը սահմանում է իրավունքի գերակայությունը բարոյականության հանդեպ: Եթե բնական իրավունքի մեջ բարոյական սկզբունքի արժեքային գերակայությունն իրավաբանական ոլորտում ենթադրվում է որպես իրավունքի ու բարոյականության օրգանական կապի անհրաժեշտ դրսևորում, ապա պոզիտիվիստական դոկտրինաներում նման գերակայությունը կարող է արդարացված լինել միայն դրանց տարանջատման և մեթոդաբանական հակադրման պայմանով: Մենք տեսանք, թե ինչպես են պոզիտիվիստները քայլ առ քայլ շարժվում այդ ուղղությամբ: Առաջին դիրքը, որտեղ նրանք ամրացան, արտաքին հիմնավորման անհրաժեշտություն չունեցող իրավունքի՝ որպես նորմատիվային կարգավորիչի, «ինքնավարությունն» ու «ինքնաբավությունն» էր: Հ. Քելզենի իրավունքի մասին զուտ ուսմունքը¹ և Հ. Հարթի «վերլուծական» կառուցվածքները² պոզիտիվիստների համար դարձան դասական օրինակներ «Իրավունքին իմմանենտ եղանակներով իրավունքն իրավունքից արտածելու» համար: «Վիեննական դպրոցի» (XX դարի սկիզբ) ժամանակներից այս միտքը չափանիշ դարձավ իրավաբանական պոզիտիվիզմի առանձին ուղղության ձևավորման համար, որը քննադատաբար մերժում էր «ոչ իրավունքից իրավունք ստեղծելու» ցանկացած փորձ, որտեղից էլ դա բխեր՝ բնական իրավունքից, թե սոցիոլո-

գիական պոզիտիվիզմից³: Այնուհետև գրավեց երկրորդ սահմանագիծը՝ իրավունքի համար արժեքային յուրահատուկ տեսության ստեղծումը (Հ. Քելզեն և նրա հետնորդները), որտեղ իրավական նորմի արժեքը հասկացվում է որպես դրա իրականություն: «Իրավական նորմն ինքնին ճշտիվ կամ սուտ չէ, այլ միայն՝ իրական»։ Նեոկանտական բանաձևին արդեն կարելի է ավելացնել մեկ ուրիշը. «Իրավական նորմն ինքնին արդար կամ անարդար չէ, այլ միայն՝ իրական»։ Այստեղից հնարավոր է եզրահանգում, որը բացեիբաց ձևակերպում են շատ պոզիտիվիստներ. իրավունքն այն միակ նորմատիվ կարգավորիչն է, որը, շնորհիվ այն հանգամանքի, որ բոլոր պարագաներում իրական է, ընդունակ է բավարար մակարդակով ապահովելու հասարակության կազմակերպական և այլ կայունությունը նրա կառույցների ճնշող մեծամասնության հոսունության ու եթերայնության պայմաններում: Այսպիսով՝ ստացվում է, որ իրավունքը գերակա կարգավորիչ է, որն ունակ է դիմակայելու արդի բարոյականության ու կրոնի համար քայքայիչ բազում հարվածներին:

Վերը նշված գործոնների ազդեցության տակ ձևավորվում է «համաիրավաբանական» յուրատեսակ գաղափարախոսություն՝ XX դարի հոգևոր կյանքում ուրույն մի երևույթ: Դա սկզբնավորում է այնպիսի խոշոր իրավագետների աշխատություններում, ինչպիսիք են Դ.Օստինը, Ռ.Շտամլերը, Ա.Մերկլը, Վ.Կրաֆտը, Ա.Ֆերդրոսը, Հ.Քելզենը, Հ.Հարթը, Ռ.Մարչիչը և այլք⁴, ընդ որում՝ նրանցից շատերը, լինելով գաղափարախոսությունների և արժեքային

¹ Տե՛ս Kelsen H. General Thosor pf Law and State. Cambridge. 1961.
² Տե՛ս Hart H.L.A. The Concept of Law. Sec. Ed., 1997.
³ Տե՛ս Козлихин У.Ю., Поляков А.В., Тимошина Е.В. История политических и правовых учений. СПб.,2007, էջ 381-382, Рассолов М.М. История политических и правовых учений. М., 2010, էջ 408-409:
⁴ Տե՛ս Нерсисянц В.С. Философия права. М., 2006, էջ 763-824:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 121 2021

մոտեցումների կատարի քննադատներ, թերևս՝ ամբողջովին հաշիվ չէին տալիս իրենց, որ իրենց իսկ ջանքերով ստեղծվում է յուրատեսակ «իրավաբանական տեխնոկրատիա» կամ, ամեն դեպքում, նոր, «տեխնիզացված» իրավաբանական գաղափարախոսություն՝ յուրահատուկ իրավական արժեքների սեփական համակարգով:

Վերոնշյալ իրավագետների համար ընդհանուրն այն էր, որ իրավական ձևը նրանք դարձրեցին հասարակական շարժման բացարձակ և անվերապահ սկզբունք՝ ընդգծելով, որ սոցիալական կարգավորման ոլորտում ամենայն կայունը, կարգավորողը, կանոնակարգողը կարող է բացատրվել միմիայն իրավունքի, այլ ոչ՝ բարոյականության տրամաբանական վերլուծման միջոցով: Իրավաբանական պոզիտիվիզմը հատուկ «ծառայություններ» ունի իրավունքի ու բարոյականության տարանջատման գործում, և դրա շատ ուղղություններ օրինաչափորեն հանգեցին բարոյականության հանդեպ իրավունքի գերակայության հաստատման գաղափարին: Արտաքուստ «բարոյականության հանդեպ իրավունքի գերակայությունը» նման է հակառակ ձևով շուռ տված բնական-իրավական հին պնդմանը, որն արդարացնում է «բարոյականության գերակայությունն իրավունքի հանդեպ»:

Նորմատիվ կարգավորիչ այլ համակարգերի, առաջին հերթին՝ բարոյականության հանդեպ «իրավունքի գերակայության» հաստատման առումով ուշագրավ է սկանդինավյան «իրավաբանական ռեալիզմի» մեթոդաբանական փորձը⁵: Պետք է ասել, որ դա ոչ այնքան արդի ուսմունք է, այդուհանդերձ՝ բավականաչափ արմատացած է պոզիտիվիստական իրավական մտքի ավանդույթներում: Այստեղ, ինչ խոսք, հնարավորություն չկա վերլուծելու աշխարհահայեցողական ու իմաստաբանական այն բոլոր նախադրյալները, որոնցից «ռեալիստները» քաղում էին իրենց եզրահանգումները, բայց ամեն դեպքում անհրաժեշտ է նշել արժեքային դրույթների այն համալիրը, որի հի-

ման վրա կառուցվում էին իրավունքի ու բարոյականության ամենաարմատական, ծայրահեղական վարկածները: Այդ համալիրի հիմքում ընկած է իմացաբանական մի սկզբունք. մերժել, որ արժեքները և արժեքային ասույթներն ունեն տեսական կամ գործնական որևէ նշանակություն: Այս առումով սկանդինավյան իրավաբանական ռեալիզմն ունի երկու ցայտուն առանձնահատկություն: Դրանցից մեկն այն է, որ գիտատեսական դրույթներն արժեքային, բարոյական դատողություններից անջատելու ընդհանուր-պոզիտիվիստական սկզբունքն այստեղ հասցված է ամենայն ծայրահեղության: Երկրորդ առանձնահատկությունը հոգեբանական ռեդուկցիոնիզմն է, այսինքն՝ արժեքային դատողությունն այստեղ հավասարեցված է զուտ հուզական ակտի, հոգեբանական ապրումի, զգացմունքային պոռթկումի: Այս երկու առանձնահատկությունն էլ բխում էին սկանդինավյան իրավաբանական ռեալիզմի դպրոցի հիմնադիր Աքսել Հեգերշտրոմից, սակայն այս դպրոցի բոլոր ներկայացուցիչներն էլ զարմանալի միահամուռությամբ մերժում են արդարության, բարոյականության մասին դատողությունները՝ որպես իրավաբանության առարկա: Արդարության մասին կոչեր անել,- գրում է, օրինակ, դանիացի գիտնական Ալֆ Ռոսը,⁶- նույնն է, ինչ բռունցքով հարվածել սեղանին: Ըստ Վ. Լունդստեդի՝ արդարության մասին դատողությունները, ինչպես և բոլոր արժեքային դատողությունները, միշտ էլ մնում են արժեքի զգացմունքի արտահայտություններ, հետևաբար՝ բնորոշվում են անձի զգայական սուբյեկտիվ դիրքորոշումներով, իսկ դա նշանակում է, որ արժեքային, բարոյական ոչ մի դատողություն բառի բուն իմաստով դատողություն չէ: Դրանք չեն կարող ճիշտ կամ սուտ լինել, քանի որ ուղղակիորեն չեն առնչվում իրականության հետ⁷: Վ. Ձունստեդի սխալը տիպական է իրավաբանապոզիտիվիստական վաղ տեսությունների համար: Նա համարում էր, թե ճշմարտության չափանիշի անկիրառելիությունն արժեքային դատողությունների վերաբերյալ վկայում է, որ

⁵ Տե՛ս Козлихин И. Ю., Поляков А.В., Тимошина Е.В. История политических и правовых учений. СПб., 2007, էջ 432-443:

⁶ Ross A. On Law and justice. Berkeley University of California. Press. 1959.

⁷ Տե՛ս Bentham J. Of Laws in general. L. Univeersity of London.

դրանք միանգամայն անհաղորդ են իրականությանը, ընկած են իրական կյանքից դուրս: Հին պոզիտիվիստները չէին տեսնում ու չէին հանդուրժում աշխարհի ճանաչման ոչ մի ուղի՝ բացի գիտականից: Իրավունքի բովանդակությունը, պնդում է սկանդինավյան իրավաբանական ռեալիզմի մեկ այլ ներկայացուցիչ Կ.Օլիվեկրոնան, բանական բազում ցանկությունների արդյունք է և չի կարող լինել որոշակի բնածին բարոյական համոզմունքների արտացոլում: Իրավունքի ու բարոյականության հարաբերության հարցը, համարում է Կ.Օլիվեկրոնան, «երկու ինքնուրույն էությունների հարց չէ»: Իրավունքի վրա բարոյականության ազդեցությունը սահմանափակ է և հնարավոր է միայն իրավաբանական փոքրաթիվ հիմնարար նորմերի հանդեպ, իսկ նոր իրավունքն առաջանալիս թույլ և երկրորդական բարոյական շարժառիթները համապատասխան գործընթացների վրա ներազդելու իրենց կարողությամբ զգալիորեն զիջում են մարդկանց եսասիրական շահերի ազդեցությանը: Մեզանից յուրաքանչյուրը, գրում է Կ.Օլիվեկրոնան, ձևակերպում է իր բարոյական հասկացություններն իրավունքի ազդեցության ներքո, թեև պոզիտիվիստական բնորոշման համաձայն՝ չի ձգտում գործել նման ազդեցություն, իրավունքի նորմերը՝ որպես «անկախ իմպերատիվներ», չպետք է ունենան բարոյական էֆեկտ կամ հանգեցնեն բարոյական վրդովմունքի: «Իրավունքը սկզբնական գործոն է: Անհատի բարոյական գաղափարները զարգանում են նրա ազդեցության տակ...⁸»: Պատասխանելով այն հարցին, թե ինչ զգացմունքներ ու գաղափարներ են սնուցում այս կամ այն օրենսդրության շարժառիթները, Կ.Օլիվեկրոնան հանգում է «ինքնաշահի» (self-interest) հասկացությանը, որի հետևում հստակորեն նշմարվում է վախի զգացմունքը՝ սեփականությունը, անվտանգությունը, կյանքի հարմարավետ պայմանները կորցնելու վախը: Մարդասպանին պատմելու զգացմունքը հիմնականում պայմանավորված է մեր սեփական անվտանգության համար վախով, ինքնապահպանման տարրական բնազդով: Ո՞վ կարող է կասկա-

ծել,- գրում է Օլիվեկրոնան,- որ այս դրդապատճառը շատ ավելի հուժկու է, քան ամեն տեսակ բարոյական հիմնավորումները: Մյուս կողմից՝ ինչպես ցույց է տալիս պատմությունը՝ բարոյական զգացմունքներից բխող շարժառիթներն իսկույն և ամբողջովին վերանում են բոլոր այն դեպքերում, երբ ընդհարվում են ուժ և իշխանություն ունեցող մարդկանց «ինքնաշահերի» հետ: «Օրինակ՝ եղևի է երբևէ, որ հարուստները և ուժեղները, ելնելով բարոյական հիմքերից, առաջարկեն օրենքներ սեփականության ավելի հավասար բաշխման մասին: Ո՛չ մի անգամ», - գրում է Կ.Օլիվեկրոնան⁹:

Վ.Ս. Ներսեսյանցն իրավամբ համարում է, որ իրավունքն օբյեկտիվ սոցիալական երևույթ է՝ իրեն բնորոշ հատկություններով օժտված: Իրավունքը սերտորեն կապված է մարդկանց հավասարության և նրանց հարաբերություններում սոցիալական արդարության հաստատման հետ:

«Իրավունքի առանձնահատկությունը, օբյեկտիվ բնույթը և, դրա հետ մեկտեղ՝ տարբերությունը սոցիալական կարգավորման տիպերից արտահայտված են ձևական հավասարության սկզբունքում: Նման իրավաբանական մոտեցման դիրքերից՝ հենց իրավունքի՝ որպես հավասարության, ազատության և արդարության համընդհանուր ու անհրաժեշտ ձևի, օբյեկտիվ առանձնահատկությունն է որոշում օրենքի սանկցիաների յուրօրինակությունը (համապարտադրականությունը, պետական-իշխանական պարտադրականությունը և այլն), և ոչ թե պաշտոնական-իշխանական պարտադրականությունն է պայմանավորում ու ծնում իրավունքի այդ առանձնահատկությունը, գոյության տարբերակիչ հատկությունները և բնութագրերը»¹⁰:

Հարկադրանքը և բռնությունն իրավունքի օբյեկտիվ հատկությունը չեն, այլ՝ արտաքուստ պետության կողմից իրավունքին հաղորդվող որակ: Հետևաբար՝ սկզբունքային նշանակություն է ստանում այն հարցը, թե ինչին է հարկադրանք հաղորդվել՝ իրավունքին, թե՛ կամայականությանը: Եթե իրավունքին, ապա մենք

⁸ Տե՛ս Olivecrona K. Law as Fact. Copenhagen.1939, էջ 156,161:

⁹ Նույն տեղը, էջ 167:

¹⁰ Տե՛ս Ներսեսյանց Վ.Ս. Իրավունքի և պետության տեսություն: Երևան, 2001, էջ 53-54:

գործ ունենք իրավական օրենքի հետ: Հակառակ դեպքում առկա է հակաիրավական բռնատիրություն:

Ընդ որում՝ գիտականորեն հիմնավորված է, որ իրավունքն իր ծագման օրից մինչև մեր օրերը միշտ էլ եղել ու մնում է ձևական (իրավական) հավասարության, ազատության և արդարության ձև, միասնական չափ ու ընդհանուր մասշտաբ:

Մեր կարծիքով՝ ընդհանուր եզրահանգումը այն է, որ իրավունքի նորմերը հիմնվում են ոչ միայն այն զգացմունքների վրա, որոնք հասարակության աչքին առավել արժեքավոր են բարոյական տեսանկյունից, այլև իրենց իրավաբանական ուժը ստանում են անմիջապես սոցիալական շահերի դինամիկայից, և այդ ուժը թույլ է տալիս նրանց դառնալ բարոյական ստանդարտների ձևավորման ու փոփոխման կարևոր միջոց:

Արժեքային նիհիլիզմի ռեալիստական սահմանումների ամենահետևողական պաշտպաններից էր սոցիոլոգ Թեոդոր Գեյգերը, ով փորձում էր տեղափոխել այս հիմնահարցը տեսական հարթությունից սոցիալական պրակտիկայի ոլորտ:

Արտաքուստ սուբյեկտի գնահատականը արտահայտող, իսկ իրականում զուտ գնահատականի սուբյեկտի հուզական իրավիճակը նախանշող բարոյական, ինչպես նաև՝ գեղագիտական դատողությունների ողջ խմբի համար Գեյգերը քննադական-ճանաչողական տեսանկյունից ոչ մի արդարացում չի գտնում: Արժեքային դատողությունն ավելի շատ վկայում է գնահատող սուբյեկտի, քան գնահատվող օբյեկտի մասին, օբյեկտավորում է խոսողի սուբյեկտի վերաբերմունքն առարկայի հանդեպ, կեղծ օբյեկտիվական տարր է ներբերում իր ձևով տեսական բնույթ ունեցող պնդման մեջ: Հենց այսպես է ծնվում մարդկանց գործողությունները ղեկավարելու հավակնող պատրանքը: Իսկ դա, ըստ Գեյգերի, անօրինական է: Արժեքային դատողությունների վրա հիմնված գործելակերպն անընդունելի է¹¹: Սակայն, եթե տեսականորեն ճիշտ է, որ արժեքային դատողություններն «անօրինական» են ու անհան-

դուրժելի, ապա դրանից հետևում է գործնական արժեքային նիհիլիզմ: Ինչ է դա:

Ես, մտորում է Գեյգերը, չեմ կարող դիտարկել բարու և գեղեցիկի արժեքային գաղափարները՝ որպես հասարակ պատրանքներ, իներցիայի ուժով համարել առարկաներն ու գործողությունները բարի և գեղեցիկ, նման հատկություններով դրանց օբյեկտիվորեն օժտված լինելու հանգամանքի հաշվառմամբ: Ես պետք է դադարեմ մտածել արժեքներով, հրաժարվեմ, իբրև թե, տեսականորեն ճիշտ ասույթներից, որոնք քողարկում են իմ զգայական գրգռումները: Եթե ես տեսաբանում եմ, ապա պետք է լինեմ գործնական արժեքային նիհիլիստ: Այստեղից ընդամենը մի քայլ է մնում դեպի բարոյական նիհիլիզմ, ինչը բավականին հազվադեպ երևույթ է սոցիալական մտքի պատմության մեջ:

«Ինչպիսի՞ հետևանքներ ունի տեսական ու գործնական նիհիլիզմը բարոյականության համար: Շատ պարզ. նիհիլիստի համար չկա ո՛չ մի արժեքային բարոյականություն: Եվ ի՞նչ՝ դա սոցիալական աղետ է: Իհարկե, ոչ ... բարու արժեքային գաղափարի պատրանքի կործանումը սոցիալապես վնասակար չէ, չի կարող այդպիսին լինել, քանի որ «սոցիալական վնաս» եզրույթն ինքնին անբովանդակալից է¹²»: Արժեքային նիհիլիզմի զոհն է դառնում, ըստ Գեյգերի, արժեքային բարոյականությունը, այսինքն՝ այն բարոյականությունը, որը ներառում է ներքին անձնական պարտականության պատրանքային տարրը, ոտնձգություն չի կատարում արտաքին սոցիալական պարտականության վրա: Այս վերապահումն արված է, հավանաբար, իրավունքի, արտաքին կարգավորիչի վերաբերյալ և չի վերաբերում բուն բարոյականությանը, որի առնչությամբ շատ կարծր եզրահանգումներ են արվում: Այն, որ Գեյգերի թեզն արժեքային նիհիլիզմի «սոցիալական անվնասության» մասին վստահելի չէ, երևում է Գեյգերի մտորումներից արդի տեխնիկացված հասարակության մեջ բարոյականության ճակատագրի վերաբերյալ, որտեղ արդեն անհնար է խոսել բարոյականության՝ որպես սոցիալական կենսակարգի մա-

¹¹ Տե՛ս Козлихин И.Ю. Поляков Е.В. История политических и правовых учений. СПб., 2007, էջ 437: Նույն տեղը, էջ 438-439
¹² Նույն տեղը, էջ 438-439:

սին: Ճիշտ է՝ Գեյզերն ընդունում է իրավունքի ու բարոյականության գենետիկական ընդհանրությունը, դրանց առաջացումը մի ընդհանուր պատմական արմատից, սակայն համարում է, թե՛ «բևեռացման ընթացքում բարոյականությունն ու իրավունքը ծավալվեցին որպես տարբեր սկզբունքների վրա հիմնված վարքի կազմակերպման երկու որոշակի ձևեր», ընդ որում՝ մարդկության ողջ պատմությունը, առնվազն վերջին 400 տարվա ընթացքում, զարգանում էր դիվերգենցիայի իրավունքի ու բարոյականության ավելի ու ավելի խորացող տարանջատման ճանապարհով: Թ. Գեյզերն ուղղակիորեն ասում է, թե մեր ժամանակներում իրավունքի ու բարոյականության միջև ոչ մի ընդհանրություն չկա:

Բարոյականությունը կարգավորման իր վոլյունտարիստական, կամայական մեթոդներով առճակատման մեջ է մանում սոցիալական կապերի զարգացող ռացիոնալացման հետ:

Ժամանակակից բարձր ինստիտուալացված հասարակության մեջ բարոյականության դերն անշեղորեն թուլանում է: Արժեքային դրույթների անտագոնիզմը հանգեցնում է անհատական բարոյական նորմատիվ համակարգերի խոր դիվերգենցիայի: Ինդուստրիալ հասարակությունը գործ ունի միջինի բերված անձի հետ, ով դեռ ամբողջապես համահարթեցված չէ արժեքային իմաստով, սակայն անշեղորեն հեռանում է նախկին բարոյական մոլեռանդությունից դեպի ապագա բարոյական անտարբերություն: Վերջնական տրոհումից և անարխիայից հասարակությունը կարող է փրկել իրեն միայն սոցիալ-տեխնիկական սկզբների հզորացման ու սոցիալական կարգի արժեքային բաղադրիչների դուրս մղման ճանապարհով: «Ըստ էության,- համաձայն է Գեյզերը,- դա վատ հեռանկար է մարդկության համար»: Այդուհանդերձ՝ այդ հեռանկարը նրան թվում էր անխուսափելի: Բարոյական կարգավորման ազդեցության անկումը և արտաքին իրավական ձևերի նշանակության մեծացումը նա կապում էր շատ ավելի ընդհանրական «ճգնաժամի» հետ, որը, ըստ իրեն՝ ժամանակակից ռացիոնալիզացման պայմաններում ապրում են արժեքային սուբյեկտիվիզմն ու մտածողության գաղա-

փարական ձևը:

Մեր ժամանակաշրջանում, ավելի շատ, մարդը հույսը դնում է ոչ թե բարոյականության ու կրոնի, այլ՝ իրավունքի վրա, հասարակությունն ավելի բարյացակամ է վերաբերվում իրավաբաններին, քան քահանաներին ու բարոյախոսներին: Առաջին անգամ պատմության մեջ իրավաբանական մասնագիտությունը դարձավ զանգվածային և հասավ հասարակական հարգի ամենաբարձր աստիճանին: Իրավունքի սոցիոլոգիայի և տեսության մեջ ավելի ու ավելի բարձր ու համառորեն է հնչում հասարակության կյանքում իրավական համակարգի դերի կարևորման թեման, համարվում է, թե դա «հիմնական աշխատանքն» է կատարում հասարակական համակարգի ինքնաապահովման գործում (Գ.Շելսկի), արտահայտում է հասարակության վիճակն ու դրա էությունը (Վ.Մայհոֆեր), իրականացնում է «մարդկանց համատեղ կյանքի գլխավոր կարգավորիչի» գործառույթներ՝ իր ազդեցության ոլորտի մեջ ներառելով էթիկան, բարոյականությունը, կոնվենցիաները և նորմատիվային մյուս կարգերը (Ռ.Մարչիչ)¹³: Ն.Լումաննի՝ իրավունքի սոցիոլոգիայի տեսանկյունից՝ ժամանակակից իրավական իրավիճակն արտացոլում է իրավունքից գերագույն պոզիտիվիստականություն պահանջող արդի բազմակարծիք հասարակության կազմակերպական կառույցների բազմապիսությունն ու բարդությունը: Սակայն ինչ է դա նշանակում: Նախ և առաջ՝ հասարակության կողմից օրենքների աճող պահանջմունք: Այդ օրենքների քանակն աճում է ու աճում: Աշխարհը հեղեղվում է նորանոր օրենքներով, որոնք ընդունվում են բոլոր մակարդակներով ազգայինից սկսած և միջազգայինով վերջացրած: Բավականին արագ է ընթանում նաև իրավունքի էքսպանսիան դեպի սոցիալական ոլորտներ, որտեղ առաջ բավական էին բարոյական կարգավորիչները: Այս միտումը բխում է ոչ միայն այն փաստից, որը Թ. Գեյզերը ոչ առանց սարկազմի անվանում է «սոցիալական անմեղության կորուստ», այլև մարդկանց հասկանալի ձգտումից՝ ապահովելու հասարակական ինստիտուտների անխափան և կանխատեսելի գործունեությունը և ստեղծել, որտեղ կարելի է,

¹³ См. Нерсесянц В.С. Философия права. М., 2006, էջ 813-814:

հուսալի նախադրյալներ ցանկալի արդյունքին հասնելու համար:

Ինչպես, նշում է Վ. Ս. Ներսեսյանցը. «Ակնհայտ են նաև իրավունքի աստվածաբանական, բարոյական և այլ մեկնաբանությունների թերությունները, որոնք սոցիալական նորմերի (և կարգավորիչների) տարբեր տեսակներն իրար հետ խառնելու, իրավունքի առանձնահատկությունն անտեսելու, իրավունքի և պետության մասին ուսմունքի աստվածաբանացման և էթիկանացման, իրավունքը կրոնական ու էթիկական երևույթներով նենգափոխելու, գործող իրավունքին (օրենքին) և պետությանը ոչ համարժեք (ոչ իրավական) պահանջներ առաջադրելու մեջ»¹⁴: Ըստ մեծանուն գիտնականի. «Բարոյական իրավահասկացողությունն անխուսափելիորեն խեղաթյուրում է ոչ միայն իրավունքի, այլ նաև՝ բարոյականության էությունը, քանի որ իրավունքի բարոյականացումն անխուսափելիորեն ուղեկցվում է բարոյականի իրավաբանացմամբ: Թե՛ այս, թե՛ այն դեպքում իրավունքին ու բարոյականին վերագրվում են կամայական բովանդակություն և նշանակություն»¹⁵:

Եվ իսկապես՝ իրավական տարրերը բարոյական տարրերից ավելի լավ են «աշխատում» սոցիալական վերահսկողության մեխանիզմներում, ինչպես նաև՝ ավելի հարմար են կենսական հաջողությունները հաշվարկելու համար: Բարոյական պարտավորություններն, այսօր համարվում են պակաս հուսալի, քան իրավաբանական պարտավորությունները, որոնց կատարումը երաշխավորվում է իրավունքով, օրենքով և դատարանով: Այս ամենը, ինչ խոսք, հետնաբեմ է մղում ավանդույթները, բարոյա-

կանությունը, նախապես չկազմակերպված կապերը, ոչ ֆորմալ համաձայնությունները՝ ստիպելով հասարակությանն իրավական նորմերին ու իրավունքին իշխանություն տալ նույնիսկ հասարակական հարաբերությունների այն ոլորտներում, որոնք մինչև վերջին ժամանակներն ազատ էին իրավաբանական միջամտությունից: Միտումը, որի մասին խոսում ենք, այսօր ամենևին էլ չի սպառել իրեն, սակայն որոշակի հասարակական ուժերի մեջ արդեն ծնել է «գերկազմակերպվածության», «գերկարգավորվածության» մերժում: Իրավական էքսպանսիայի այս երևույթները տագնապ են հարուցում նաև բուն իրավունքի ճակատագրի վերաբերյալ: Հասցված լինելով բարդագույն իրավաբանական տեխնիկայի՝ իրավունքը յուրահատուկ գործիք է դառնում մասնագետների (երբեմն նաև՝ ոչ մասնագետների, ինչը շատ ավելի վատ է) ձեռքին, խորթ ու անհասկանալի է հասարակության համար, քանի որ արդեն անընդունակ են դառնում ներառելու մշակույթի ողջ հարստությունը և ծառայելու սոցիալական համակարգի հիմնարար նպատակներին: Միջազգային համաժողովներում իրավաբան գիտնականների կողմից քննարկվող ամենակարևոր և տագնապալի թեման է խորացող ճեղքը հասարակության ու իրավունքի միջև, այս բացասական երևույթը հղի է սոցիալական կառույցների տոտալ քայքայումով:

Սոցիալական կարգավորման իսկական նպատակներին կարելի է հասնել՝ միայն զարգացնելով բարոյական և իրավական նորմերի համակարգերը մեկ ընդհանուր ուղղությամբ, որը բնորոշվում է հասարակության արժեքներով:



¹⁴ Տե՛ս Ներսեսյանց Վ. Ս. Իրավունքի և պետության տեսություն, Երևան, 2001, էջ 54:

¹⁵ Նույն տեղում, էջ 55:

ЛЕВОН АРУТЮНЯН

Соискатель Института философии, социологии и права НАН

СИСТЕМА НАЦИОНАЛЬНОГО ПРАВА: ИСТОРИЯ И СОВРЕМЕННОСТЬ

Право в качестве социальной нормативной регулирующей начало формироваться в Армении в период “родовых государств”, “родового владения”, “ранней государственности” или “ранних государственных образований” (в период с последней четверти III тысячелетия до н. э. до начала первого тысячелетия до н. э.).

По словам автора, длительную историю развития права можно разделить на два больших периода: догосударственное право (исходный или нижний период развития права) и государственное право (период развитости права или верхний период).

Так же, с некоторой условностью, можно охарактеризовать историю армянского права.

Согласно американскому историку Дж. Вигмору, развитие права прошло по следующим направлениям¹: от классической законотворческой деятельности до законодательной деятельности, от неписаного права до письменного законодательства, от патриархальной семьи до единобрачия². А известный австрийский юрист Ганс Келзен различает три разновидности развития права: межгосударственное (доисторическое), государственное и надгосударственное (международное).

Известно, что в первобытно-общинном строе правила поведения носили недифференцированный (синкретный) характер. В научной литературе они получили название “мононор-

мы”³. По своему характеру они отражали закрепившиеся в родовом строе и устойчивые обычаи и традиции, которые концентрированно отражали представления о добре и зле. Основной задачей мононорм было соблюдение целостности рода, его безопасность и жизнеспособность. В этих мононормах еще не были дифференцированы права от обязанностей, религиозные нормы от моральных норм и др.

Поскольку сознание первобытного человека носит недифференцированный характер, таковым являются и его быт и соответствующие ему социальные нормы.

В Армении в период теогосударственного (религиозно-государственного или теократического) царства Аратта XV-XII вв., Наирийские “страны” XIII-IX вв., а также центрального Ванского (Араратского, Урартского) царства IX-VI вв., царства Айказидов (612 до н. э - 331 до н. э.)⁴ в Армении завершается расслоение общества по классам и нормативная основная регулирующая общественных отношений - обычное право. Основным источником законодательной деятельности царской власти также было право обычая.

Из истории права известно, что самым исходным и самым старым источником права был обычай, а его действующее последствие - обычное право⁵.

Однако не любой обычай может стать

¹ Подробно см. Ավագյան Ռուբեն, Հայ իրավական մտքի գաղափարն (մ. թ. ա. IX դ. - մ. թ. XIX դ.): Երևան, 2001. Авакян Рубен, Авакян Рафаэль, Истоки армянской правовой мысли. Ереван, 2008, Петибян С.Г., Романовская В.Б. Эволюция источников армянского права с древнейших времен до середины XIX века. М., 2014.

² См. Витмор Дж. Г. Проблемы права. Его прошлое, настоящее и будущее. Литлтон, 1988, 1-е изд. - 1920, Kelsen H. General Theory of Law and State, N.Y. 1991, с. 127-128.

³ См. Першиц Л.И. Проблемы нормативной этнографии. В кн. Исследования по общей этнографии. М., 1979, с. 213, Розин В.М., Генезис права. М., 2001, с. 23-40.

⁴ См. Ավագյան Ռուբեն, Հայ իրավական մտքի գաղափարն (մ. թ. ա. IV - մ. թ. ա. XIX դդ.): Երևան, 2001, стр. 3- 8. Сукиасян А.Г. Государство и право, Урарту, Ереван, 1963, Մովսիսյան Արտակ, Հայոց պատմություն: Երևան, ԵՊՀ, 2011, с. 10, 14.

⁵ См. Սամուելյան Խ. Հայ սովորութեան իրավունքը: Հին հայոց իրավունքը և նրա հետազոտման մեթոդը: Առևանգմանը և գնմանը ամուսնություն, Թիֆլիս, 1911. Того же автора, Հին հայ իրավունքի պատմություն, հատոր I, Երևան, 1939, с. 26-40.

обычным правом, а лишь те обычаи, которые, вследствие длительного и постоянного применения в обществе, приобрели правила обязательного для всех поведения, иными словами – значение неписаного закона.

Согласно известному римскому юристу Ульпиану: “Обычай – это молчаливое согласие народа, определенное длительным опытом, и длительный обычай нужно соблюдать как право и закон в этих случаях, когда нет писаного закона”⁶.

Тем не менее, каким требованиям должно удовлетворять обычное право? Каковым оно должно быть, чтобы эффективно воздействовать на общественные отношения? Так, по мнению российского юриста Г.Ф. Шершеневича, обычное право должно отвечать следующим требованиям:

- а) нормы обычного права должны основываться на правовых убеждениях,
- б) не должны противоречить разуму и
- в) не иметь заблуждений в своей основе.

Автор, резюмируя свою мысль, отмечает, что о наличии обычного права можно говорить тогда, когда в основе единообразно и многообразно повторяющихся норм лежит правовое сознание или народное убеждение⁷. Согласно английскому юристу Н. Салмонду, обычное право должно иметь характер древнего обычая и существовать “с незапамятных времен”⁸.

Таким образом, можно заключить, что обычное право должно обладать достаточным сроком давности, не противоречить логике и добрым и справедливым традициям. Наряду с этим, “традиция – это то, с чем согласны и что добровольно уважают все, поскольку она не только обязывает, но и правильна и справедлива”⁹.

Обычай – это закрепленное традицией требование к поведению людей. Традиция в данном

случае выступает в качестве обобщения общественной практики, основанного на многократном опыте определенных действий”¹⁰.

Исторически обычное право предшествовало другим источникам права. Обычное право было самым главным источником правовых систем древности и средних веков.¹¹

Исследователи римского права утверждают, что достаточно долгое время в Риме не существовало письменных законов. И даже законы 12 таблиц (5-й век до н.э.), по сути, являются сборником норм обычного права¹². Как отмечает проф. Х. Самвелян, законы “древнего Вавилона”, “Кодекс Хаммурапи”, “12 скрижалей Древнего Рима”, законы Ликурга и Солона Древней Греции и, в особенности, “Закон Гортина”, германские «Sachsenspiegel» и «Lex salica», российская “Русская правда” были сборниками норм обычного права¹³.

Обычай служил основным источником армянского права для национальных судебных органов. Так, к примеру, исследователи показывают, что 56 130 статьи второй части судебного кодекса Гоша – нормы обычного права¹⁴.

Чем больше срок давности обычая, тем выше был его авторитет при регулировании общественных отношений, поскольку в средние века авторитет права определялся его давностью, а старое право, в свою очередь, означало доброе, справедливое право¹⁵.

Древность также предполагает консервативность, стабильность. Здесь можно предположить, что в средние века неполноценная законодательная деятельность армянского государства (и средневекового государства в целом) или государственной власти, вероятно, была обусловлена древностью, неизменностью (консервативностью) и стабильностью норм обыч-

⁶ См. Графский В.Г. Всеобщая история права и государства. М., 2000, с. 36-41; Дигести Юстиниана. Избранные фрагменты в переводе и с примечаниями И.С. Перетерского. М., 1984.

⁷ См. Шершеневич Г.Ф. Общая теория права. Том первый. Часть.- теоретическая. М., Издание Бр. Башмаковых, 1910, стр. 58-60.

⁸ См. Saalmond N., Jurisprudence, L., 1982, с. 199.

⁹ См. Гуревич А.Я. Категория средневековой культуры. М., 1972, с. 172.

¹⁰ См. Тихонравов Ю.Б. Основы философии права. Учебное пособие. М., 1997, с. 500.

¹¹ См. История государства и права зарубежных стран. Учебник для вузов. Часть I, М., 1996, с. 18.

¹² См. Новицкий Н.Б. Римское право. М., с. 16.

¹³ См. Մանվելյան Խ. Հին հայ իրավունքի պատմությունը, հատոր 1, Երևան, 1939, с. 31-32.

¹⁴ См. Армянский Судебник Мхитара Гоша, Ереван, 1954, с. XX.

¹⁵ См. Гуревич А.Я., указ. соч. с. 178.

ного права. Нормы обычного права в армянской действительности применялись и на протяжении последующих веков.

Нормы обычного права применялись также не только в средневековой Европе, но и позднее. В частности, в преддверии Великой Французской буржуазно-демократической революции действовали около 60 общих обычаев (*counternes generales*) и 300 местных обычаев для всей территории страны (*couternes locales*)¹⁶.

Начиная с 4-го века, национальная правовая система развивалась, в основном, посредством двух правовых подсистем светского законодательства и нормативного права¹⁷.

В средневековой Европе право также делилось на две системы: светское (*jus civile*) и церковное (*jus cononicium*) право.

Вытекающие из Библии идеи равенства и свободы воли личности оказали влияние на сущность и содержание армянской светской и канонической правовых систем.

Таким образом, одним из важнейших источников средневекового армянского права является религиозное (церковное) право¹⁸, то есть канонические ограничения и решения (книга С, Апостольские каноны решения вселенских и местных церковных соборов, решения армянских национальных церковных собраний, группы канонов армянских и иностранных святых церкви).

Вообще, нормативное право сыграло огромную роль в формировании общеевропейской (континентальной) культуры и правопорядка. То же можно утверждать и для средневековой Армении.

Нормальные решения, как источник права, применяются в Армении, начиная с 4-го века. В

начальный период эти решения носили религиозный характер в форме наставлений и распоряжений, однако в последующие века, в связи с общественно-политическими событиями в стране, церковь расширила сферу урегулирования общественных отношений. Регламентационные решения, принятые церковью и ее патриархами, начали приобретать значение общеобязательной правовой нормы, “следовательно, регламентационные решения армянских церковных советов большей частью носили не только религиозно-вероисповедальный характер, но и касались внутренних общественных отношений, формируя их, в особенности, установленными юридическими нормами”¹⁹. Причем, границы правотворческой и законодательной компетенции церкви определялись из существующих взаимоотношений между светскими и духовными властями.

Известно, что для армянского народа, волею исторической судьбы потерявшего государственность, церковь была единственным общенациональным учреждением, которое одновременно также заменяла государственность. Наряду с сохранением и развитием армянской культуры, церковь взяла на себя и распорядилась вопросами политической сферы.

В подобных условиях духовная власть сосредотачивала в своих руках также законодательную и судебную функции. Обязательное значение нормативных решений наиболее ярко подчеркивается в правилах, принятых на Шахавиванском (444 г.) церковном собрании.

Действительно, армянская церковь с самого начала вела должность “агенства большого суда”, то есть удерживала в своих руках функцию правосудия²⁰.

¹⁶ См. Цвайгер К., Кевич Х., Введение в сравнительное правоведение в сфере частного права. Том I, М., 1998, с. 122.

¹⁷ См. Սաֆարյան Գանդիկ, Խաչատրյան Հայկ, Իրավունքի հուշարձաններ (V-XVIII դդ.): Երևան, 1994, с. 6.

¹⁸ См. Մելիք-Թանգյան Ն.Վ., Հայոց եկեղեցական իրավունքը, II. Գիրք, ներածություն և աղբյուրներ, Շուշի, 1903. Того же автора, Հայոց եկեղեցական իրավունքը, Բ. Գիրք, կազմակերպություն և կառավարություն. Շուշի, 1095, Ղըլլոնեան Ա., Կանոնագիրք Հայոց, Թիֆլիս, 1914; Акопян В., Армянская книга канонов и ее редакция, Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук, Ереван, 1967, «Կանոնագիրք Հայոց» աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, հատոր Ա., Երևան, 1964, հատոր Բ, 1971.

¹⁹ Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հատ. 1, Երևան, 1939, с. 45.

²⁰ См. Адонц Н. Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, с. 447. Սանադյան Հ., Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934, с. 76, Սամուելյան Խ., Հին Հայ իրավունքի պատմություն, հատոր 1, Երևան, 1939, стр. 44; Еремян С.Т., Опыт периодизации истории Армении в эпоху феодализма // Вопросы истории, 1951, N 7, стр. 54; Акопян В.А. “Армянская книга канонов” и ее редакции. Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук, Ереван, 1967, с. 5 и др.

Армянское нормативное право было подвергнуто кодификации в начале 8-го века усилиями одного из крупных церковных и политических деятелей в период Ованнеса Философа (Одзнеци - 717-728 гг.), которая известна под названием “Армянская книга правил”. В деятельности католикоса Ованнеса Философа Одзнеци важное место занимают координация армянского нормативного права и церковные реформы. При Ованнесе Одзнеци собираются два национальных церковных собрания - в 719 г. в Двине и в 726 г. в Маназкерте. Ему также приписывают составление сборника “Книга бумаг”. “Церковная деятельность Овнана Одзнеци и его реформы важны тем, что были связаны с политическими событиями своего времени, приобретают политическое значение”²¹.

“Свод правил в качестве сборника был первым, который вытекал непосредственно от уполномоченной власти, следовательно, это первый официальный свод правил в христианском мире”²².

В формировании армянской нормальной правовой системы огромное значение сыграли нормативные решения национально-церковных советов “Аштишата (354 г.), Шаапивана (444 г.), второго Двинского (554 г.), четвертого Двинского (645 г.), пятого Двинского (719, Партавского (768 г.) и Асийского (1243 г.).

Армянское нормативное право регулировало вопросы, относящиеся не только к церкви и к духовенству, но и некоторые отношения в сфере политического, наследовательного, уголовного права (например, убийства, похищения и различного рода аморальных поступков). Необходимо отметить, что армянское нормативное право почти полностью регулировало брачно-семейные отношения. Так, нормативное право нормировало помолвку, венчание, развод и частично имущественные отношения супругов, опека, попечительство и усыновление продолжали регулироваться нормами обычного права.

Несмотря на неразрывную связь между го-

сударством и светским законодательством, поскольку светское право формируется и развивается благодаря правотворческой деятельности государства, тем не менее, армянская светская правовая система имеет некоторые особенности развития. Армянское светское законодательство особенно развилось в тот период, когда отсутствовала армянская государственность (к примеру, нормативное законодательство Давида Алавкаворди и “Армянский судебник” Мхитара Гоша).

Согласно данным, которые передают историки, Давид Алавкаворди родился в 70-80-е годы 11-го века в городе Гандзак. Скончался в 1140 году. Будучи одним из образованных людей своего времени, а также одним из активных участников общественно-политической жизни в стране, он был глубоко обеспокоен вопросами правового регулирования общественных отношений, отголоском чего является опыт создания первого светского судебного в армянской действительности, хотя сборник называется “Нормы” или “Нормативные законодательства”.

Сборник состоит из 97 норм, которые регулируют определенные отношения гражданского, брачно-семейного и уголовного права, а также нормы, относящиеся к охране труда, бытовой гигиене.

Основные источники “Нормативных законодательств” Давида Алавкаворди - Ветхий и Новый Завет, в особенности - известное Пятикнижие Ветхого Завета, приписываемое пророку Моисею, и нормы армянского нормативного права.

Давид Алавкаворди был глубоко обеспокоен проблемой правового регулирования общественных отношений, отголоском чего является попытка создания первого светского систематизированного законодательства в армянской действительности.

Наряду с “Армянской нормативной книгой”, часть канонов Давида Алавкаворди дошли в армянские национальные судебники.

Самый значительный правовой памятник

²¹ Միեր Պապյան, Հովհան Օծնեցու եկեղեցական բարեփոխումների քաղաքական բնույթը, «Աշտանակ» հայագիտական պարբերագիրք, խմբագրությամբ՝ Ա. Մարտիրոսյանի, Երևան, 1995, с. 97.

²² «Գիրք դատարանի», Աշխատասիրությամբ Ի. Թորոսյանի, Առաջաբան, с. 19.

средневекового армянского права - судебник Мхитара Гоша²³, создание которого было обусловлено велением времени подготовить правовую почву для возрождающейся армянской государственности.

Судебник состоит из трех частей: “Предисловие”-11 глав, “Церковные каноны”-124 статей, “Светский закон”-130 статей.

“Предисловие” судебного - юридический труд о причинах создания судебного, суде, составе суда, свидетелях и доказательствах, цели и задачах судебного.

Что касается церковных правил и светского закона, в основе их различия (конечно, не с такой последовательностью, что было характерно для крепостного права) лежит предмет урегулирования общественных отношений. Так, общественные отношения светского характера (царская власть, вопросы гражданского, уголовного права) должны были регулироваться светским законодательством, в лице царской власти, светских судов, а отношения духовного (церковного) характера - церковными канонами, в лице церкви и ее духовных лидеров и церковных судов. Будучи крупнейшим законодателем и правоведом, Гош, в отличие, от своих европейских коллег, критически воспринимал, усваивал моисейские и прочие законы, толковал их (конечно, не с такой последовательностью, что было характерно для крепостного права), и в его толковании лежит предмет урегулирования общественных отношений. Так, общественные отношения светского характера (царская власть, вопросы гражданского, уголовного права) должны были регулироваться светским законодательством, в лице царской власти, светских судов, а отношения духовного (церковного) характера - церковными канонами, в лице церкви и ее духовных лидеров и церковных судов. Будучи крупнейшим законодателем и правоведом, Гош, в отличие, от своих европейских коллег, критически воспринимал, усваивал моисейские и прочие законы, толковал их, исходя из тре-

бований регулирования правовых общественных отношений своего времени.

Творчески используя многочисленные источники, законодатель и правовед Мхитар Гош создал для современников и будущих поколений первое армянское общегосударственное право, которое на протяжении веков служило в качестве основного закона не только в самой Армении, но и в армянских колониях, и явилось основным источником Судебника Смбата Спарапета.

Другой выдающийся средневековый армянский правовой памятник - Судебник Смбата Спарапета (гундстабля), основной письменный источник которого - Судебник Мхитара Гоша.

Судебник Смбата Спарапета (1265 г.) действовал в Киликийском армянском царстве.

Если Мхитар Гош был сторонником естественной свободы и равенства, то Смбат Спарапет не только не принимает идею изначальной свободы и равенства людей, но и считает несвободу, неравенство естественным, справедливым и вечным.

Однако примечательны также взгляды Смбата Спарапета по вопросам права и закона, законности, брачно-семейным, уголовно-правовым вопросам, вопросам защиты труда, образования детей, войны и мира. По его словам, сущность и цель права и закона - установить в стране порядок и служить благополучию общества. Светские законы, отражая также Божественное право, призваны регулировать светские отношения и наказывать нарушения закона.

Армянская правовая мысль не развивалась до 18-го века, и только со второй половины 18-го века появились армянские светские законодательные акты или их проекты, где особое значение придается правам человека. Так, к примеру, первые попытки конституционного закрепления прав человека были осуществлены в проекте первой армянской конституции Шаамира Шаамиряна в “Громе славы” (1788 г.).

Усвоив и развив лучшие традиции армянской общеполитической мысли, Ш. Шаамирян

²³ Տմ. Մխիթար Գոշի Դատաստանագիրք Հայոց. Իրավաբանական հետազոտությունը հանդերձ Ծանօթութեամբ Վահան Ծ. Վարդապետի Բաստամեանց, ի Վաղարշապատ, 1880, Մխիտար Գոշ, Գիրք Դատաստանի. Աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975, Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմությունը, հատոր 1, Երևան, 1939, սր. 7-90, Ա.Գ. Սուքիասյան, Մխիթար Գոշ և «Հայոց դատաստանագիրքը», Երևան, 1965:

был одним из первым в армянской действительности, кто обосновал необходимость республиканских порядков и, таким образом, представлял армянскую государственность как республику. Необходимость республиканской формы правления, ее очевидные преимущества над феодальными монархическими порядками Ш.Шаамирян аргументирует также с позиций теории естественного права и с точки зрения всестороннего анализа армянской истории.

Ш. Шаамирян обосновывает и оправдывает национальную освободительную борьбу, освобождение от чужеземного ига и установление республиканского строя. Согласно индийско-армянскому мыслителю, основная причина падения армянской государственности и многочисленных страданий, которые потерпел народ вследствие этого, феодальный монархический строй.

К сожалению, “Гром Славы”, по известным причинам, не был применен и остался в качестве книги и учения о структуре армянской государственности и форме правления, проблемах и делах государства. Однако, тем не менее, “Гром Славы” имеет не только историко-культурную ценность, но и положил начало армянской конституционной мысли и послужил некоторым путеводителем для ее дальнейшего развития.

В начале XIX века в период персидского владычества в Восточной Армении армянская государственность проявилась в форме владычества княжеств. На суверенных и самостоятельных национально-государственных территориях княжеств продолжали действовать нормы армянского нормативного права и местного обычного права, которые, дополняя друг друга, регулировали отношения различных сфер общественной жизни.

В Западной Армении, находящейся под турецким владычеством, действовали как нормы Османской империи, так и национальные обычные нормы и армянское нормативное право, посредством которых, в основном, регулиро-

вались внутриобщинные вопросы, отношения наследования и брачно-семейные отношения.

В 1863 году турецкое правительство, благодаря влиянию европейских государств и длительной борьбе (конституционному движению) армянской общины, утвердило “Армянскую Национальную Конституцию”, принятую Армянским национальным собранием 24-го мая 1860 года. Конституция 1860 года состояла из 150 статей, Конституция, утвержденная в 1863 г. - из 99 статей. Конституция 1863 года по своей национальной ценности и степени либерализма существенно уступает Конституции 1860г.²⁴

Конституция, ратифицированная в 1863г., действовала до 1866г., когда возникли непримиримые разногласия между национальными собраниями, а также между ними и патриархом. Тем не менее, Конституция, в основном, действовала в 1869-1891гг., затем, с перерывами, в 1891-1896гг., после чего прекратила действие до 1908г. В годы младотуркской конституции и вплоть до геноцида армян она действовала чисто в качестве национального устава, в условиях наиболее акцентированного контроля правительства. В 1915-1916гг. младотурки устранили Национальную Конституцию.

После поражения турок в Первой мировой войне новое правительство подтвердило Национальную Конституцию декларацией от 20 ноября 1918г.²⁵ После Лозаннской конференции Национальная Конституция, как и конституции всех меньшинств подданных Турции, были устранены.

Национальная Конституция со своими основными положениями и соответствующими поправками с конца 1920 гг. года лежала в основе устава Киликийского католикосата, а также новой Конституции Армянской церкви Америки, которая была принята в 1928г.²⁶

Правовая система Первой Республики Армении (1918-1920гг.) была сформирована в очень сложных и трудных для страны условиях. Республика по форме правления была парламентской. Исполнительная власть Республики - пра-

²⁴ См. Հայոց պատմություն: Հատոր III, գիրք առաջին: Երևան, 2010, с. 369.

²⁵ См. Ազգային Սահմանադրություն հայոց, Անթիլիաս, 1968, с. 45-46.

²⁶ См. Հայոց պատմություն: Հատոր III, գիրք առաջին: Երևան, 2010, с. 373.

вительство - было наделено делегированными законодательными полномочиями, а на протяжении последних шести месяцев Республики, когда не созываются заседания парламента, правительство полностью осуществляет также законодательную власть. На протяжении двух с половиной лет существования Первой Республики Армения были принято 1203 закона, 290 из которых - парламентом, а 913 - правительством²⁷.

В правовой системе первой Республики действовали не только национальные законодательные и подзаконные акты, но и правовые акты российской империи, с некоторыми поправками и редакцией.

После установления в Армении советского строя (2-го декабря 1920г.) российское (большевистское) “революционное право” закрепилось и в армянской правовой системе.

Право рассматривалось в качестве подчиненного государству производного явления. Партийные и государственные органы (фактически их разграничение было очень сложной задачей) не были ограничены правовыми нормами, что создавало почву для произвола и попрания прав личности.

В системе советского права первичную и руководящую роль играли решения руководящих органов единственной правящей партии - Коммунистической партии (Генерального секретаря, Центркома, съезда, пленумов, конференций), из которых должны были вытекать законодательные и подзаконные акты и не противоречить директивным решениям партии. Из позитивных сторон системы советского права нужно подчеркнуть его сферу социального законодательства, которое сыграло значительную роль и в сфере формирования и развития третьего поколения человека - социально-экономических прав.

Однако в сфере политических прав оно существенно уступает международно признанным стандартом.

Правовая система Советской Армении существовала всего 70 лет, за которой последовала правовая система Третьей Республики Армения. Основы нового формирующегося права были заложены декларацией “О независимости Армении”, принятой 23-го августа 1990 г.²⁸ Во 2-й статье декларации отмечается, что “на территории Республики Армения действуют только Конституция и права”, а 12-я статья провозглашает: “Настоящая декларация служит основой для разработки Конституции Республики Армения, а в действующей Конституции - для внесения поправок и дополнений, деятельности государственных органов, разработки нового законодательства Республики”.

Декларация заложила основу и для процесса независимости Армении, который завершился общенародным референдумом 21-го сентября 1991 года. Верховный совет РА, принимая за основу положительный результат референдума, 22-го сентября 1991 года принял историческое решение “о провозглашении независимости Республики Армения”²⁹, по которому независимость стала реальностью в нашей стране.

На развитие правовой системы Третьей Республики Армения значительное влияние оказала Конституция Республики Армения, принятая на общенародном референдуме 5-го июля 1995 г.

В последующие годы (2005г. и 2015г.) в действующей Конституции были произведены коренные изменения, благодаря которым были еще более усовершенствованы принцип разделения властей и избирательная система, а последними поправками (2015) был произведен переход к форме парламентского правления, гарантирована система защиты прав человека, были расширены полномочия местного самоуправления, установлены гарантии для укрепления независимости судебной власти, а также были положены правовые основы для дальнейшего совершенствования и развития национального права.

²⁷ См. Սաֆարյան Գ.Հ. Իրավաստեղծ գործունեության և օրենսդրության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (սլաւոնաւեսական վերլուծություն): Երևան, 2004, с. 55.

²⁸ См. Գերագույն Խորհրդի տեղեկագիր, N 16 (972), 1990, статья 256.

²⁹ См. Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի տեղեկագիր, N 18 статья 390.

ԼԻԱՆԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Իրավ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի դոկտորանտ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ԵՎ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գոյություն ունեն պետություն հասկացության հարյուրավոր և նույնիսկ հազարավոր բնորոշումներ, սակայն դրանց մեջ չկա և ոչ մեկը, որն ունենա համընդհանուր ճանաչում և լինի բոլորի կողմից ընդունելի: Հասարական և իրավական յուրաքանչյուր գործընթացում պետության դերը ոչ միայն ահռելի է և կարևոր, այլև իրավական մտածողության և մշակույթի, իրավական ճանաչողության և արժեքաբանության մեթոդաբանական հիմքն է:

Իրավաբան-մարդաբան Ն.Ռուլանի կարծիքով. «Պետություն հասկացությունը շատ տարրալուծված է... Ժամանակակից քաղաքական մարդաբանությունը բավականին հաճախ է ապացուցում, որ, «պետականացված» և «չպետականացված» հասարակությունների տարբերակման փոխարեն՝ առավել արդարացված է ուսումնասիրել պետականություն չունեցող առանձին խմբերի միջև առավել կամ պակաս կայուն հավասարակշռության հիմքերը և կառավարման ապարատով օժտված ժամանակակից հասարակությունների ազդեցիկ խմբերի մասնագիտացված գործունեությունը»¹:

XVII դարի անգլիացի փիլիսոփա Ֆ.Բեկոնը գրում էր. «Տարբեր հասկացություններ շատ հաճախ արտահայտվում են նույն եզրույթով, բայց այս պարզայում սխալական կհանդիսանան բոլոր այն դատողությունները, որոնք կարվեն սուբյեկտների կողմից և տվյալ հասկացությանը կվերագրեն էական արժեքավոր պրեդիկատ: Հաճախ փիլիսոփաները վիճում են ոչ թե ըստ էության, այլ՝ հասկացությունների շուրջ (սքոլաստիկա): Շատ դեպքերում հասկացությունների նշանակությունը սահմանում է ոչ թե

առարկայի էությունը, այլ՝ այդ առարկայի վերաբերյալ տպավորությունները: Անհրաժեշտ է ճիշտ օգտագործել հասկացությունները՝ խուսափելով երկիմաստությունից, հատկապես՝ երբ խոսքը պետություն հասկացության մասին է:

Միևնույն ժամանակ՝ ժամանակակից մասնագիտական գրականության մեջ «պետություն» եզրույթը նշանակում է և՛ հասարակության անվտանգությունն ապահովող մեխանիզմ², և՛ հասարակության նկատմամբ հարկադրանք կիրառող ապարատ³: Բոլոր դեպքերում՝ իրավագիտության մեջ «պետություն» հասկացության մեկնաբանման հիմնախնդիրը շարունակում է մնալ արդիական, քանի որ եզրույթը քննարկվում է ոչ միայն գիտության տեսանկյունից, այլ նաև՝ քաղաքական և հասարակական զարգացումների համատեքստում: Ուստի անհրաժեշտ է կենտրոնանալ պետություն հասկացության հատկանիշների բացահայտման հիման վրա:

Խորհրդային դոկտրինայում, որը լուրջ ազդեցություն է պահպանել նաև ժամանակակից իրավագիտության մեջ, «պետություն» հասկացությունը հենվում էր Մարքսի, Էնգելսի և Լենինի առանցքային բանաձևերի վրա: Թվարկենք դրանցից մի քանիսը՝ «պետությունը մեկ դասակարգի կողմից հարկադրանք կիրառող կառույց է՝ մյուս դասակարգերի ենթակայությունն ապահովելու համար»⁴, «պետությունը ոչ այլ ինչ է, քան մեկ դասակարգի միջոցով մյուսներին ճնշելու մեքենա»⁵, «պետությունը իշխող դասակարգի միջոցով մյուսների ճնշման մեքենա է, որպեսզի մեկ դասակարգին ենթակայվեն մյուս դասակարգերը, և այլն»:

«Պետություն» հասկացության վերաբերյալ

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 121 2021

¹ Стен Рулан Н. Юридическая антропология. М., 2000. С. 10.

² Стен Яковлев В.Ф. Правовое государство: вопросы формирования.– М.: Статут, 2012. С. 66.

³ Стен նույն տեղում էջ 67:

⁴ Стен Маркс К., Энгельс Ф. Рецензии.- Эмиль де Жирарден. “Социализм и налоги”. Соч., Т. 7. С. 303.

⁵ Стен Энгельс Ф. Введение к работе К. Маркса “Гражданская война во Франции”.– Маркс К., Энгельс Ф, Соч. Т.22. С. 200.

վերը նշված հեղինակների տրված նման բազմաթիվ արտահայտությունների և ձևակերպված տասնյակ, եթե ոչ հարյուրավոր նման սահմանումների հակադրվում են, առնվազն, երեք դիրքորոշում.

- պետությունը արտոնյալ ուժի կրող է,
- պետությունն ապահովում է տարբեր սոցիալական շերտերի շահերի հավասարակշռությունը,
- պետությունն ամենից առաջ արտահայտում է ամբողջ հասարակության շահերը:

Այսպիսով՝ այստեղ առկա է տեսական բանավեճի առարկա, որի արդյունքը չի կարելի ձևակերպել միայն սահմանամաբ:

Հետխորհրդային շրջանում աստիճանաբար դուրս մղվեցին պետություն եզրույթի վերաբերյալ մարքսիստական հայեցակարգերը, արդի իրավագիտական մոտեցումներում առավել տարածված դարձավ «պետություն» հասկացությունը՝ առաջարկված XIX դարի վերջի – XX դարի սկզբի գերմանացի փիլիսոփա, սոցիոլոգ և քաղաքագետ Մարքս Վեբերի կողմից. «Պետությունն այն քաղաքական հանրույթն է, որն ունի բռնի ուժի լեգիտիմ կիրառման մենաշնորհ»⁶: Այս բնորոշման մեջ, մեր կարծիքով, լեգիտիմ (օրինական) հատկանիշը պետք է բացառվի սահմանումից, քանի որ, բացի պետությունից, գոյություն չունի այլ կատեգորիա, որի կողմից ուժի կիրառումը կարող է համարվել, մեղմ ասած, օրինական: «Օրինականությունն» այս համատեքստում նշանակում է բռնության ընդունում: Սակայն պետք է նշել, որ դժվար թե Ստալինի կամ Պոլ Պոտի կողմից ոչնչացված միլիոնավոր մարդիկ ընդունում էին համապատասխան պետությունների՝ իրենց ոչնչացման իրավունքը: Քննադատելով Վեբերի սահմանումը՝ Էնտոնի դե Յասին՝ ժամանակակից Եվրոպայի ամենայնուրոհինակ քաղաքական փիլիսոփաներից մեկը, նշում է. «Այս ճանաչված սահմանման խոցելի ասպեկտ է այն արատավոր հատկանիշը, որը պետության կայացման հիմնական տարբերակիչ է համարում բռնի ուժի օրինականացման գաղափարը: Պետության կող-

մից ֆիզիկական բռնության կիրառման օրինականության համար գոյություն չունեն նախորդող հիմնարար և տրամաբանական պատճառներ, բացի այն փաստարկից, որ նա **արդեն զավթել է** դրա մենաշնորհը և դրանով իսկ վերածվել պետության՝ բառիս բուն իմաստով»⁷: Պետությունը կարող է հարկադրանքի օրինականությունը ձեռք բերել, կարող է նաև կորցնել՝ միևնույն ժամանակ չդադարելով մնալ պետություն: Բացի դրանից՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ օրինականությունն էականորեն կարող է տատանվել ըստ աստիճանի, այն դեպքում, երբ պետության գոյությունը կամ դրա անգոյությունը առավել որոշակի դիսկրետն է: Գաղափարաբեքաբանական տեսանկյունից՝ այս մոտեցումը դիտարկվում է հասարակական դաշինքի կայացման արդյունքով հասարակության կողմից իրեն պատկանող ազատության փոխանցումը պետությանը՝ միաժամանակ պահպանելով իշխանության աղբյուրը և համարվելով ինքնիշխանության մենաշնորհի կրող:

Ինչ վերաբերում է օրինական բռնության մենաշնորհին՝ դա իսկապես առկա է, դիցուք՝ Նոր ժամանակների նախաշեմում Եվրոպայում ձևավորված ազգային պետություններում: Սակայն բացարձակ այլ է իրավիճակը, օրինակ, վաղ պետություններում, որոնց մասին Կլասսեն գրում է. «Դժվար թե երբևէ կառավարիչը միջամտել է իր ենթակաների վեճերին կամ խնդիրներին: Սակայն, երբ վտանգված են կառավարության շահերը, պետական մեխանիզմն անմիջապես միջամտում է»⁸: Պետությունը նման կերպ կարող է նույնիսկ ենթադրել որոշ այլ սոցիալական սուբյեկտների նկատմամբ իստիտուցիոնալ հարկադրում, սակայն, միայն իր համար անվտանգ սահմաններում, իսկ անհրաժեշտության դեպքում իր տիրապետության տակ եղած բավարար ռեսուրսների կիրառում՝ դրանց ենթակայեցման համար:

Բացառելով օրինականության և բռնության մենաշնորհային հատկանիշները՝ իր սահմանումն է առաջարկել հոշակավոր ամերիկացի սոցիոլոգ Չ. Թիլլին. «Մենք սահմանում ենք պե-

⁶ Stü Вебер М. Политика как призвание и профессия// Вебер М. Избранные произведения. М., Прогресс, 1990. С. 645.

⁷ Stü Ясин Энтони, де. Государство/ Энтони де Ясаи, пер. с англ. Г. Покатовича под ред. Ю. Кузнецова.- М., Ирисэн, 2008. С. 410.// <http://marsexxx.com/lit/jasay-the-state.htm>

⁸ Stü Claessen H.J.M. spektes of law and order in early state societies// The Law's Beginnings. Edited by F.J.M. Feldbrugge. Leiden-Boston: Martinus Nijhoff. P. 167.

տությունը՝ որպես հարկադրանք իրականացնող կազմակերպություն (հարկադրանքի կազմակերպություն), որը տարբերվում է տնային տնտեսություններից, նեղ արյունակցական կազմավորումներից և, անկասկած, ունի առավելություն՝ որոշակի տարածքում մնացյալ այլ ձևավորումների հետ համեմատությամբ⁹: Այս սահմանումը, սակայն, պահպանում է տարածքի հետ պետության կապը (էական նաև Վեբերի համար): Միննույն ժամանակ՝ անհրաժեշտ է նշել, որ պետությունը որպես իրավասոցիալական երևույթ սահմանելու դեպքում դժվար է տրամաբանորեն դեֆինենսի¹⁰ մեջ ներառել պետության ֆիզիկական հատկանիշները: Տվյալ դեպքում կարելի է նշել, որ, օրինակ՝ տարածքի հատկանիշի ներառումը սահմանման մեջ ի սկզբանե կասեցնում է քոչվոր ցեղերի պետությունը որպես կայացած պետական կառույց դիտարկելու հնարավորության խնդրի քննարկումը: Նույնիսկ, եթե տարածքայնությունն իմանենտ է պետությանը, տվյալ թեզը, ինչպես նախկին դեպքում, համոզիչ կլինի փաստավորել, այլ ոչ պոստուլատացնել: Ծավալուն, սակայն ոչ պարտադիր հավելյալ հատկանիշներից զատված «պետություն» հասկացության իր բնորոշումն է առաջարկում Է. Յասսին. «Պետությունը ձևավորում է այն ինստիտուցիոնալ սուբյեկտների շրջանակը, ովքեր կարող են սանկցիաներ կիրառել առանց ընդհարման դիսկի և կարող են չեղյալ համարել այլ կառույցների (պետական և ոչ պետական) կողմից կիրառված սանկցիաները: Գոյություն ունեն օրինական սանկցիաներ, որոնք իրենց ծանրության կամ ոչ տեղիության ուժով վտանգում են հրահրել դրանք վիճարկելու փորձեր: Երաշխավորված չվիճարկվող կարող են հանդիսանալ միայն պետության այն սանկցիաները, որոնք օրինական են և ենթադրում են դրանք կիրառելու իրավասություն ունեցող սուբյեկտների հստակ շրջանակ»¹¹:

Մենք որևէ թերություն չենք տեսնում այս ձևակերպման մեջ: Սակայն արդարացի չէ շրջանցել սահմանումը՝ տրված վաղ պետության տե-

սության վերաբերյալ, հիմնականում՝ առավել ընդունելի քաղաքական մարդաբանությունում, որի հիմնադիր համարվում է Հ. Ջ. Մ. Կլասսենը: “The early state” (Վաղ պետությունը) աշխատությունում, որտեղ ներկայացված են այս հայեցակարգի գլխավոր ելակետերը, վաղ պետությունը սահմանվում է՝ որպես «հասարակություն կենտրոնացված սոցիալ-քաղաքական ձևավորում՝ առնվազն երկու հիմնական սոցիալական դասերի բաժանված՝ կառավարողներ և կառավարվողներ, որոնք հավասարակշռում են սոցիալական հարաբերությունների կարգավորման ոլորտը: Վերջիններիս հարաբերությունները բնութագրվում են առաջինների քաղաքական գերակայությամբ և երկրորդների դինամիկ պարտավորություններով՝ օրինականացված ընդհանուր գաղափարախոսությամբ, որի հիմնական սկզբունքը սոցիալ-իրավական ծառայություններով փոխանակությունն է»¹²:

Ինչպես տեսնում ենք՝ այս սահմանման մեջ բացակայում է ուժային հարկադրանքի հատկանիշը՝ հիշատակված վերը նշված բոլոր հեղինակների կողմից Մարքսից մինչև Յասսին, և առանց որի սովորաբար պետությունը չենք պատկերացնում: Այլ հայտնի քաղաքագետ Է. Սաուսթոլն առավել է հեռանում և ներածում պետություն հասկացությունը, ինչը նույնիսկ Կլասսենը դեռևս պետություն չի համարում¹³:

Պետության սահմանումից ուժային հարկադրանքի հատկանիշի բացառման վերաբերյալ փաստավորված վերաբերմունք արտահայտելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը. ներկայումս պետություն հասկացությունն իր ցանկացած մեկնաբանության մեջ չի սպառում համակարգերի ողջ ծավալը, որոնք տիրապետում են ինստիտուցիոնալ կազմակերպված կենտրոնացված ընդհանուր սոցիալական իշխանությամբ: Անցյալ հարյուրամյակի երկրորդ կեսի սոցիալական մարդաբանությունը բացահայտել է գիտությանը նախկինում անհայտ սոցիալ-քաղաքական ձևավորումը՝ ցեղա-

⁹ Տե՛ս Կլասսեն Կ. Принуждение, капитал и европейское гондарства. 1990-1992 гг./Пер. с англ. Менской Т.Б. М., Издательский дом “Територия будущего”, 2009. С. 21-22.

¹⁰ Ղեֆինիենս՝ հասկացություն, որի միջոցով տրվում է սահմանումը:

¹¹ Տե՛ս Կլասսեն Կ. Энтони Государство/ Энтони де Ясаи, пер. с англ. Г. Покатовича под ред. Ю. Кузнецова.- М., Ирисэн, 2008. С. 410.// <http://marsexxx.com/lit/jasay-the-state.htm>

¹² Claessen H.J.M., Skalnik P. The Early Hague: Mouton, 1978. P. 640.

¹³ Саутхолл Э. О возникновении государств// Альтернативные пути к цивилизации, М., 2000. С. 101.

վարությունը: Ներկայումս ցեղավարության հայեցակարգը փաստացի համարվում է ընդհանուր առմամբ ընդունելի գիտական շրջանակների կողմից: «Ցեղավարության տեսությունը, ինչպես գրում է ճանաչված քաղաքագետներից Ն.Ն. Կարդինը, - պատկանում է արևմտյան քաղաքական մարդաբանության առավել հիմնարարական ձեռքբերումների շարքին, քանի որ կառավարող դասակարգը ձևավորել է կառույց, որը ապահովել է և՛ հրամաններ արձակելը, և՛ հրամաններ կատարելը, նույնիսկ այն դեպքում, երբ ցեղերը շարժվել են մի վայրից մյուսը»¹⁴: Այս տեսությունը, ըստ էության, ամրապնդում է այն տեսակետը, որ պետություն հակացությանը համապարտադիր հատկանիշների ամրակցումն է վոլյուցիոն զարգացման արդյունք է:

Կենտրոնացված սոցիալական իշխանության համակարգերը կարելի է հիմնավորված տարբեր կերպ դասակարգել՝ տարածքային և քոչվորական, արյունակցական և ոչ արյունակցական, ունիտար և հատվածային և այլն: Կասկած չկա, որ, առնվազն, կարևոր հիմքերից մեկը իշխանությանն աջակցող ուժային հարկադրանքի ինստիտուտի առկայությունը կամ բացակայությունն է: Նման աջակցության ձեռքբերումը ձևավորում է սկզբունքային նոր հարաբերություններ մի կողմից՝ իշխանության, մյուս կողմից՝ բնակչության, գաղափարախոսության, տեխնոլոգիայի, իրավունքի միջև:

Մ.Սալինգը, համեմատելով ցեղավարությունը և պետությունը, գրում է. «Հավայական առասպելների՝ Մալո, Կամակաու և այլ ասքերը սովորաբար խոսում են գերագույն ցեղապետերի վերաբերյալ՝ որպես «թագավորների»: Սակայն ամբողջ դժբախտությունը հատկապես այն է, որ նրանք թագավորներ չէին: Նրանք, մեծ հաշվարկով, ժողովրդի հետ կառուցվածքային հարաբերությունում միաձուլված էին, և քանի որ չունեին ուժի կիրառության մենաշնորհ, բավականին հավանական էր, որ ընդհանուր դժգոհությունը շատ հաճախ հանգեցնում էր ցեղապետի տապալման: Համեմատական-պատմական հեռանկարում հավայական կազմակերպման հսկայական թերություն էր հատկապես դրա պարզունակությունը, ինչի հետևանքով տվյալ կառույցը պետություն

չէր կարող համարվել»¹⁵: Լ.Ս. Վասիլևը՝ ցեղավարության հայեցակարգի առաջին հետազոտողներից մեկը, սահմանում էր դա որպես «քաղաքական կառույցի միջանկյալ ձև, որում արդեն առկա են կենտրոնացված կառավարում և կառավարիչներ, ազնվականության ժառանգական հիերարխիա, առկա է սոցիալական և գույքային անհավասարություն, սակայն դեռևս բացակայում է ֆորմալ և, առավել ևս՝ հարկադրման, բռնության օրինականացված ապարատը»: Ինչպես գրում է Ն. Կարդինը՝ այն փաստը, որ՝ «ցեղավարության կառավարիչները չունեին հարկադրման մասնագիտացված ապարատ... բազմաթիվ մարդաբանների կարծիքով՝ պետությունից՝ ցեղավարության ամենակարևոր տարբերությունն է»: Ցեղավարության կառավարիչները օժտված էին միայն «կոնսետուալ իշխանությամբ», այսինքն՝ հեղինակությամբ, իսկ պետությունում կառավարումը կարող է իրականացվել միայն օրինականացված հարկադրանքի միջոցով:

Կենտրոնացված իշխանության համակարգերի հարկադրման ապարատով չտիրապետող և համակարգերի նման ապարատ կիրառողի միջև տարբերությունն այնքան էական է, որ դրանց կատեգորիալ չամրագրումը հնարավոր չէ: «Ցեղավարություն-պետություն» ընդդիմությունն ամրագրում է այդ տարբերությունը. Պետությունն սկսում է կենտրոնացված իշխանության ապահովման նախկին մեխանիզմներին (ինչպես նաև՝ բազմաթիվ այլ, որոնք այստեղ չեն քննարկվում) ուժային հարկադրանքի մասնագիտացված ապարատի ավելացումից: Դրանից ելնելով՝ հնարավոր չենք համարում համաձայնել «պետության» սահմանումից ուժային հարկադրանքի հատկանիշի բացառման հետ:

Վերոգրյալից կարելի է եզրահանգել հետևյալին, որ **պետությունը՝ որպես ինստիտուտ, իրականացնում է ընդհանուր սոցիալական իշխանությունն այլ սոցիալական օբյեկտների նկատմամբ որոշակի տարածքային սահմաններում՝ օրինական հարկադրանքի միջոցով**: Համապատասխանաբար, պետության ծագումը որպես ինստիտուտ պատմական կայացման արդյունք է և մարդկության զարգացման օրինաչափ գործընթաց:

¹⁴ Кардин Н. Н. Политическая антропология. М., 2004. С. 163.

¹⁵ Сэйл Салинг М. Экономика каменного века. М., 1999. С. 141.

ՎԱՆԹԱՆԳ ԲԱԲԱՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտի հայցորդ,
 ՀՀ Սոցիալական ապահովության ծառայության Ճամբարակի տարածքային բաժնի պետ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԷՌԻԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետության գործառույթները պետության գործունեության հիմնական ուղղություններն են, որոնց միջոցով պետությունը լուծում է իր առջև դրված խնդիրները և իրագործում իր նպատակները: Հենց գործառույթների մեջ են արտահայտվում պետության էությունը, բնույթը և սոցիալական նշանակությունը:

Պետության ներքին կարևոր գործառույթներից մեկը սոցիալական գործառույթն է¹: Պետության սոցիալական գործառույթի ճանաչումը և սահմանադրորեն ամրագրումն առավել բնորոշ են ազգայնակենտրոն պետական համակարգերին և, թերևս՝ դրա ներդաշնակ զարգացման, անցյալի, ներկայի ու ապագայի օրգանական միասնությունն ապահովելու գլխավոր երաշխիքն է: Դա պայմանավորված է տեսակի, մարդկային ինքնության պահպանության ու ներդաշնակ զարգացման բնական օրինաչափությամբ: Հաճախ պետության սոցիալական գործառույթը հակադրվում է հասարակության անդամների ազատության ապահովման գործառույթին, ինչն արդարացված չէ: Ժողովրդավարական ազատությունը ենթադրում է նաև հասարակության անդամի երաշխավորված սոցիալական պաշտպանվածություն, որը մարդկային հասարակության հիմնական բնութագրիչներից է: Քաղաքացիական ազատությունը բնական ազատությունից տարբերվում է հենց այնքանով, որ հասարակության մեջ անհատի գործունեությունը չպետք է հակադրվի հասարակության մյուս անդամների ազատության իրավունքին, և քաղաքացիական հասարակությունն իր անդամների ազատ ինքնադրսևորման ներդաշնակ համակարգ պետք է ունենա: Իսկ վերջինս անհնարին է առանց

պետության կողմից հասարակության անդամների երաշխավորված սոցիալական պաշտպանվածության ապահովման: Պետությունը, ստանձնելով պատասխանատվություն անհատի սոցիալական պաշտպանվածության հարցում, առաջին հերթին պետք է մտահոգված լինի բնական էակի ինքնաճանաչման ու ինքնադրսևորման նախադրյալների ապահովմամբ: Սակայն ամենաբարդ խնդիրն այն է, թե որտեղ պետք է սահմանափակվի պետության միջամտությունը հասարակական-տնտեսական հարաբերություններին, որպեսզի, մի կողմից՝ ապահովվի պետության սոցիալական երաշխավորված իրականացումը, մյուս կողմից՝ չխոչընդոտի շուկայական հարաբերությունների բնականոն զարգացմանը: Յուրաքանչյուր երկրում և յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակի համակողմանի գնահատման հիման վրա պետք է ապահովվի այդ հաշվեկշռվածությունը: Աշխարհի դեռ ոչ մի պետություն չափ ու կշեռք չի դրել ասելու՝ թե ինքն այս կամ այն չափով սոցիալական է: Այդ ճանապարհով ընթանում եմ կամ չեմ ընթանում, պետականորեն այդպիսի գործառույթ ստանձնում են կամ չեն ստանձնում: Եթե ստանձնում են, ապա պետության խնդիրն է դառնում ապահովել, մի կողմից՝ սոցիալական պաշտպանվածության երաշխավորված համակարգի ստեղծումը, մյուս կողմից՝ բնական էակի, որպես սոցիալական սուբյեկտի, բնականոն ինքնադրսևորման միջավայրի ստեղծումը²: Պետության սոցիալական գործառույթը պետության սոցիալական քաղաքականություն է: Սոցիալական քաղաքականությունը երկրի ներքին քաղաքականության մի մասն է՝ հանձինս պետական քաղաքականության և այդ

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 121 2021

¹ Տեն Родионова Л.М. Содержание и формы социальной функции государства в современной России, М., 2011. С. 87:
² Տեն Գ. Հարությունյան «Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները» Երևան, 2016թ., էջ 183-191:

քաղաքականությունը իրականացնող պետական կառուցվածքի և այն քաղաքական ուժերի, որոնք ձգտում են լուծել երկրի սոցիալական խնդիրները: Սոցիալական քաղաքականությունը պետության, գործատուների և հասարակական-քաղաքական ու սոցիալական կառույցների այն գործունեությունն է, որն ուղղված է հասարակական կյանքի սոցիալական խնդիրների լուծմանը, նրանց կյանքի պահանջմունքների ապահովմանը, պաշտպանությանը, օգնությանը՝ այդ նպատակների համար օգտագործելով իր հնարավորությունների տակ եղած բոլոր ռեսուրսները: Սոցիալական քաղաքականությունը կոչված է ուսումնասիրելու, ամփոփելու և ի մի բերելու մարդու կյանքի սոցիալական վիճակը, միջոցներ ձեռնարկելու, ծրագրեր մշակելու դրա բարեփոխման ընթացքն ապահովելու, բացահայտելու դրանում տեղի ունեցող դրական և բացասական փոփոխությունները և կանխատեսումներ անելու դրա հետագա բարելավման համար³:

Հայաստանի Հանրապետությունը, իրեն հռչակելով սոցիալական պետություն, ստանձնում է սոցիալական որոշակի քաղաքականություն վարելու պարտավորություն:

Այդ քաղաքականությունը պետք է նպատակամղված լինի Հանրապետության քաղաքացիների սոցիալական նվազագույն կարիքների բավարարմանը: Ընդ որում՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սոցիալական կարիքների բավարարմանն ուղղված միջոցառումները պետությունը պարտավոր է ձեռնարկել՝ ելնելով պետության ներկա հնարավորություններից և այն հաշվով, որ սոցիալական ոլորտում ներդրվող միջոցներն ունենան անընդհատ աճող միտում, այսինքն՝ նվազագույն կարիքների մակարդակը պետք է ունենա իր ժամանակին համապատասխանող մակարդակ և բնականաբար պետք է նախորդ ժամանակի համեմատ բարձր լինի⁴: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար: ՀՀ Սահ-

մանադրության 82-86-րդ հոդվածներում ամրագրված են աշխատանքային պայմանների, սոցիալական ապահովության, արժանապատիվ գոյության և նվազագույն աշխատավարձի, առողջության պահպանության իրավունքները, որոնց բովանդակությունը և ծավալը օրենսդիրը Սահմանադրության ուժով պարտավոր է սահմանել օրենքների միջոցով:

2015թ. բարեփոխված Սահմանադրության 86-րդ հոդվածում տեղ են գտել պետության քաղաքականության հիմնական նպատակները. օրինակ՝ բնակչության զբաղվածության խթանումը, ծնելիության և բազմազավակության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը: Դրանք անհատի անմիջական իրավական պահանջներ չեն, այլ պարունակում են միայն նպատակներ, որոնք պետությունը պետք է իրագործի «հնարավորության շրջանակներում»: Սակայն դա չի նշանակում, թե պետությունը կարող է դրանք անտեսել: Սահմանադրության 87-րդ հոդվածի ուժով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պարտավոր են իրագործել այդ նպատակները և, որպես դրանց իրագործման կարևոր երաշխիք՝ Կառավարությունն այդ մասին Սահմանադրության 156-րդ հոդվածով նախատեսված ամենանյա զեկույցի շրջանակներում տեղեկատվություն է ներկայացնում Ազգային ժողով⁵:

Պետությունն իր սոցիալական գործառույթի իրականացման համատեքստում պետք է մարդու համար սեփական ուժերով իր կենսամակարդակն ապահովելու պայմաններ ստեղծի, վերացնի արգելքներն ու խոչընդոտները: Պետությունն օգնության է գալիս, երբ մարդն ինքնուրույն չի կարող ապահովել նվազագույն կենսամակարդակը: Պետությունը երաշխավորում է կենսաապահովման նվազագույն զաւթյուղը և նվազագույն բյուջեն⁶: Սոցիալական ոլորտի զարգացման ռազմավարությունն ապահովելու նպատակով մշակվում են սոցիալական

³ Տես Ս. Պողոսյան «Սոցիալական քաղաքականություն», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2010թ., էջ 12-13:

⁴ Տես Վ. Պողոսյան, «Մարդու իրավունքներ». ուսումնական ձեռնարկ, Երևան, 2002թ., էջ 22:

⁵ Տես Վ. Պողոսյան, Ն Սարգսյան ՀՀ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016թ., էջ 84-85:

⁶ Տես ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010, խմբագրությամբ Գ.Հարությունյանի և Ա.Վաղարշյանի, էջ 422-423:

հիմնախնդիրները համակարգող ծրագրեր: Ըստ էության՝ այդ ծրագրերը ներառում են տվյալ երկրի հասարակության առջև կոնկրետ ժամանակահատվածում ծառայած հիմնախնդիրները, դրանց լուծման ուղիները, եղանակները, և այդ ծրագրերը պետք է հիմնավորվեն համապատասխան նյութական, ֆինանսական և աշխատանքային ռեսուրսներով ու ընդգրկեն սոցիալական ոլորտի բազմաթիվ ցուցանիշներ: Սոցիալական քաղաքականության առանցքում պետք է դրվի մարդկային կապիտալը՝ միտված ՀՀ քաղաքացու ներուժի լիարժեք և ամբողջական դրսևորմանը: Հայաստանի Հանրապետությունում սոցիալական քաղաքականության կարևոր ուղղություններն են համարվում **կրթությունը, առողջապահությունը, մշակույթը, բնակարանային կոմունալ տնտեսությունը, սոցիալական պաշտպանությունը և այլն**⁷:

Քաղաքակիրթ հասարակության ողջ պատմության ընթացքում արդիական է համարվում սոցիալական հավասարակշռության հիմնախնդիրը, որի լուծման գործում շատ է կարևորվում բնակչության սոցիալական պաշտպանության դերը: Կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ սոցիալական պաշտպանությանը բնորոշ է էվոլյուցիոն բնույթը: Սոցիալական պաշտպանության պարզագույն ձևերը գոյություն են ունեցել հասարակության զարգացման ամենավաղ փուլերում: Քաղաքակրթությունների զարգացման հետ մեկտեղ՝ սոցիալական պաշտպանության ապահովման գործում սկսել է առավելապես կարևորվել պետության դերը: Այսօր սոցիալական պաշտպանությունը յուրաքանչյուր բնականոն գործող պետական համակարգի կարևոր բաղադրիչն է:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված է, որ մեր երկիրը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է: Սոցիալական պետությունը ենթադրում է սոցիալական աշտպանության արդյունավետ գործող համակարգի առկայություն⁸:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության խնդիրը քաղաքացիների սոցիալական իրավունքի լիարժեք ու ամբողջական իրացման պայմանների ստեղծումն է, սոցիալական արդարության սկզբունքի վրա հիմնված՝ **սոցիալական պաշտպանության կարիք ունեցող՝ անմրցունակ խմբերի համար առաջնահերթությունների սահմանումը, իրականացվող ծրագրերի ու մատուցվող ծառայությունների որակի, արդյունավետության ու հասցեականության բարձրացումը, նոր ժամանակակից այլընտրանքային ծառայությունների ներդրումը, բնակչության կայուն ու արդյունավետ զբաղվածության ապահովումը, արժանապատիվ աշխատանքի պայմանների ստեղծումը և ոլորտում սոցիալական երաշխիքների համակարգի զարգացումն ու ընդլայնումը**⁹:

Քաղաքացիների բավարար կենսամակարդակի ապահովման նպատակով պետությունը պարտավոր է ստեղծել սոցիալական պաշտպանության արդյունավետ համակարգ, նպաստել տնտեսության զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը, որպեսզի մարդիկ ունենան եկամտի աղբյուր, ստանան սահմանված նվազագույն աշխատավարձից ոչ ցածր աշխատավարձ, կենսաթոշակ, կրթաթոշակ, նպաստ կամ սոցիալական այլ օժանդակություն: Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանից անկախ՝ միջազգային իրավական պահանջ է հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրությունը՝ առանց որևէ խտրականության, մարդու արժանապատիվ գոյության համար անհրաժեշտ հնարավորությունների ստեղծումը, իսկ դրանց անբավարարության դեպքում՝ սոցիալական աջակցության տրամադրումը¹⁰: Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը, Հայաստանի Հանրա-

⁷ Տե՛ս ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշում, էջ 45:

⁸ Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի» Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, Երևան, 2014, N5:

⁹ Տե՛ս ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշում, էջ 45-46:

¹⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010, խմբագրությամբ Գ.Հարությունյանի և Ա.Վաղարշյանի, էջ 426:

պետությունում ժողովրդագրական վիճակի բարելավումը: 2014-2016թթ. ժամանակահատվածում սոցիալական պաշտպանության ոլորտում որպես հիմնական խնդիր է դիտարկվում ոլորտում պետական միջամտությամբ իրականացվող հիմնական ծառայությունների և տրանսֆերտների մակարդակի աճի և դրանց շարունակականության ապահովումը: Ստորև ներկայացվում են սոցիալական պաշտպանության ոլորտի նպատակներն ու խնդիրները՝ ըստ առանձին բնագավառների:

Կենսաթոշակային ապահովության բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է կենսաթոշակի տարիքի անձանց կենսամակարդակի բարձրացումը: Այդ նպատակին հասնելու համար կենսաթոշակային ապահովության բնագավառում որպես հիմնական խնդիրներ են սահմանվել.

ա) բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող տրանսֆերտների շարունակականության ապահովումը,

բ) սոցիալական և աշխատանքային կենսաթոշակների գծով կենսաթոշակի հիմնական չափի և ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի բարձրացումը,

գ) շարունակաբար նվազեցնել աղքատությունը կենսաթոշակառուների շրջանում, մեղմել աշխատող բնակչության և կենսաթոշակառուների կենսամակարդակների միջև առկա տարբերությունը,

դ) իրականացնել կենսաթոշակային բարեփոխումներ միջազգային լավագույն փորձին համապատասխան՝ գործարկելով պարտադիր կուտակային բաղադրիչը:

Սոցիալական ապահովագրության բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է հիվանդության, հղիության և ծննդաբերության ու օրենքով սահմանված այլ դեպքերում առաջացած ժամանակավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձի (եկամտի), որն անձը ստանում էր կամ կարող էր ստանալ, փոխհատուցումը:

Սոցիալական ապահովագրության բնագավառում որպես հիմնական խնդիր է սահմանվել պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող տրանս-

ֆերտների շարունակականության ապահովումը: Սոցիալական ապահովագրության բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է՝

ա) բնակչության առանձին անապահով սոցիալական խմբերի կենսամակարդակի բարձրացումը և աղքատության նվազեցումը,

բ) միայնակ և խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների որակի բարելավումը,

գ) տարեց, անօթևան մարդկանց կյանքի որակի բարձրացումը,

դ) առանձին կատեգորիայի քաղաքացիներին դրամական օգնության և պատվովճարի տրամադրումը,

ե) պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության առավել հասցեականության և արդյունավետության ապահովումը,

զ) երեխայի ծննդյան միանվագ նպաստի համակարգի զարգացումը, այդ համակարգին ուղղված միջոցների շարունակական ավելացումը, ընտանեկան (մայրական) դրամազվիսի ինստիտուտի ներդրումը և կատարելագործումը,

է) ՀՀ կառավարության 26.07.2012թ N952-Ն որոշմամբ հաստատված ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման համատեքստում համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների գործարկման ապահովումը:

Ձբաղվածության բնագավառում պետական քաղաքականության նպատակն է բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումը, մասնավորապես՝ աշխատաշուկայի լարվածության մեղմումը, աշխատանք փնտրողների, հաշմանդամների շրջանում զբաղվածության մակարդակի բարձրացումը, գործող աշխատատեղերի պահպանումը, գործատուների կողմից նոր աշխատատեղերի ստեղծման խթանումը և այլն:

Հաշմանդամներին աջակցության բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է հաշմանդամների առավել ինտեգրումը հասարակությանը:

Հաշմանդամներին աջակցության բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

ա) հաշմանդամներին պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը, դրանց որակի բարձրացումը և տեսականու ընդլայնումը,

բ) հաշմանդամության սահմանման եվրոպական մոդելի անցումը, որը հնարավորություն կընձեռի խթանելու հաշմանդամների ինտեգրման գործընթացն ու կընդլայնի սոցիալական ներառման հնարավորությունները: Աշխատանքի և աշխատավարձի կարգավորման բնագավառի պետական քաղաքականության հիմնական նպատակն է աշխատանքի վարձատրության պետական երաշխիքների ապահովումը, աշխատողների իրավունքների օրենսդրական պաշտպանվածության ամրապնդումը, անցումն աշխատանքի վարձատրության միասնական համակարգին և աշխատանքային պայմանների բարելավումը¹¹:

Վերլուծելով ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործող սոցիալական պաշտպանության համակարգը՝ կարելի է առանձնացնել որոշ տարրեր, որոնք բնորոշ են սոցիալական պաշտպանության մոդելներից մի քանիսին: Այդ մոդելների հիմքում ընկած են սոցիալական պաշտպանության համակարգի կազմակերպման և գործառման սկզբունքները:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող սոցիալական աշտպանության պետական քաղաքականության մեջ ներառված

են որոշ տարրեր պահպանողական մոդելից, ինչպես, օրինակ՝ սոցիալական ապահովագրության իրականացումը կենսաթոշակային ոլորտում, պետական միջոցների ներառումը սոցիալական ապահովության համակարգ (օրինակ՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի տրամադրում) և այլն: Բացի դրանցից՝ երկրում իրականացվող սոցիալական պաշտպանության պետական քաղաքականություն ներառվել են որոշակի տարրեր մնացորդային մոդելից, ինչպես, օրինակ՝ սոցիալական աջակցության տրամադրումը բնակչության առավել կարիքավոր խմբերին՝ աղքատներ, հաշմանդամություն ունեցող անձինք և այլք¹²:

Ընդհանրացնելով՝ կարող ենք նշել, որ այսօր Հայաստանի Հանրապետության համար դեռևս բաց է մնում այն հարցը, թե սոցիալական պաշտպանության դր մոդելն առավել նպատակահարմար կլինի երկրի սոցիալական զարգացման համար: Այդ ընտրությամբ է նաև մեծապես պայմանավորված երկրի սոցիալական բարեկեցությունը: Այսպիսով՝ ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի հետագա զարգացումը հիմնականում պայմանավորում են սոցիալական պաշտպանության մոդելի ընտրությունը, սոցիալական պաշտպանության հայեցակարգի մշակումը, այդ համատեքստում ոլորտի բարեփոխումներին ուղղված մի շարք ծրագրերը և սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակադրումների իրագործումը:



¹¹ Տե՛ս ՀՀ 2017-2019թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր (ՄԺԾ), Երևան, 2016թ. էջ 236-240:

¹² Տե՛ս Մ. Յարմալյան «Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի և մոդելի ձևավորումը ՀՀ-ում», «Բանբեր Երևանի համալսարանի» Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, Երևան, 2014թ. N5, էջ 23-24:

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՆԱԹՅԱՆ

ՀՀ վարչապետի աշխատակազմի հանրային խորհրդի քարտուղարության պետ, հետազոտող

**ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ.
ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ ԵՎ ԿԵՂԾ ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Խոսքի ազատությունը ժողովրդավարական պետության հիմնասյուններից մեկն է, որը մեծապես պայմանավորում է դեմոկրատական հասարակարգի ներքին բովանդակությունը և խթանում է հասարակության ու պետության զարգացման անընդհատ շարժընթացը: Սակայն ժամանակակից տեխնոլոգիական աշխարհում մտքերի և գաղափարների գործնականում անսահմանափակ և անվերահսկելի շրջապտույտը հանգեցրել է խոսքի ազատության զանգվածային չարաշահումների՝ ի դեմս ատելության խոսքի և կեղծ լրատվության, ինչի պատճառով ազատ խոսքը պարբերաբար վերածվում է քաղաքական հակառակորդների նկատմամբ տեղեկատվական հաշվեհարդարի ու հասարակության մանիպուլացման գործիքի՝ թե՛ ներպետական և թե՛ միջազգային մակարդակներում:

Խոսքի ազատության ձևախեղման այս միտումը չի շրջանցել նաև հետհեղափոխական Հայաստանը: Թավշյա հեղափոխությունից հետո՝ նոր պայմաններում, քաղաքական պայքարը ձեռք է բերում նոր բովանդակային և տեխնոլոգիական առանձնահատկություններ, որոնցում մեծ է ատելության խոսքի և կեղծ լրատվության տեսակարար կշիռը:

Նման իրավիճակի առաջացումը բացատրվում է հետևյալ գործոններով: Թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանի միաբևեռ ավտորիտար քաղաքական համակարգը մտել է փոխակերպման երկարատև, բարդ և բազմաշերտ շրջան՝ աստիճանաբար դառնալով բազմաբևեռ և բազմազան: Տրանսֆորմացիայի այս գործընթացն առնչվում է ոչ միայն կուսակցական համակարգին, այլև՝ տեղեկատվական դաշտին: Նոր վարչակազմը որպես ժողովրդավարական համակարգի կառուցման հիմնական նախադրյալ որդեգրել է հանրային քաղաքական մտքի ամբողջական ազատականացման մոտեցումը՝ չմիջամտելով քաղաքական դաշտի

քնական սեգմենտավորմանն ու կուսակցաշինությանը, ինչպես նաև՝ տեղեկատվական հոսքերին: Որպես արդյունք՝ քաղաքականությամբ ազատորեն զբաղվելու համար ստեղծվել են բարենպաստ պայմաններ, քանի որ մեկտեղվել են հետևյալ առանցքային գործոնները՝ կուսակցաշինության և կուսակցությունների սեգմենտավորման ազատությունը, կուսակցությունների կադրային համալրման ազատությունը և տեղեկատվության ազատությունը: Այս վերջինը, լինելով քաղաքական գաղափարների տարածման ու քաղաքական մրցակցության հիմնական գործիքներից մեկը, իշխանության բացարձակ լիբերալ քաղաքականության հետևանքով, աստիճանաբար արձանագրում է ժողովրդավարական և իրավական պետությանը չհասպատասխանող դրսևորումներ՝ սպառնալով ազգային անվտանգությանը: Այս իրավիճակում պետության միջամտությունն օբյեկտիվորեն դառնում է անհրաժեշտ, սակայն պետք է նաև հստակորեն ուրվագծվեն պետության միջամտության ողջամիտ սահմանները՝ հակաժողովրդավարական գործելակերպից խուսափելու համար:

Խոսքի ազատությունը և կենսունակ ժողովրդավարության հայեցակարգը

Ժողովրդավարության հիմնական առավելությունը և միաժամանակ խոցելիության խթանն ազատությունն է: Հիմնված լինելով ազատ ընտրության, խոսքի ազատության, գաղափարախոսական բազմակարծության և մեզ հայտնի մնացյալ իրավունքների և ազատությունների վրա՝ ժողովրդավարական պետությունը, մի կողմից, խրախուսում է մարդու ինքնաարտահայտումը, ինքնավարությունն ու հանրային բանավեճը, իսկ մյուս կողմից՝ հաճախ անպաշտպան է իր իսկ կողմից գեներացվող ազատության չարաշահումների հանդեպ:

Մարդու իրավունքների և ազատությունների սահմանների հարցը կարևորագույններից է

● ՕՐԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 121 2021

ժողովրդավարության կենսունակության և իրավական անվտանգության համար: Ժողովրդավարական քաղաքական ռեժիմի ներքին կենսունակությունն ու ներդաշնակությունը կախված են ազատ քաղաքացիների փոխադարձ հարգանքի վրա հիմնված համագոյակցությունից, իսկ վերջինս հնարավոր չէ՝ առանց նրանցից յուրաքանչյուրի իրավունքների ողջամիտ սահմանափակման:

Ժողովրդավարության ներքին կայունության և հարատևման մարտահրավերներին դիմակայելու մտայնությունը ծնեց, այսպես կոչված, կենսունակ ժողովրդավարության (militant democracy) հայեցակարգը, որը նախ և առաջ ուղղված է խոսքի, գաղափարախոսության և հավաքների ազատությունների չարաշահումների դեմ, որոնց պատճառով Առաջին աշխարհամարտից հետո ծաղկում ապրեցին ամբողջատիրական գաղափարախոսությունները՝ կոմունիզմն ու ֆաշիզմը¹:

Կենսունակ ժողովրդավարության հայեցակարգը ելնում է այն կանխավարկածից, որ մարդու իրավունքներն ու ազատությունները բացարձակ չեն և ենթակա են սահմանափակման այն դեպքերում, երբ վտանգում են լիբերալ-ժողովրդավարական հասարակարգն ու վերջինիս արժեքային համակարգը: Ըստ էության՝ ընդունվում է այն ելակետը, որ գաղափարախոսական բազմակարծությունը լեգիտիմ է ու պետության կողմից ենթակա է պաշտպանության, եթե չի հակասում ժողովրդավարական սահմանադրական կարգի հիմունքներին:

Այսինքն՝ կենսունակ ժողովրդավարությունը ենթադրում է, թե որքան էլ խոսվի գաղափարախոսական բազմակարծության և խոսքի ու արտահայտման ազատության՝ որպես գաղափարների և տեղեկատվության անսահմանափակ շրջանառման ազատության մասին՝ այդ գաղափարների բնույթից, էությունից և նշանակությունից անկախ, իրականում տիրապետող գաղափարախոսությունը լիբերալ-ժողովրդավարությունն է, և ազատ ու անսահմա-

նափակ կերպով կարող են շրջանառվել միայն այն գաղափարները և տեղեկությունները, որոնք ուղղակիորեն չեն հակասում ժողովրդավարությանը, այն է՝ չեն քարոզում գործող սահմանադրական կարգի տապալում, խտրականություն, մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակում, ատելություն, չեն պարունակում ակնհայտ կեղծ տեղեկատվություն և այլն²:

Կենսունակ ժողովրդավարության հայեցակարգը ենթադրում է, թե նշված դեպքերում հասարակությունն ու պետությունը պետք է հստակ մոտեցում որդեգրեն հակաժողովրդավարական միտումների և դրանք տարածողների նկատմամբ, ինչը կարող է դրսևորվել համապատասխան օրենսդրության ընդունմամբ և իրավակիրառ պրակտիկայով, ինչպես նաև՝ հասարակական պարսավանքի միջոցներով, որոնք պետք է ուղղված լինեն ժողովրդավարական սահմանադրական կարգի և պետության հիմքերի համար իրական վտանգ ներկայացնող ու պետության հիմքերի խարխլմանն ուղղված գաղափարաքարոզչական գործունեության նախականմանը, կանխմանը և չեզոքացմանը, նման գործունեություն իրականացնող անձանց և միավորումների իրավական պատասխանատվությանը:

Խոսքի ազատության սահմանները ժողովրդավարական հասարակությունում

Ներկայիս տեղեկատվական դարաշրջանում, երբ խոսքի և գաղափարների ազատությունը ձեռք է բերել անդրսահմանային բնույթ ու գործնականում դարձել անվերահսկելի, տեղեկատվական վնասարարությունը ժողովրդավարական պետությունների առջև ծառայած մեծագույն մարտահրավերներից մեկն է, որն անգամ վերածվում է աշխարհաքաղաքական պայքարի գործիքի: Զորքինակ՝ Ռուսաստանի Դաշնության կողմից վարվող ագրեսիվ տեղեկատվական արշավը՝ ժողովրդավարական արժեքների դեմ ուղղված, կեղծ լրատվության տարածումը, մեդիա և տեխնոլոգիական մի-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 121 2021

¹ Sfin Malkopoulou A., Norman L., Three Models of Democratic Self-Defence: Militant Democracy and Its Alternatives, Political Studies, 2018 Vol. 66 (2), p. 444.
² Sfin Loewenstein K. (1937b) Militant Democracy and Fundamental Rights II. American Political Science Review 31 (4):, pp. 638-658, Capoccia G (2013) Militant Democracy: The Institutional Bases of Democratic Self-Preservation. Annual Review of Law and Social Science 9: 207-226 և այլն:

ջոցներով միջամտությունն ԱՄՆ-ի վերջին նախագահական ընտրությունների քարոզարշավին և այլն: Հետևաբար՝ կենսունակ ժողովրդավարության հայեցակարգն այսօր արդիական է, քան երբևէ, քանի որ հետսառըպատերազմյան շրջանում ժողովրդավարության համընդգրկուն վերջնական հաղթանակի համոզմունքն ընդամենը պատրանք էր, և ականավոր փիլիսոփա Ֆրենսիս Ֆուկույամայի՝ մարդկության պատմության՝ որպես մարդկության գաղափարական էվոլյուցիայի վերջի մասին պնդումներն իրենց չարդարացրին³: Պարտված բռնապետական կամ ամբողջատիրական գաղափարախոսությունները վերածնվում են փոխակերպված ձևով՝ ազգայնականության, շովինիզմի, կրոնական արմատականության, հակալիբերալ պոպուլիզմի և այլ դրսևորումներով՝ կիրառելով ժամանակակից թվային-տեխնոլոգիական միջոցների ընձեռած հնարավորությունները: Ատելության խոսքը, կեղծ լրատվությունը, սադրիչ և ապակողմնորոշող քարոզչությունը մամուլով, հեռուստատեսությամբ և համացանցով նպատակ ունեն հասարակության մեջ ստեղծել անպաշտպանության, ապատիայի, անհանդուրժողականության, ժողովրդավարական համակարգի նկատմամբ անվստահության մթնոլորտ, որը, որպես վերջնարդյունք՝ կարող է վտանգել ժողովրդավարական հասարակարգի գործառնումը:

Այս նորաբովանդակ գոյութենական մարտահրավերների դեմ արդյունավետ պայքարը ենթադրում է ժողովրդավարական պետության արժեքային բաղադրիչների կիրառման կոշտացում. լիբերալ-ժողովրդավարական պետությունը պետք է դադարի լինել այլակարծության նկատմամբ քաղաքականապես բացարձակ չեզոք և հակազդի մարդու իրավունքները խախտող ու ժողովրդավարական նորմերին հակասող այնպիսի լրատվության և գաղափարների տարածմանը և դրանք տարածողներին, որոնք հասարակության շրջանում ձեռք են բերում տեսակարար կշիռ և քարոզչական ազդեցություն: Միայն այդպիսի մոտեցումներով ժողովրդավարական աշխարհը կարող է կանխել նորօրյա հիտլերների և մուսոլինիների ի հայտ գալը:

Իսկ որոնք են այն իրավական չափանիշ-

ները, որոնցով հնարավոր է արդյունավետ պայքար մղել խոսքի ազատության չարաշահումների դեմ: Դրանք նախ և առաջ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան և վերջինիս կիրառումը վերահսկող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան են:

Այսպես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի նախաբանում ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները հոչակվում են որպես աշխարհում արդարության և խաղաղության գրավական, որը բխում է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ընդհանուր իդեալներից, ավանդույթներից ու ժառանգությունից: Իսկ Կոնվենցիայի 17-րդ հոդվածի համաձայն՝ սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունեն զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանն ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով:

Կոնվենցիայի նշյալ դրույթները համադրելիս ակնհայտ է դառնում, որ կենսունակ ժողովրդավարության հայեցակարգն ընկած է համաեվրոպական իրավաքաղաքական կոնսեսուսի հիմքում, որի պահպանման և պաշտպանության նպատակն է հետապնդում նշյալ հիմնարար Կոնվենցիայի ընդունումը, և Կոնվենցիայով նախատեսված որևէ իրավունք չի կարող չարաշահվել, քանզի նման չարաշահումը, հատկապես՝ եթե ունի համակարգված և պարբերական բնույթ, կվտանգի Կոնվենցիայի պայմանադիր պետությունների ժողովրդավարական սահմանադրական կարգը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հստակորեն արտահայտվել է ատելության խոսքի և կեղծ լրատվության վերաբերյալ՝ որպես Կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված խոսքի և արտահայտման ազատության չարաշահում և խախտում:

³ Ավելի մանրամասն տե՛ս Fukuyama F., The End of Hisory?, The National Interest, No. 16, 1989, pp. 3-18.

Մասնավորապես՝ Էրբականն ընդդեմ Թուրքիայի գործով 06.07.2006թ. կայացված վճռում Ստրասբուրգի դատարանը նշել է հետևյալը. «Ժողովրդավարական և բազմազան հասարակության հիմքը բոլոր մարդկանց հավասար արժանապատվության նկատմամբ հանդուրժողականությունն ու հարգանքն է: Հետևաբար՝ որպես սկզբունք ժողովրդավարական հասարակությունում կարող է անհրաժեշտ լինել պատժել կամ անզամ արգելել արտահայտման բոլոր այն ձևերը, որոնք տարածում են, հակում են, խրախուսում են կամ արդարացնում են ատելությունը, որը հիմնված է անհանդուրժողականության վրա...»:

Իր BH, MW, HP, GK ընդդեմ Ավստրիայի գործով 12.10.1989թ., Հոնսիկն ընդդեմ Ավստրիայի գործով 18.10.1995թ., Նախթմանն ընդդեմ Ավստրիայի գործով 09.09.1998թ., Շիմանեկն ընդդեմ Ավստրիայի գործով 01.02.2000թ. վճիռներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը խոսքի ազատության չարաշահում և խախտում է ճանաչել ամբողջատիրական գաղափարախոսությունների և ամբողջատիրական կառավարման վերականգնման քարոզումը:

Ընդհանուր առմամբ՝ Եվրադատարանի կողմից խոսքի ազատության չարաշահում են դիտարկվում հակաժողովրդավարական և անիրավաչափ խոսքի և արտահայտման հնարավոր բոլոր դրսևորումները՝ հակասեմականությունից և ազգային փոքրամասնությունների հետապնդումներից մինչև գործող ժողովրդավարական կառավարության դեմ բռնության և անօրինական գործողությունների կոչեր: Այդ մասին են վկայում Եվրադատարանի շատ ու շատ վճիռներ:

Քաղաքական իմաստով՝ Ստրասբուրգի դատարանի պրակտիկան երևան է հանում համեմատական մակարդակում ժողովրդավարական արժեքների պաշտպանության և խոսքի ազատության շղարշի ներքո հակաժողովրդավարական քարոզչության դեմ պայքարի հավատամքը: Բուն իրավական իմաստով՝ Եվրադատարանի նշյալ և մի շարք այլ վճիռներ խոսքի ազատության չարաշահումների վերաբերյալ պարտադիր նշանակություն ունեն Կոնվենցիա-

յի անդամ բոլոր պետությունների համար և կարող են վկայակոչվել ներպետական մակարդակում խոսքի ազատության չարաշահումների դեմ իրավական միջոցներ ձեռնարկելիս:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը խոսքի ազատության շրջանակներում անդրադարձել է նաև կեղծ լրատվությանը:

Ընդհանրապես՝ կեղծ լրատվությունը բնորոշվում է որպես լուրեր, որոնք դիտավորյալաբար հորինվում են և տարածվում՝ նպատակ ունենալով խաբել ու մոլորեցնել այլ անձանց՝ հավատալու մտացածին փաստերի և կասկածելու իրական հանգամանքները⁴: Լրատվությունը տեղեկատվության այն տեսակն է, որը նպաստում է հանրային բանավեճի ձևավորմանը և ազդում քաղաքական որոշումների կայացման վրա, ուստի լուրերի արժանահավատության ազդեցությունը հանրային-քաղաքական կյանքի վրա դժվար է գերազնահատել: Եթե մամուլով ու տեղեկատվության այլ միջոցներով տարածվող լուրերը կեղծ են, հանրային կարծիքի ձևավորումն ի սկզբանե խոտանվում է:

Կեղծ լրատվության տարածումը ևս ժողովրդավարության հիմքերը խաթարող ազդեցություն ունի, քանի որ ձևախեղում է գաղափարներ ստանալու և տարածելու՝ մարդու հիմնարար սահմանադրական իրավունքը և փաստացի հավասարազոր է գրաքննությանը և ազատ խոսքի այլ սահմանափակումներին, քանի որ էական տարբերություն չկա, թե անձին արգելվում է լինել տեղեկացված, թե անձին հրամցվում է բազմաթիվ և բազմապիսի կեղծ տեղեկատվություն. երկու դեպքում էլ արդյունքը մեկն է՝ անձի տեղեկատվություն ստանալու իրավունքը չի իրացվում:

Այստեղ ևս կենսունակ ժողովրդավարությունը ենթադրում է պետության թիրախային միջամտություն՝ կարգավորելու լրատվադաշտն այնպես, որ, մի կողմից, չտուժի մեդիադաշտի անկախությունը, իսկ մյուս կողմից՝ պաշտպանվեն հասարակության անդամների՝ որպես տեղեկատվություն սպառողների իրավունքները: Ընդ որում՝ պետության պարտականությունները տեղեկատվության փոխանակման արժանահավատ համակարգ ձևավորելու հարցում

⁴ Sfin McGonagle, T. “Fake News”: False fears or real concerns?, Netherlands Quarterly of Human Rights, 35(4), 2017, էջ 203:

ճանաչվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: Մասնավորապես՝ օրինակ՝ Դինքն ընդդեմ Թուրքիայի գործով 14.09.2010թ. վճռում Եվրադատարանը նշել է, որ պետությունները պարտավոր են յուրաքանչյուր անձի համար ստեղծել բարենպաստ միջավայր՝ հանրային բանավեճին մասնակցելու համար: Այս պարտականությունը պահանջում է, որ պետությունները երաշխավորեն բազմազանությունը լրատվական համակարգում՝ ներառյալ աջակցեն անկախ և հետաքննող, ինչպես նաև՝ այլ լրատվամիջոցներին, այդ թվում՝ փաստերն ստուգող կազմակերպություններին, կանխեն լրատվամիջոցների սեփականատիրության չափազանց կենտրոնացումը, մեծացնեն լրատվամիջոցների սեփականության և վերահսկողության թափանցիկությունը:

Փաստորեն, չնայած լայնորեն տարածված այն մտայնությանը, թե լիբերալ ժողովրդավարության պայմաններում պետք է գործի մինիմալ պետության մոդելը, որի գործունեությունն ավելի շատ պետք է սահմանափակվի համակարգմամբ, քան կարգավորմամբ, իրականությունն այն է, որ իրական ազատություն, այդ թվում՝ խոսքի ազատություն ունենալու համար հարկավոր է պետության միջամտությունը: Տեղեկատվության տարաբնույթ կենտրոնների ձևավորումը, տարաբնույթ շահերի առաջնորդումը, աշխարհաքաղաքական շահային խմբերի տեղեկատվական էքսպանսիան գործոններ են, որոնց պետությունը ոչ թե պետք է վերաբերվի որպես պասիվ դիտորդ կամ առավելագույնը՝ արբիտր, այլ՝ ինքը պետք է օրենսդրական և վարչական միջոցներով պաշտպանի իր ինքնիշխանության ներքո գտնվող տեղեկատվական տարածքը կեղծ լրատվությունից, որպեսզի գաղափարների մրցակցությունը և տեղեկույթի շրջանառությունը տեղի ունենան բնականորեն ու իրավաչափորեն, և չխաթարվի հանրային կարծիքի ձևավորման կառուցակարգը:

Ընդ որում՝ թե՛ ատելության խոսքի և թե՛ կեղծ լրատվության դեմ հանրային ու պետական մակարդակներում արդյունավետ պայքար մղելու համար հարկ է պարզել խոսքի ազատության չարաշահման վերոնշյալ դրույթներին յուրաքանչյուր առանձին դեպքի մանրամասները. ով է կատարողը, որոնք են եղել ա-

տելության խոսքի կամ կեղծ լրատվության շարժառիթն ու նպատակը, եղել են արդյոք պատվիրատուներ, և ովքեր են եղել նրանք, եթե այդպիսիք բացահայտվեն:

Որպես կանոն՝ ատելության խոսքի կամ կեղծ լրատվության դեպքերը եզակի և մեկուսի չեն լինում, այլ ունենում են կազմակերպվածության և համակարգվածության որոշակի աստիճան ու հետապնդում են որոշակի քաղաքական շահեր, հետևաբար՝ պայքարը դրանց դեմ պետք է վարվի պետական մակարդակով՝ գիտակցելով, որ ժողովրդավարությունը չի կարող նույնացվել ամենաթողության հետ, իսկ պետության կողմից ազատության հանդուրժումն ու խրախուսումը չպետք է հավասարեցվեն պետական ինստիտուտների թուլության կամ անկենսունակության հետ: Ժողովրդավարական լեզվափոխություն ունեցող պետական իշխանությունն ունի լեզվափոխ ուժի կիրառման մենաշնորհի հակաիրավական և հակահասարակական բոլոր գործողությունների դեմ, և իր ուժային զինանոցից օգտվելուց վարանելը կարող է հանրագումարում խիստ բացասական հետևանքներ ունենալ ժողովրդավարական սահմանադրական կարգի բնականոն գործառնման համար և անգամ հանգեցնել ժողովրդավարական քաղաքական ռեժիմի փոփոխության:

Խոսքի ազատության չարաշահումները հետհեղափոխական Հայաստանում

Թավշյա հեղափոխությամբ Հայաստանում սկիզբ է առել քաղաքական ռեժիմի խորքային փոխակերպման գործընթաց: Կոնսուլիդացված ավտորիտարիզմից անցում է կատարվում դեպի ժողովրդավարություն: Ընդհանրապես՝ ռեժիմային տրանզիտի կարևոր ցուցիչներից է խոսքի ազատության վիճակը: Այս հարցում Հայաստանում, թերևս, գրանցվել է ամենանկատելի առաջընթացներից մեկը. լրատվական դաշտում, սոցիալական ցանցերում, հեռուստատեսության և ռադիոյի ոլորտներում տեղի է ունեցել աննախադեպ ազատականացում: Պետությունը գործնականում հրաժարվել է տեղեկատվական հոսքերը վերահսկելու պրակտիկայից ու վերածվել տեղեկատվություն արտադրող և տարածող լոկ բազմաթիվ սուբյեկտներից մեկի, որը մրցակցում է տեղեկատվության այլ պրովայդերների հետ՝ սեփական գաղափարները հանրությանն ավելի մատչելի և գ-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 121 2021

րավիչ դարձնելու և հանրային օրակարգ ձևավորելու համար: Պատահական չէ, որ խոսքի ազատության միջազգային ցուցիչներով Հայաստանը գրանցել է էական բարելավում⁵:

Խոսքի ազատության ոլորտում գրանցված առաջընթացը դրսից հետևողների համար, բնականաբար, ցուցանում է Թավշյա հեղափոխությունից հետո ժողովրդավարության հիմնական կառուցակարգերի ամրապնդման ուղղությամբ Հայաստանի հաստատուն վերելքը և քաղաքական իշխանության կամքը՝ Հայաստանը դարձնել իրավամբ լիբերալ-ժողովրդավարական պետություն: Սակայն երկրի ներսում տիրող իրավիճակը երկակի տպավորություն է թողնում: Մի կողմից՝ իրոք, Հայաստանում խոսքն ազատ է, քան երբևէ, սակայն, մյուս կողմից՝ լրատվական դաշտում և հանրային կարծիքի ձևավորման մյուս հարթակներում, օրինակ՝ համացանցում, իշխող քաղաքական վարչակազմը քիչ է ներկայացված և էապես զիջում է քաղաքական ու լրատվական մյուս կենտրոններին, որոնք գերազանցապես պատկանում են նախորդ իշխանական վարչակազմին կամ նրա հետ փոխկապակցված անձանց: Որպես արդյունք՝ թվում է, թե մամուլի և համացանցի ազատությունը ոչ միայն կամ ոչ այնքան իշխող վարչակազմի դեմոկրատական ուժի առհավատչյան է, որքան նրա թուլության արգասիքը:

Տեղեկատվական դաշտում ռեսուրսային նման անոմալ անհավասարակշռություն իշխանական և ընդդիմադիր սեգմենտների միջև՝ հոգուտ վերջիններիս, առերևույթ աշխատելով Հայաստանի ժողովրդավարական վարկանիշի օգտին, երկարաժամկետ հեռանկարում կարող է հայկական դեմոկրատիայի համար ունենալ բացասական հետևանքներ, ինչի սաղմերն այսօր արդեն նկատելի են. իշխանության եկած վարչակազմը՝ վարչապետի գլխավորությամբ, ինչպես նաև՝ Թավշյա հեղափոխության և ժողովրդավարության գաղափարները, հայտնվել են տեղեկատվական-քարոզչական գրոհի թիրախում, և հենց նյութական ու մարդկային

ռեսուրսների քանակական և առանձին դեպքերում նաև որակական առավելության շնորհիվ՝ հակաիշխանական շրջանակներն սկսել են գործել ոչ թե ժողովրդավարական դասական քաղաքական պայքարի կանոններով, որոնք ենթադրում են թեկուզ և հաճախ կոշտ, սակայն դեմոկրատական արժեքանության շրջանակում տեղավորվող մրցակցության սկզբունքներ, այլ, փոխարենը՝ գեներացնում են ատելության խոսք և կեղծ տեղեկատվություն իշխող քաղաքական թիմի և ժողովրդավարական արժեքների մասին ընդհանրապես (վարչապետին և նրա ընտանիքին անվանարկող կեղծ տեղեկությունների շարունակական տարածում, պետական պաշտոնատար անձանց անձնական բնույթի տեղեկատվության անօրինական հավաքագրում և հրապարակում, ժողովրդավարության և մարդու իրավունքների վնասակարության մասին թեզերի շրջանառություն, կեղծ օգտերերի և անգամ իրական գործիչների կողմից նշյալ թիրախներին ուղղված ոչ ցենզուրային մեկնաբանությունների տարածում, Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի մասին կեղծ և հասարակության շրջանում անվրստահություն ու խուճապ ստեղծելու նպատակ հետապնդող լուրերի սպրդում, անգամ՝ Հայաստանի միջազգային վարկին և անվտանգությանը հարվածող կեղծ տեղեկույթի հրապարակում, վարչապետի և նրա քաղաքական թիմի, ինչպես նաև՝ հեղափոխության կողմնակիցների նկատմամբ վիրավորական, հայիոյախառն և սպառնալից խոսքի տարածում և այլն):

Ակնհայտ է, որ ատելության խոսքի և կեղծ լրատվության հետևողական կիրառումն ունի կազմակերպվածության ու համակարգվածության այնպիսի մակարդակ, որ որևէ կասկած չկա նման քարոզչության քաղաքական և ուղղորդված բնույթի վերաբերյալ: Բայց քաղաքական մոտիվացվածության բացակայության պարագայում անգամ խոսքի ազատության զանգվածային չարաշահումները, որոնց հանրությունն ամենօրյա ռեժիմով ականատես է լինում, էական վնաս են հասցնում պետական

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 121 2021

⁵ Լրագրողներ առանց սահմանների (Reporters without borders) կազմակերպության կողմից հրապարակված 2019 թվականի Մամուլի ազատության համաշխարհային ցուցանիշային աղյուսակում Հայաստանը զբաղեցրել է 61-րդ հորիզոնականը՝ շուրջ 180 երկրի շարքում՝ բարելավելով իր ցուցանիշը 19 կետով, ըստ «Freedom House» միջազգային իրավապաշտպան կազմակերպության 2019թ. զեկույցի՝ Հայաստանը դասվել է ազատ համացանցով պետությունների շարքը, և այլն:

ինտիտուտների հանրային վարկանիշի և, ի վերջո՝ նաև ժողովրդավարական սահմանադրական կարգի լեգիտիմության վրա: Հայտնի է, որ պետական ինստիտուտների լեգիտիմությունը խարսխված է որոշակի ուժային և հոգեբանական բաղադրիչների վրա, այն է՝ հասարակության անվտանգությունը՝ ներառյալ տեղեկատվական անվտանգությունը պաշտպանելու՝ պետության կարողունակության և, որ ոչ պակաս կարևոր է՝ պետության ուժի հանրային գիտակցման վրա: Վերջիններիս քայքայումը լուրջ սպառնալիք է ցանկացած քաղաքական ռեժիմի պայմաններում գործող պետության համար: Հետևաբար՝ պետությունը պարտավոր է ձեռնարկել որոշակի միջոցներ՝ խոսքի ազատության լեգիտիմ սահմանները գծելու և հանրային համերաշխությանը սպառնացող տեղեկատվական գրոհը կասեցնելու ուղղությամբ: Ընդ որում՝ պետությունը բոլոր դեպքերում պետք է մնա ժողովրդավարության արժեքանության շրջանակում, որ ձեռնարկվող միջոցներն ունենան հանրային անհրաժեշտ աջակցություն և լեգիտիմություն: Միաժամանակ՝ այդ միջոցները պետք է լինեն բավականաչափ հատու, ունենան ինստիտուցիոնալ կայունություն և ուղղված լինեն ոչ միայն ատելության խոսքի և կեղծ լրատվության ընթացիկ դրսևորումների չեզոքացմանը, այլև՝ տեղեկատվական միջավայրի վերափոխմանն ու լրատվական գործունեության նոր մշակույթի ձևավորմանը: Միայն այս գործոնների համալիր հաշվառումը թույլ կտա իրավամբ արձանագրել մնայուն արդյունքներ՝ համաժամակյա կերպով ի ցույց դնելով Հայաստանի Հանրապետության՝ որպես ժողովրդավարական պետության կենսունակությունը:

Հավելենք, որ ներկայումս ապատեղեկատվության և ատելության խոսքի դեմ իրավական միջոցները հասվածական են և ոչ հետևողական՝ սահմանափակվելով վիրավորանքի և զրպարտության համար կոնկրետ անձի դատական պաշտպանությամբ և առանձին դեպքերում քրեական գործերի հարուցմամբ՝ անձի կյանքին կամ առողջությանը, ինչպես նաև՝ անձի գույքին վնաս հասցնելու իրական սպառնալիքի և մի շարք այլ հանցակազմերով, որոնք կրկին ուղղված են միայն որոշակի անձի կամ անձանց խմբի պաշտպանությանը, սակայն համակարգային առումով խնդրին լուծում չեն տա-

լիս: Հետևաբար՝ խիստ արդիական է ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով թիրախային քայլերի կատարումը: Ահա դրանցից մի քանիսը:

Նախ և առաջ՝ հարկավոր է վերանայել «Ձանգվածային լրատվության» մասին օրենքը, որի կարգավորումները հնացել են և չեն համապատասխանում լրատվության համակարգում տեղի ունեցած տեխնոլոգիական փոխակերպումներին: Խրախուսելի է, որ այդ օրենքում արդեն իսկ կատարվել են որոշակի փոփոխություններ, և ընդլայնվել է զանգվածային լրատվության միջոց հասկացությունը՝ ընդգրկելով ոչ միայն տպագիր մամուլը, այլև՝ համացանցային լրատվական կայքերը, որոնք այսօր արտադրում են լրատվական կոնտենտի գերակշռող մասը: Միևնույն ժամանակ՝ օրենքով հստակեցված չեն համացանցային լրատվամիջոցների գործունեության բարեվարքության վերահսկողության կառուցակարգերը: Օրինակ՝ ելնելով խնդրո առարկա լրատվամիջոցների էլեկտրոնային բնույթից՝ նրանց գործունեությունը վերահսկելու լիազորությունը կարելի է վերապահել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին:

Հարկավոր է նաև իրավական գործիքակազմով մեծացնել հեռուստատեսային, ռադիո և համացանցային լրատվամիջոցների պատասխանատվությունը տարածվող տեղեկատվության արժանահավատության և բարեկրթության համար՝ համապատասխան իրավական սանկցիաների տեսքով՝ ընդհուպ մինչև լրատվամիջոցի գործունեության դադարեցում:

Հարկ է նաև «Ձանգվածային լրատվության մասին» օրենքում ամրագրել սոցիալական մեդիայի, այսինքն՝ մեզ հայտնի սոցիալական ցանցերի ինստիտուտը, որտեղ տարբեր միջոցներով (ստատուսներ, բլոգեր, խմբեր և այլն) տեղի է ունենում լրատվության տարածում: Հարկավոր է նաև ուրվագծել սոցիալական մեդիայի մոնիթորինգի և իրավական ու էթիկական պատասխանատվության գործուն կառուցակարգեր: Սոցիալական մեդիան, թերևս, ոչ պակաս կամ երբեմն առավել ազդեցիկ լրատվական պրովայդեր է, քան տպագիր և համացանցային լրատվական միջոցները, և այսօր Հայաստանում, ինչպես նաև՝ այլ պետություններում ատելության խոսքի և ապատեղե-

կատվության տարածման ազդեցիկ միջոցներից մեկն է: «Facebook», «Twitter» և այլ սոցիալական ցանցերն ունեն միլիարդավոր օգտատերեր, և ակնհայտ է, որ պատշաճ վերահսկողության բացակայության պայմաններում կարող են դառնալ ոչ միայն լրատվական մեքենայությունների, այլև՝ լուրջ սոցիալական կատակիզմների պատճառ:

Ատելության խոսքի և ապատեղեկատվության դեմ պայքարը կարող է արդյունավետ դարձնել էլեկտրոնային բոլոր լրատվամիջոցների իրական սեփականատերերի բացահայտման պարտականության սահմանումը, ինչի շնորհիվ՝ հանրությունը կտեղեկանա, թե ո՞ր լրատվամիջոցն ում է պատկանում, և կկարողանա տեղեկատվության աղբյուրների միջև գիտակցված ընտրություն կատարել:

Վերոնշյալից բացի՝ կարելի է մտածել օրենքով զանգվածային լրատվության միջոցները միավորող մասնագիտական, ինքնակառավարվող մարմնի ստեղծման մասին՝ ՀՀ փաստաբանների պալատի օրինակով, որը կընդունի լրագրողական էթիկայի պարտադիր կանոններ, կվերահսկի դրանց պահպանումը լրագրողների և լրատվամիջոցների կողմից և կարգապահական տույժերի կենթարկի կարգազանց լրատվականներին և լրագրողներին: Նման կերպ կապահովվի լրատվամիջոցների և լրագրողների կողմից ոչ միայն ֆորմալ իրավական կանոնների պահպանումը, որոնք հաճախ ուղղակիորեն չեն աղերսվում լրատվական պրոդուկտի որակի հետ, այլև կզարգացվեն իրավական նախադրյալները լրագրողի մասնագիտության էթիկայի և որակական չափանիշների ձևավորման ու պահպանման համար: Ընդ որում՝ նշյալ կառուցակարգի ժողովրդավարական բնույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշյալ մասնագիտական կառույցը ստեղծվում է հենց լրատվամիջոցների և լրագրողների կողմից, և բոլոր գործառույթներն իրականացնում է հենց մեդիա հանրույթից ստացված մանդատի ուժով:

Այսօր Հայաստանում գործում է նմանատիպ կառույց՝ Զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմինը, որը, սակայն, չունի բավարար գործիքակազմ և լրագրողական ու լրատվական դաշտում բավակա-

նաչափ հեղինակություն՝ ապահովելու համար ԶԼՄ-ների գործունեության օրինականությունն ու բարեվարքությունը՝ ներառյալ իր ընդունած որոշումների պատշաճ կատարումը համապատասխան լրատվամիջոցների կամ լրագրողների կողմից՝ հաշվի առնելով նաև լրատվական ու լրագրողական գործունեություն հասկացությունում կատարված և կատարվելիք օրենսդրական փոփոխությունները, որոնք թելադրված են տեխնոլոգիական միջոցների զարգացմամբ:

Հարկ է նշել, որ նմանատիպ գործուն և կարողունակ կազմակերպություններ գործում են բազմաթիվ եվրոպական պետություններում:

Հայաստանի Հանրապետությունը, վերադառնալով ժողովրդավարական պետությունների ակումբ, սկսել է ոչ միայն քաղել համընդհանուր ազատականացման դրական արդյունքները, այլև բախվում է ազատության հակառակ կողմին՝ ամենաթողության և ամբոխավարության վտանգավոր երևույթին, որը նկատելիորեն հրահրվում է որոշակի հանրային ու քաղաքական շրջանակների կողմից՝ ամենևին ոչ ժողովրդավարական նպատակներով: Մինևույն ժամանակ՝ դրանից պետք չէ չափազանց մտահոգվել և վախճանաբանական եզրահանգումներ կատարել: Ժողովրդավարությունն ու ազատականությունը ենթադրում են մտքերի ու գաղափարների անընդհատ շրջանառություն և մրցակցություն, ինչը չի կարող չունենալ ստվերային կողմեր և բացասական դրսևորումներ, չարաշահումներ: Պարզապես պետությունը պետք է հետևի ու համարժեք հակազդող միջոցներ ձեռնարկի հանրային շահին վտանգ սպառնացող գործընթացները կանխելու ուղղությամբ՝ տվյալ պարագայում ստեղծելով ինստիտուցիոնալ պայմաններ և հանրային միջավայր, որն անհանդուրժող կլինի կեղծ լրատվության և ատելության խոսքի հանդեպ:

Հայաստանի հեղափոխական կառավարությունը պետք է լինի հանդուրժող, բայց ոչ հաճոյացող՝ ըստ անհրաժեշտության զուգակցելով մտրակի ու թխվածքաբլիթի քաղաքականությունը: Միայն այդպես է հնարավոր խթանել ազատությունը, սակայն վճռական լինել Թավշյա հեղափոխության արժեքները կապիտալիզացնելու և անշրջելի դարձնելու հարցերում:

ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր (Բեռլին),
կառավարման գիտությունների մագիստրոս (Շպայեր),
Հագենի Համալսարանի Գերմանական և եվրոպական
սահմանադրական և վարչական իրավունքի,
ինչպես նաև՝ միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ,
Բեռլինի Տնտեսագիտության և իրավունքի ինստիտուտի
Ոստիկանության և անվտանգության կառավարման բաժնի դոցենտ

ՅՈՑ ՏԱՐԱԾՎԱԾ ՄԻԱԸ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍԻՑ

Սույն հոդվածում քննարկվում են յոթ տարածված սխալներ քրեական իրավունքի ընդհանուր մասից, որոնք հաճախ թույլ են տրվում և՛ ուսանողների, և՛ գործնական իրավաբանների կողմից: Մասնավորապես՝ ներկայացվում են այլընտրանքային պատճառականությանը, «խղճահարությունից կատարված սպանության» դեպքերում առաջին հանցագործի պատասխանատվությանը, հանցափորձին և հանցագործությունից կամովին հրաժարվելուն, երաշխավորի կարգավիճակին, հանցագործություն կատարելուն տուժողի համաձայնությանը և անհրաժեշտ պաշտպանության իրավունքին վերաբերող պրոբլեմները: Նշված պրոբլեմներից յուրաքանչյուրը պարզաբանվում է փոքր խնդիրների օգնությամբ, այնուհետև հակիրճ ամփոփվում են առավել կարևոր հետևությունները:

ГОР ОГАНЕСЯН

Доктор юридических наук (Берлин),
магистр административных наук (Шпайер),
доцент кафедры немецкого и европейского конституционного и
административного права, а также международного права в Университете Хагена,
доцент кафедры полиции и управления безопасностью
в Берлинском институте экономики и права

СЕМЬ РАСПРОСТРАНЕННЫХ ОШИБОК ИЗ ОБЩЕЙ ЧАСТИ УГОЛОВНОГО ПРАВА

В этой статье обсуждаются семь распространенных ошибок из общей части уголовного права, которые часто совершаются как студентами, так и практиками. В частности, рассматриваются проблемы, связанные с альтернативной причинностью, уголовной ответственностью первого преступника в случаях «убийства по милости», покушением на преступление и отказом от покушения, положением гаранта, оправдывающим согласием на совершение преступления и правом на необходимую оборону. Каждая из упомянутых проблем объясняется с помощью небольших примеров, а затем кратко резюмируются наиболее важные выводы.

GOR HOVHANNISYAN

Doctor of Laws (Berlin),
Master of Administrative Sciences (Speyer),
Associate Professor at the Chair of German and European Constitutional and
Administrative Law, as well as International Law at the University of Hagen,
Associate Professor at the Department of Police and Security Management
at the Berlin School of Economics and Law

SEVEN COMMON MISTAKES FROM THE GENERAL PART OF CRIMINAL LAW

This article discusses the seven common mistakes from the general part of criminal law which are frequently made by both students and practitioners. In particular, the problems relating to the alternative causality, the criminal liability of the first-time offender in the “mercy killing cases”, the attempt to commit an offence and the withdrawal from the criminal attempt, the role of safety guarantor, the justifying consent and the right to self-defence are addressed. The problems mentioned are each explained with the help of small cases, followed by a short summary of the main findings.

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՍՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ասիստենտ, ոստիկանության ավագ լեյտենանտ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԶԴԴՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Հոդվածում մատնանշվել են այն փաստերը, որոնք, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության ծավալներով և աճի միտումներով պայմանավորված՝ լուրջ վտանգ են ներկայացնում մարդկանց առողջության և բարեկեցության համար և բացասական ազդեցություն են ունենում հասարակության իրավական ու բարոյական ինստիտուտների վրա:

Ձգտելով վերացնել թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չարաշահումների հիմնախնդրի արմատական պատճառները՝ հոդվածում առաջարկվել է վերստին քրեականացնել դրանց ապօրինի գործածումը:

Բանալի բառեր. թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, քրեականացում, թմրաբիզնես, թմրամիջոցի գործածում, թմրամիջոցի և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառություն:

АРМИНЕ АГАСЯН

Учебный ассистент кафедры уголовного права и криминологии Академии Образовательного комплекса полиции Республики Армения, старший лейтенант полиции

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ПРОТИВОДЕЙСТВИЯ НЕЗАКОННОМУ ОБОРОТУ НАРКОТИЧЕСКИХ СРЕДСТВ И ПСИХОТРОПНЫХ (ПСИХОАКТИВНЫХ) ВЕЩЕСТВ

В статье указываются факты, которые, в связи с ростом и масштабами незаконного оборота наркотиков и психоактивных веществ, представляют собой серьезную угрозу для здоровья и благополучия людей и могут иметь негативное влияние для основы правовых и нравственных институтов общества. Стремясь устранить первопричины проблем злоупотребления наркотических средств и психотропных веществ, в статье предложено вновь криминализировать употребление наркотиков.

Ключевые слова: наркотики, психотропные (психоактивные) вещества, криминализация, наркобизнес, наркотическая зависимость, незаконный оборот наркотиков и психотропных (психоактивных) препаратов.

ARMINE AGHASYAN

Training Assistant of the Criminal Law and Criminology, Academy of the Educational Complex of the RA Police, the Police Senior Lieutenant

ON SOME ISSUES OF COUNTERACTION OF DRUG AND PSYCHOTROPIC (PSYCHOACTIVE) SUBSTANCES ILLEGAL CIRCULATION

The article points out the facts which due to the growth and size of illegal circulation of drugs and psychoactive substance, pose a serious threat to people's health and well-being and have a negative impact on the legal and moral institutions of the society.

In an effort to eliminate the root causes of the problems of drugs and psychotropic substances trafficking, the article proposes to re-criminalize drug use.

Keywords: drugs, psychotropic (psychoactive) substances, criminalization, drug business, drug usage, drug and psychotropic (psychoactive) substances illegal circulation.

ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵԴՅԱՆ

Արդարադատության ակադեմիայի գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնի մասնագետ, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանող

ԱՐՇԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ

Մարդկությունը կանգնած է մի դարաշեմի, երբ արհեստական բանականության օգտագործման հորիզոնների ընդլայնումն արդյունաբերական նոր հեղափոխություն է սանձազերծում: Հոդվածում վերլուծվել են արհեստական բանականության վարքագծի քրեաիրավական արժևորման հարցերը: Հնարավոր է թվում արհեստական բանականության ստեղծման ու շահագործման համար գործունեության ստանդարտացման և սերտիֆիկացման համակարգի ստեղծումը: Հատուկ ուշադրություն է դարձվել արհեստական բանականությանն իրավասուբյեկտությամբ օժտելու հարցին:

Բանալի բառեր. արհեստական բանականություն, տեխնոլոգիական սինգուլյարություն, իրավասուբյեկտություն, քրեական պատասխանատվություն, իրավական ֆիկցիա, արհեստական բանականության պատասխանատվություն, արհեստական բանականության կիրառմամբ հանցագործություններ, համակարգչային տեղեկատվության դեմ ուղղված հանցանքներ:

ГЕВОРГ БАРСЕГЯН

Специалист отдела по организации научно-исследовательских и программно-методических работ Академии юстиции, студент первого курса магистратуры юридического факультета Ереванского государственного университета

УГОЛОВНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ ИСКУССТВЕННОГО ИНТЕЛЛЕКТА: ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРИКЛАДНЫЕ АСПЕКТЫ

Человечество стоит на пороге эпохи, когда расширение горизонтов использования искусственного интеллекта развязывает новую промышленную революцию. В статье проанализированы вопросы уголовно-правовой оценки поведения искусственного интеллекта. Видится возможным установление системы стандартизации и сертификации деятельности по созданию и введению в эксплуатацию искусственного интеллекта.

Предполагается, что такое решение способно снять ряд существующих сегодня правовых ограничений, препятствующих активному вовлечению искусственного интеллекта в правовое пространство.

Ключевые слова: искусственный интеллект, технологическая сингулярность, правосубъектность, уголовная ответственность, юридическая фикция, ответственность искусственного интеллекта, преступления с применением искусственного интеллекта, преступления в сфере компьютерной информации.

GEVORG BARSEGHYAN

Legal Specialist at the Unit of Organization of Scientific Research and Programmatic-Methodological Activities of the Academy of Justice. First year Master student at the Law Faculty of Yerevan State University

CRIMINAL LIABILITY OF ARTIFICIAL INTELLIGENCE: THEORETICAL AND APPLIED ASPECTS

The humanity is now at the threshold of a new era when a widening use of artificial intelligence will start a new industrial revolution. Its use inevitably leads to the problem of ethical choice, it gives rise to new legal issues that require urgent actions. The authors analyze the criminal law assessment of the actions of artificial intelligence. The authors also consider it possible to establish a system to standardize and certify the activities of designing artificial intelligence and putting it into operation.

Keywords: artificial intelligence, technological singularity, legal personality, criminal liability, legal fiction, liability of artificial intelligence, crimes with the use of artificial intelligence, cyber-crimes.

ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

«ԳՐԱՎԱՌՈՒՄ ԿՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼԸ» ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն հոդվածը նվիրված է «Գրավառուին վնաս պատճառելը» հանցակազմի էության բացահայտմանը: Հոդվածում վերլուծվում են սույն հանցակազմի հայեցակարգային մոտեցումները: Այդ վերլուծության արդյունքով քննարկվում են այն օբյեկտները, որոնք պաշտպանվում են սույն հանցակազմով: Մասնավորապես՝ հեղինակի կողմից առաջարկվում է հանցակազմը տեղափոխել տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ գլուխ:

Բանալի բառեր. հանցակազմ, գրավառու, գրավային հարաբերություններ, հայեցակարգ, սեփականության իրավունք:

ДАВИТ ОГАНЯН

Аспирант Образовательного комплекса полиции Республики Армения

ПРОБЛЕМЫ КОНЦЕПТУАЛЬНЫХ ПОДХОДОВ ПРЕСТУПЛЕНИЯ “ПРИЧИНЕНИЕ УЩЕРБА ЗАЛОГОДЕРЖАТЕЛЮ”

Данная статья посвящена раскрытию сущности преступления “Причинение ущерба залогодержателю”. В статье анализируются концептуальные подходы данного преступления. В результате данного анализа обсуждаются те объекты, которые защищаются данным объектом. В частности, автор предлагает перевести преступление в преступления против экономической деятельности.

Ключевые слова: состав преступления, залогодержатель, залоговые отношения, концепт, право на собственность.

DAVIT OHANYAN

Postgraduate student of Educational Complex of Police of RA

ISSUES OF CONCEPTUAL APPROACHES OF THE CRIME CAUSE DAMAGE TO THE PLEDGEE

This article is devoted to the revealing the essence of the crime cause damage to the pledgee. In the research the conceptual approaches of this crime have been analyzed. As a result of that analyze, the objects protected by this crime are discussed. The author, particularly, offers to move this crime against economic activity.

Keywords: crime, pledgee, collateral relations, concept, property law.

* * *

ՀՌԻՓՄԻՄԵ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ի. գ. թ., ոստիկանության փոխգնդապետ,

ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐ ԽՄԲԵՐԻՆ ԱՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Հոդվածը նվիրված է անչափահասների հանցավոր խմբերին պրոֆիլակտիկ հաշվառման վերցնելու որոշ հարցերի ուսումնասիրությանը:

Հոդվածում քննարկվում են անչափահասների հանցավոր խմբերին հաշվառման վերցնելու անհրաժեշտության, նրանց հետ տարվող աշխատանքների, այդ աշխատանքներում բոլոր շահագրգիռ մարմինների համագործակցության հետ կապված հարցեր:

Բանալի բառեր. անչափահասների հանցավոր խմբեր, պրոֆիլակտիկ հաշվառում, հատուկ պրոֆիլակտիկա, ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման տեսուչներ, խմբի լիդեր:

РИПСИМЕ ХАЧАТРЯН

Начальник кафедры уголовного права и криминологии
Академии Образовательного комплекса полиции РА,
кандидат юридических наук, подполковник полиции.

**НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ О ПОСТАНОВКЕ НА ПРОФИЛАКТИЧЕСКИЙ УЧЁТ ПРЕСТУПНЫХ ГРУПП
НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ**

Статья посвящена изучению некоторых вопросов, связанных с постановкой на профилактический учёт преступных групп несовершеннолетних.

В статье обсуждаются вопросы, связанные с необходимостью постановки на учет преступных групп несовершеннолетних, работой с ними, сотрудничеством в данных работах всех заинтересованных органов.

Ключевые слова: преступные группы несовершеннолетних, профилактический учёт, специальная профилактика, инспекторы полиции по делам несовершеннолетних и предотвращению насилия в семье, лидер группы.

HRIPSIME KHACHATRYAN

Head of the Chair of Criminal Law and Criminology,
Academy of the Educational Complex of the RA Police,
PhD, Police Lieutenant Colonel

SOME QUESTIONS ABOUT PREVENTIVE REGISTRATION OF JUVENILE CRIM GROUPS

The article is devoted to the study of some issues related to the preventive registration of the juvenile crim groups.

The article discusses issues related to the necessity of the registration of the juvenile crim groups, work with them, and cooperation of all stakeholders in these works.

Keywords: juvenile crim groups, preventive registration, special prevention, police inspectors for Juvenile Affairs and Prevention of Domestic Violence, group leader.

* * *

ՎԻՐԱԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի
Դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի
գործունեության ապահովման վարչության Դատավորների ընդհանուր ժողովի և
հանձնաժողովների գործունեության ապահովման բաժնի առաջատար մասնագետ,
ՀՀ ՊԿԱ իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

**ՄԵՂՔԻ ԵՎ ՊԱՏԺԻ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐԻ
ԻՆՏԵՐՊՐԵՏԱՑԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎԱՐՆԿԱԼՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԵՎ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

Աշխատանքում փորձ է արվել հնարավորինս բացահայտել մեղքի ու պատժի համաչափության սկզբունքների մեկնաբանման հետևանքով տեղի ունեցող գործընթացները և իրավունքի տարբեր ճյուղերում դրանց ազդեցությունը:

Հոդվածում փորձ է արվել նաև մատնանշել քրեական և վարչական իրավունքում մեղքի ու պատժի համաչափության սկզբունքների տեղայնացումը և դրսևորումը, ինչը հիմնականում ներկայացվում է որպես սահմանադրական սկզբունքներին հատուկ առանձնահատկություն, իսկ իրավունքի այդ ճյուղերում սկզբունքների իրավաընկալման հարցը որոշակիորեն կախվածության մեջ է դրվում դրանց ինտերպրետացիայով պայմանավորված հետևություններից:

Ուշադրության է արժանի նաև այն, որ սկզբունքների ինտերպրետացիան ներկայացվում է որպես իրավունքի և օրենսդրական բացի լրացման արդյունավետ գործիքներից մեկը:

Բանալի բառեր. սահմանադրական սկզբունք, սահմանադրական արդարադատություն, իրավունքի ճյուղ, ինտերպրետացիա, մեկնաբանություն, տեղայնացում:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 121 2021

ВИРАБ ВАРДАНЯН

Ведущий специалист отдела обеспечения деятельности Генеральной Ассамблеи судей и его комиссий подразделения обеспечения деятельности Генеральной Ассамблеи судей и персонал суд персонала Высшего судебного совета – Судебного департамента, Аспирант юридической кафедры ГАУ РА

ВОПРОСЫ ИНТЕРПРЕТАЦИИ И ПРАВОВОГО ПРИНЯТИЯ КОНСТИТУЦИОННЫХ ПРИНЦИПОВ ПРОПОРЦИОНАЛЬНОСТИ ВИНЫ И НАКАЗАНИЯ В УГОЛОВНОМ И АДМИНИСТРАТИВНОМ ПРАВЕ

В работе предпринята попытка максимально раскрыть процессы, происходящие в результате интерпретации принципов вины и пропорциональности наказания, и их влияние на различные отрасли права.

В статье также делается попытка указать на локализацию и проявление принципов пропорциональности вины и наказания в уголовном и административном праве, что, в основном, представлено как особенность конституционных принципов, а вопрос о правовом принятии принципов в этих отраслях в некоторой степени зависит от их интерпретации.

Примечательно также, что интерпретация принципов представлена как один из эффективных инструментов дополнения недостатков права и законодательных недостатков.

Ключевые слова: конституционный принцип, конституционное правосудие, отрасль права, интерпретация, комментарий, локализация.

VIRAB VARDANYAN

Leading specialist of the Division of ensuring the operation of General Assembly of Judges and its commissions of the Department of ensuring the operation of General Assembly of Judges and staffs of the courts of the Judicial Department – Staff of the Supreme Judicial Council. PhD student of the Law department of the PAA of the RA

THE ISSUES OF INTERPRETATION AND ACCEPTANCE OF CONSTITUTIONAL PRINCIPLES OF THE PROPORTIONALITY OF GUILT AND PUNISHMENT IN CRIMINAL AND ADMINISTRATIVE LAW

The paper attempts to reveal as much as possible the processes that take place as a result of the interpretation of the principles of the guilt and proportionality of punishment, and its impact on various branches of law.

The article attempts to point out the localization and manifestation of the principles of the proportionality of guilt and punishment in criminal and administrative law, which is mainly presented as a feature of constitutional principles, and the question of legal understanding of principles in these branches is somewhat dependent on their interpretations.

It is also noteworthy that the interpretation of principles is presented as one of the effective tools for supplementing the gap of the right and the legislative gap.

Keywords: Constitutional principle, Constitutional justice, branch of law, interpretation, comment, localization.

* * *

ՎԱՆԻՆԵ ՀՈՎԱԵՓՅԱՆ

ՀՀ «Երևան» նոտարական տարածքի նոտար,

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկում է իրավաբանական պատասխանատվության էությունը, հասկացությունը, առանձնահատկությունները և գործնական կիրառման խնդիրները:

Բանալի բառեր. իրավունք, իրավահարաբերություն, պատասխանատվություն, իրավաբանական պատասխանատվություն, իրավաբանական պատասխանատվության տեսակները, իրավաբանական պատասխանատվության հատկանիշներ:

ВАНИНЕ ОВСЕПЯН

Нотариус нотариальной территории РА "Ереван",
соискатель в Институте философии, социологии и права НАН РА

ПОНЯТИЯ И ОСОБЕННОСТИ ЮРИДИЧЕСКОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

В данной статье автор обстоятельно рассматривает проблемы понятия, сущности и особенности юридической ответственности, а также вопросы практической правоприменения.

Ключевые слова: право, правоотношение, ответственность, виды юридической ответственности, особенности юридической ответственности.

YANINE HOVSEPYAN

Notary public in notarial territory "Erevan"
Degree Seeker at the Institute of Philosophy, Sociology and
Law of National Academy of Sciences of Armenia

CONCEPT AND FEATURES OF LEGAL RESPONSIBILITY

In this Article, the Author makes a detailed discussion of the nature, concept, specific features of legal responsibility, and of the problems for practical use thereof.

Keywords: right, legal relations, responsibility, legal responsibility, types of legal responsibility, features of legal responsibility.

* * *

ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համլսարան (հայցորդ),
Տավուշի մարզի դատախազության դատախազ

ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկում է իրավունքի դերն ու նշանակությունը հասարակական հարաբերությունների նորմատիվ կարգավորման (իրավակարգավորումների) համակարգում:

Բանալի բառեր. իրավունք, իրավական նորմ, հասարակական հարաբերություններ, նորմատիվ կարգավորում, իրավակարգավորում, իրավական համակարգ:

АРМАН ОГАННИСЯН

“Мхитар Гош” армяно-россиский международный университет (соискатель),
прокурор прокуратуры Тавушской области

ПРАВО В СИСТЕМЕ НОРМАТИВНЫХ РЕГУЛИРОВАНИЙ ОБЩЕСТВЕННЫХ ОТНОШЕНИЙ.

В данной статье автор обстоятельно рассматривает роль и значение права в системе нормативных регуляторов общественных отношений.

Ключевые слова: право, правовая норма, общественные отношения, нормативное регулирование, праворегулирование, правовая система.

ARMAN HOVHANNISYAN

Mkhitar Gosh Armenian-Russian international University (PhD Applicant)
Prosecutor at the Procuracy of Tavush's district

LAW IN THE SYSTEM OF NORMATIVE REGULATION OF PUBLIC RELATIONS

In this article, the author thoroughly examines the role and significance of law in the system of normative regulators of social relations.

Keywords: law, legal norm, social relations, normative regulation, legal regulation, legal system.

* * *

ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկում է ազգային իրավունքի համակարգը՝ պատմական և ժամանակակից առումով, վեր է հանում դրա պատմական հաջորդականության և տրամաբանական կապվածության հիմնախնդիրները:

Բանալի բառեր. իրավունք, իրավունքի համակարգ, պատմություն, արդիականություն, իրավական արժեքների և ավանդույթների հաջորդականություն:

ЛЕВОН АРУТЮНЯН

Соискатель Института Философии, социологии и права НАН РА

СИСТЕМА НАЦИОНАЛЬНОГО ПРАВА: ИСТОРИЯ И СОВРЕМЕННОСТЬ

В данной статье автор обстоятельно рассматривает проблемы системы национального права, а также выявляются вопросы исторического правопреемства и логика их взаимосвязанности.

Ключевые слова: право, правовая система, история, современность, правопреемства правовых ценностей и традиций.

LEVON HARUTYUNYAN

Applicant Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

THE SYSTEM OF NATIONAL LAW: HISTORY AND MODERNITY

In this article, the author examines in detail the system of national law in historical and contemporary terms, examines the problems of their historical sequence and logical coherence.

Keywords: law, legal system, history, modernity, consistency of legal values and traditions.

ԼԻԱՆԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Իրավ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի դոկտորանտ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ԵՎ ԷՎՈԼՈՒՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ամփոփելով պետության ծագման և էվոլյուցիոն զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտությունը՝ համարում ենք, որ պետության ծագումը բացարձակ երևույթ է, ինչը բխում է քաղաքակրթության զարգացման տրամաբանությունից: Պետության էվոլյուցիոն զարգացման ընթացքում պետական պոլիտիաները աստիճանական ճնշում են սոցիալական կազմակերպման այլ ձևերը, որպես արդյունք՝ պետությունը վերածվում է սեփական հասարակության նկատմամբ ռեպրեսիվ կառույցի և ի օգուտ իրեն հարակադրաբար վերաբաշխում է սոցիալական, այդ թվում նաև՝ նյութական բարիքները: Պետությունը բնութագրվում է որպես կարևոր սոցիալական ինստիտուտ, առանց որի՝ ներկայումս և առնվազն դեռևս տևական ժամանակ երկիր մոլորակի վրա գոյակցել հնարավոր չէ: Պետությունն իր գործունեության բոլոր բնագավառներում հսկայական սպառնալիքների է բախվում, որոնցից կարելի է խուսափել միայն մշտական իրավական և ինստիտուցիոնալ հսկողության միջոցով:

Բանալի բառեր. պետություն, պետության ծագում, հասարակություն, պետական իշխանություն, կենտրոնացված սոցիալական իշխանություն.

ЛИАНА МАЛХАСЯН

Кандидат юридических наук, докторант Института Философии,
социологии и права НАН РА

ПРОБЛЕМЫ ПРОИСХОЖДЕНИЯ И ЭВОЛЮЦИОННОГО РАЗВИТИЯ ГОСУДАРСТВА

Резюмируя анализ проблем происхождения и эволюционного развития государства, мы находим, что происхождение государства является абсолютным явлением, что исходит из логики развития цивилизации. Во время эволюционного развития государства государственные политики постепенно подавляют другие формы социальной организации, вследствие чего государство становится репрессивно-эксплуататорской структурой по отношению к собственному обществу и делает принудительные перераспределения социальных, в том числе и материальных благ в пользу себя. Государство описывается как важный социальный институт, без которого в настоящее время и, по крайней мере, пока долгое время невозможно существовать на планете Земля. Однако он несет в себе огромные угрозы, которых можно избежать только посредством постоянного институционально-правового контроля со стороны государства.

Ключевые слова: государство, происхождение государства, общество, государственная власть, централизованная социальная власть

LIANA MALKASYAN

Ph.D in Law, Doctoral candidate of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS of RA

THE ISSUES OF ORIGIN AND EVOLUTIONARY DEVELOPMENT OF THE STATE

Summing up the research about the issues of origin and evolutionary development of the state, one can find that the origin of the state is an absolute phenomenon, which derives from the logic of the development of civilization. During the evolutionary development of the state, state politeias are gradually suppressing other forms of social organization, as a result the state becomes a repressive-exploitative structure towards its own society and compulsorily redistributes the social and materialistic goods in its favor.

The state is characterized as an important social institution, without which at present, and at least for a long period of time, it is impossible to coexist on planet Earth.

However, it carries with it huge threats that can be avoided only through constant institutional and legal control by the state.

Keywords: state, origin of the state, society, state power, centralized social power.

ՎԱԽԹԱՆԳ ԲԱԲԱՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտի հայցորդ,
 ՀՀ Սոցիալական ապահովության ծառայության Ճամբարակի տարածքային բաժնի պետ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԷՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում մանրամասն վերլուծության է ենթարկվել պետության սոցիալական գործառույթի էությունը, անդրադարձ է կատարվել պետության սոցիալական քաղաքականության ուղղություններից մեկի՝ սոցիալական պաշտպանության համակարգին վերաբերող հիմնախնդիրներին և առանձնահատկություններին, կարևորվել է սոցիալական պաշտպանության առավել արդյունավետ համակարգի առկայությունը և այդ համատեքստում սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության արդյունավետ իրագործումն ու պետության սոցիալական գործառույթի ամբողջական իրականացումը:

Բանալի բառեր. սոցիալական գործառույթ, սոցիալական քաղաքականություն, սոցիալական պաշտպանություն, նվազագույն կենսամակարդակ, սոցիալական պետություն:

ВАХТАНГ БАБАЯН

Соискатель Института философии, права и социологии НАН РА,
 начальник Чамбаракского территориального отдела социальной службы МТСВ Республики Армения

СУЩНОСТЬ И ОСОБЕННОСТИ СОЦИАЛЬНОЙ ФУНКЦИИ ГОСУДАРСТВА

В статье был проведён глубокий анализ сущности социальной функции государства; были затронуты проблемы и особенности, касающиеся одного из направлений социальной политики государства - системы социальной защиты; были подчеркнуты наличие более эффективной системы социальной защиты, а также эффективная реализация государственной политики социальной защиты и полное выполнение социальной функции государства в этом контексте.

Ключевые слова: социальная функция, социальная политика, социальная защита, минимальный уровень жизни, социальное государство.

VAKHTANG BABAYAN

PHD applicant, RA NAS institute of philosophy sociology and
 law Executive Head of Chambarak Territorial Department of Social Security Service

THE SUBSTANCE AND PECULIARITIES OF THE SOCIAL FUNCTION OF THE STATE

The article provides a thorough analyses of the essence of the state's social function and highlights the problems and peculiarities of one of the directions of the social policy of the state, the system of social protection, highlights the existence of a more effective social protection system and the effective implementation of the state social protection policy and the full implementation of the state social function in that context:

Keywords: social function, social policy, social protection, minimum living standards, social state

* * *

ԱՐՏԱՇԵՍ ԽԱԼԱԹՅԱՆ

ՀՀ վարչապետի աշխատակազմի հանրային խորհրդի քարտուղարության պետ,
 հետազոտող

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՌԱԿ ԿՈՂՄԸ. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ ԵՎ ԿԵՂՏ ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել Թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանում խոսքի ազատության վիճակն ու առկա խնդիրները: Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են իրավահամեմատական, ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները:

Հոդվածում արձանագրվել է, որ, չնայած խոսքի ազատության ոլորտում գրանցված էական բարելավմանը, ներկայումս Հայաստանում խոսքի ազատության գլխավոր մարտահրավերներն ատելության

խոսքն ու կեղծ լրատվությունն են: Վերջիններիս դեմ պայքարի իրավական և հայեցակարգային հիմքերի դերում ներկայացվել են կենսունակ ժողովրդավարության տեսությունն ու համապատասխան միջազգային-իրավական չափորոշիչները, և ուսումնասիրվել են դրանց ծագումը, բովանդակությունն ու գործնական կիրառման հարցերը:

Վերոնշյալի հիման վրա ներկայացվել են առաջարկություններ՝ Հայաստանում ատելության խոսքի և կեղծ լրատվության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման վերաբերյալ: Այդ առաջարկություններն ընդգրկում են ինչպես օրենսդրական փոփոխություններ, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման քայլեր:

Բանալի բառեր. խոսքի ազատություն, կենսունակ ժողովրդավարության հայեցակարգ, Թավշյա հեղափոխություն, զանգվածային լրատվության միջոցներ, ատելության խոսք, կեղծ լրատվություն, ժողովրդավարական քաղաքական ռեժիմ:

АРТАШЕС ХАЛАТЯН

Начальник секретариата общественного совета при администрации премьер-министра РА, исследователь

ПРОТИВОПОЛОЖНАЯ СТОРОНА СВОБОДЫ СЛОВА: НЕНАВИСТНИЧЕСКИЕ ВЫСКАЗЫВАНИЯ И ФАЛЬШИВАЯ ИНФОРМАЦИЯ

Цель данной статьи-исследовать состояние свободы слова в Армении после Бархатной революции и существующие проблемы. В процессе исследования использованы сравнительно-правовой, индуктивный и дедуктивный методы.

В статье констатируется, что, несмотря на существенный сдвиг в пользу свободы слова, главными проблемами для Армении в этой области являются ненавистнические высказывания и фальшивая информация. В качестве правовых и концептуальных основ для борьбы с названными явлениями представлены теория жизнеспособной демократии и соответствующие международно-правовые критерии и исследованы их происхождение, содержание и вопросы практического применения.

На основе вышесказанного представлены предложения для поднятия эффективности борьбы против ненавистнических высказываний и фальшивой информации в Армении. Эти предложения включают как законодательные изменения, так и шаги по усовершенствованию правоприменительной практики.

Ключевые слова: свобода слова, теория жизнеспособной демократии, Бархатная революция, средства массовой информации, ненавистнические высказывания, фальшивая информация, демократический политический режим.

ARTASHES KHALATYAN

Head of the Secretariat of the Public Council Administration of the Prime Minister of the RA, Researcher

THE OPPOSITE SIDE OF FREEDOM OF SPEECH: HATE SPEECH AND FALSE NEWS

The aim of this article is examination of state of free speech in Armenia in the aftermath of the Velvet Revolution and existing problems. During research legal-comparative, inductive and deductive methods are used.

It is concluded that notwithstanding the considerable improvement in the sphere of freedom of speech main challenges for Armenia in this sphere are hate speech and fake news. As legal and conceptual basis of combating the mentioned phenomena the theory of militant democracy and relevant international legal standards are presented and their origin, content and issues of application are examined.

Based on the aforementioned proposals on raise of effectiveness of combating hate speech and false news in Armenia are set forth. These proposals include legislative amendments as well as steps towards perfection of law enforcement practice.

Keywords: freedom of speech, theory of militant democracy, Velvet Revolution, mass media, hate speech, fake news, democratic political regime.

ՀՀ ՊԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՓԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև՝ այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցված թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պարտավորված չէ կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: